Ազգ Azg
17 ՀՈՒՆՎԱՐ 2020 ՈՒՐԲԱԹ 2(5598)
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ISSN: 1829-1651

# Օգնություն լիբանանահայ ուսուցիչներին

Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական բաժանմունքը 170 հազար դոլար կհատկացնի Լիբանանում գործող 18 հայկական դպրոցների ուսուցիչներին: Որոշման համար, բացի բարեգործության մղումը, առիթ է հանդիսացել վերջին ամիսներին Լիբանանի ֆինանսատնտեսական անկայուն վիճակը, որն այս պահին գտնվում է չափազանց վատթար վիճակում: Նկատի ունենալով, որ այդ ամենն անդրադառնում է նաեւ տեղի հայերի, հետեւաբար նաեւ ուսուցիչների վրա, հիմնարկությունը որոշեց օգնել նրանց՝ որոշակիորեն թեթեւացնելով հոգսերը: Գումարները տրամադրվել են ըստ յուրաքանչյուր դպրոցի աշակերտական եւ ուսուցչական կազմի քանակի,- հայտարարել է հայկական բաժանմունքի տնօրեն դոկտ. Ռազմիկ Փանոսյանը:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Աշխատավարձ եւ պարգեւավճար կամ՝ «հալալ» եւ «հարամ» փողեր

Ի տարբերություն այլ երկրների, Հայաստանում բնավ ամոթ չի համարվում հետաքրքրվել ընկերոջ, բարեկամի, նույնիսկ նոր ծանոթացած մարդու աշխատավարձի չափով: Ամերիկայում, օրինակ, ոչ ոք չի համարձակվի նույնիսկ հարազատ մարդուն հարցնել, թե որքան է աշխատավարձը կամ, ինչպես ամերիկահայերն իրենք են ասում՝ «որքա՞ն դրամ կը շինես»: Դա խիստ անձնական, ինտիմ հարց է այնտեղ: Իսկ Լիբանանում, որտեղ անցկացրել եմ իմ երիտասարդության տարիները, մարդիկ միմյանց այդ հարցը չեն տա, որովհետեւ գիտեն, որ դիմացինը ստացած աշխատավարձի կրկինը կամ եռապատիկը պիտի ասի՝ որքան շատ ես ստանում, այդքան կարեւոր մարդ ես սկզբունքով: Մինչդեռ Հայաստանում, հատկապես Սովետի տարիներին, ավելորդ էր նման հարց տալը. ամեն մարդ գիտեր մյուսի աշխատավարձի չափը՝ ըստ մասնագիտության: Դա էլ էր կանոնակարգված, ինչպես ամեն ինչ, ինչպես շնչելն ու արտաշնչելը: Ասենք, այդ օրերին, մարդկանց ոչ այնքան աշխատավարձն էր հետաքրքրում, որքան ստվերային եկամուտը, այսինքն պետությունից գողանալու հնարավորությունը: Այսուհանդերձ հարցնում էին՝ «որքա՞ն ես ստանում»:

Հիշում եմ, այդ օրերին, Երեւան այցելություններիցս մեկի ժամանակ, մայրաքաղաքի շրջաններից մեկի դատախազը, պատկառելի մի կին, ինձ եւ ընկերներիս հրավիրեց Գառնի՝ մատաղ ուտելու: Երբ աչքերի մեջ նայեցի, դատախազուհին չքմեղանքով ասաց՝ «Մատաղը իմ հալալ փողով եմ անում»: Այսինքն՝ ոչ մի սրբապղծություն, ոչ մի անմաքուր, «հարամ» բան...

Սովետը գնաց, «հալալն» ու «հարամը» մնացին: Հիմա թեեւ հնարավորություն կա «հալալ» փող աշխատելու, բայց բնավ չէր խանգարի «հարամ» փող էլ ունենալը, թե՛ բիզնեսում, թե՛ ծառայության մեջ: Վերջին բառս վերաբերում է պետական ծառայությանը, պաշտոնին, որին ձգտում են շատ շատերը, ու կձգտեն տակավին այնքան ժամանակ, երբ պետական սեկտորը, իներցիոն մղումով, դեռեւս համարվում է բարեկեցության աղբյուր, հասարակական դիրքի հարթակ, սեփական փոքր կամ մեծ բիզնեսի պաշտպանության կռվան: Պետության փողը, իբր, ոչ ոքի չի պատկանում:

Այս կարծրատիպը դեռեւս կարծր է մնում նաեւ «նոր» Հայաստանում: Երիտասարդների մի հոծ խումբ, թեեւ արդարացիորեն գազազած նախկին կաշառասուն իշխանության հաստատած ու վերահաստատած բարքերի դեմ, սակայն չունենալով որեւէ հմտություն պետական կառավարման ու վարչարարության, գրեթե ողջ ուշադրությունը սեւեռել է նախկինների ստվերային գործունեության վրա, առանց կարողանալու ստեղծել այնպիսի տնտեսություն ու բարքեր, որ մարդիկ, մանավանդ իրենք՝ երիտասարդները, նախընտրեն «հալալ» եկամուտները «հարամ» փողերից, փոխարենն իրենց անգործունեության արդարացումը գտնելով նախկինների մութ գործերի բացահայտմամբ զբաղված լինելու պատճառաբանման մեջ: Մանավանդ որ այդ երիտասարդներից շատերին անձնապես անծանոթ չեն օտարերկրյա տարբեր կազմակերպություններից ստացված՝ փաստորեն անաշխատ եկամուտները՝ մատուցված ու մատուցելիք ինչ-ինչ ծառայությունների դիմաց:

Այս կացության դեմ հանդիման երկրի վարչապետին ուրիշ բան չէր մնում եթե ոչ՝ զգալի չափով բարձրացնել պաշտոնյաների ու օրենսդիրների «հալալ» եկամուտները եւ, միաժամանակ, ողողել պարգեւավճարներով ու բոնուսներով նրանց արդյունավետ կամ անարդյունավետ աշխատանքն ու հավատարմությունը խրախուսելու քաղաքականությունը, միաժամանակ՝ «հարամ» փողերով նրանց կոռուպցիոն ռիսկերից զերծ պահելու գործելակերպը: Այսինքն, կաշառք՝ կաշառք չվերցնելու դիմաց: Այսինքն՝ «հարամ» փողեր՝ պարգեւավճար անվամբ, որոնցից ոչ ոք, ո՛չ կառավարությունում եւ ոչ էլ Ազգային ժողովում ո՛չ ոք չհրաժարվեց... Արտառոց փաստ:

Ընդունենք, որ սա տարօրինակ, շատ տարօրինակ վարչարարություն է, որը հատկապես նախատոնական օրերին բուռն հետաքրքրություն ստեղծեց եւ դժգոհության լայն արձագանք՝ հասարակական ու քաղաքական տարբեր խավերի մոտ, դժբախտաբար առանց խնդրի բուն էությանը թափանցելու փորձերի:

Ինչ խոսք, մեր չինովնիկներն ու օրենսդիրները, նմանապես դատավորներն ու դատախազները իսկապես պետք է ավելի լավ հագնվեն, ավելի արժանավայել ապրեն: Բայց «վարձատրության» այս ձեւը ո՛չ արդար է, ո՛չ էլ բարոյական: Նախընտրելի կլիներ պարգեւավճարների ու բոնուսների փոխարեն նրանց օրինական աշխատավարձը է՛լ ավելի բարձրացնել՝ գործարքային սկզբունքով՝ նայած նրանց աշխատանքի արդյունավետությանը: Իսկ ավելի նախընտրելին՝ անգլիական ձեւն է, ուր պետական բարձրաստիճան պաշտոնյաները, նույնիսկ վարչապետը, թեեւ համեմատաբար քիչ են ստանում, սակայն ունեն գրավիչ մի շարք արտոնություններ՝ բնակարանի, երեխաների խնամքի ու կրթության, բժշկական հոգատարության, արձակուրդային պայմանների, թոշակի եւլն:

Իսկ ինչ վերաբերում է դատավորներին, պարսկահայ բարեկամս վերջերս ապշեցրեց ինձ, երբ պատմեց, թե Իրանում դատավորները բացի աշխատավարձից կարող են օգտվել նաեւ հավելավճարներից՝ ըստ իրենց ցանկության, ավելի ճիշտ՝ ըստ հավելյալ ծախսերի համար ներկայացրած իրենց ցուցակի, որը ենթակա չէ մերժման: Հավանաբար հենց դրա համար էլ Իրանում դատավորները ակնածանքի առարկա են միշտ:

«Հալալը» մի՛շտ է արժանի ակնածանքի, եթե տեղին է եւ արդար:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Օրհաց խնդիրներ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Մեկ անգամ չէ, որ նշել ենք, թե իշխանափոխությունից հետո նոր իշխանությունը բազմաթիվ երկիմաստությունների պատճառով այդպես էլ չդարձավ իրավիճակի լիարժեք կառավարիչ: Նախ եւ առաջ այն պատճառով, որ մեդիա դաշտի մեծ մասը շարունակում են տիրապետել նախկին իշխանությանը մոտ կանգնած մարդիկ: Գաղտնիք չկա այն բանում, որ որեւէ իշխանության գլխավոր զենքը տեղեկատվության տիրապետումն է: Նախկին իշխանությունը, ինստիտուցիոնալ կոռուպցիայով բրգային համակարգին զուգահեռ՝ մեդիա կայսրություն էլ էր հիմնել, որտեղ գլխավոր խնդիրը ոչ թե պետությանը նեցուկ կանգնելը կամ հանրային շահը սպասարկելն էր, այլ օրվա իշխանությանն ամեն կերպ բացասական կերպարով ներկայացնելուց զերծ պահելը: Ընդ որում՝ այդ մեդիադաշտի որոշ միավորներ մոլորեցնում էին հանրությանը՝ հանդես գալով կեղծ ընդդիմադիր դիրքերից եւ այժմ էլ շարունակում են նույն դիրքից առաջվա գործն անել: Այդ «առաքելությունը» կատարողները տարիներով լավագույնս վարձատրվել են, այդ թվում՝ առարկայական բոնուսներով: Իշխանությունը փոխվեց, սակայն այդ մեդիադաշտն իր միավորներով մնացել է, նա ոչ մի տեղ չի անհետացել, նրա շահառուները շարունակում են մնալ նախկինների տարբեր շերտերը: Եթե այդ մեդիան զուտ ԶԼՄ-ական իր կոչմանը համապատասխան՝ իրազեկման, կրթական գործառույթ իրականացներ, կարելի էր հանգիստ լինել հանրության համար, սակայն այդ մեդիան արդեն դարձել է ինքնաբավ քաղաքական կողմ, եւ երկրում, որքան էլ տարօրինակ, երկիշխանություն է՝ քաղաքական իշխանություն եւ չորրորդ իշխանություն կրողներով:

Քավ լիցի, մենք հակված չենք չնկատելու իշխանության սխալները՝ դրանց մասին բազմիցս խոսել ենք մեր անցյալ հրապարակումներում, բայց ընթերցողին մոլորեցնելով կեղծ իրականության պատրանք ստեղծելը մեզ համար անընդունելի բանն է:

⇨9

# Լիբիայի ճգնաժամի կարգավորման նախաձեռնությունը Ռուսաստանի առջեւ նոր հեռանկարներ է բացում Միջերկրականում

*Պարզապես իրար հետեւից ձախողվում են թուրքական նախաձեռնությունները, պատճառելով Էրդողանին նորանոր հիասթափություններ*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

**Թուրքագետ**

2019 թ. հոկտեմբերի 9-ին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հայտարարությամբ սկսած «Խաղաղության աղբյուր» ռազմական գործողությունները Սիրիայի հյուսիս-արեւելքում 22-ին վերջ գտան: Թեեւ քրդական ուժերը 32 կմ հեռացան թուրքական սահմանից, սակայն նրանց ազատած տարածքն անցավ ռուսական զորքերի եւ նախագահ Բաշար Ասադի բանակի վերահսկողության տակ: Այսպիսով ի չիք դարձան «անվտանգ» գոտին Իրաքի սահմանից մինչեւ Մանբիջ ձգելու, ապա Արեւելյան Սիրիան ամբողջությամբ գրավելու Էրդողանի հաշվարկները:

Մինչ թուրքական քաղաքական եւ հասարակական շրջանակներն այդ արկածախնդրության համար անխնա քննադատում էին Էրդողանին, հարցնելով՝ թե ի՞նչ շահեցինք այդ գործողություններից, ահա նոյեմբերի 27-ին Ստամբուլում Թուրքիան «անվտանգության եւ ռազմական համագործակցության» համաձայնագիր ստորագրեց Տրիպոլիի ազգային համաձայնության կառավարության հետ, որը գլխավորում է Ֆաիզ ալ-Սարաջը, ինչպես նաեւ հուշագիր՝ ծովային տնտեսական գոտիների սահմանազատման մասին: Ակամա հարց է ծագում. ինչո՞ւ համաձայնագիր, այլ ոչ թե պայմանագիր: Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ Լիբիայում երկիշխանություն է: Ալ Սարաջի կառավարությանը զուգահեռ Բենգազիում էլ գործում է Աբդալլահ Աբդուրահման աս-Թանիի ժամանակավոր կառավարությունը, որը վայելում է Լիբիայի ազգային բանակի հրամանատար մարշալ Խալիֆե Խաֆթարի աջակցությունը: Բացի այդ, Լիբիայի խորհրդարանը գտնվում է ոչ թե Տրիպոլիում, այլ Բենգազիում, այսինքն այն հատվածում, որը վերահսկում է Խաֆթարը, իսկ պայմանագիրը, ի տարբերություն համաձայնագրի, ենթադրում է խորհրդարանի պարտադիր հաստատում:

Խաֆթարը ստորագրման պահից անվավեր է ճանաչել Էրդողանի նախաձեռնությամբ ալ-Սարաջի հետ ստորագրված համաձայնագիրն ու հուշագիրը: Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ Էմիրությունները այդ հարցում պաշտպանել են Խաֆթարին:

⇨3



Ձախողված պետության ֆենոմենը, կամ արտաքին կառավարման ...

էջ 2



Հարցազրույց Արմեն Ջիգարխանյանի հետ

էջ Ա,Գ



Միջինարեւելյան պղտոր պայմաններում Թուրքիան փորձում է ձուկ որսալ

էջ 4

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Հայ դպրոցը

Հայ դպրոցը ամենազգային ջիղն է սփիւռքահայուն, - ըլլայ ան անուս թէ ուսանած, արհեստաւոր թէ մտաւորական, - որուն հասած որեւէ սլաք տակնուվրայ կ՚ընէ զինք ու ծայրայեղօրէն հակադարձելու եւ վրէժխնդիր ըլլալու կը մղէ:

Եթէ մեր պատմութեան էջերը վկայակոչենք, պիտի տեսնենք, թէ ինչպէ՛ս յետեղեռնեան տարիներուն Սփիւռքի մէջ իրար ետեւէ դպրոցներ բացուեցան քիչ մը ամէն տեղ, ի մասնաւորի Սուրիոյ եւ Լիբանանի մէջ: Ծնողազուրկ բազմահազար որբուկներ զիրենք պաստպարող երդիքներ ունենալու կողքին, ունեցան նաեւ դպրոցներ, երբեմն աղքատիկ, առանց գրասեղանի ու գրատախտակի, երբեմն աւելի բարւոք վիճակով, որոնց համար աղքատն ու հարուստը ինչով որ կրնային օժանդակել՝ չզլացան, որովհետեւ գիտէին կարեւորութիւնը ուսումին եւ թէ այդ որբերը ճակատագրի քմահաճոյքին ձգել կարելի չէր:

Այս ազգօգուտ առաքելութեան ռահվիրաները եղան երբեմն անհաս բարերարներ, սակայն գլխաւորները եղան հայկական կազմակերպութիւններ, կուսակցութիւններ, բարեսիրական միութիւններ եւ եկեղեցական համայնքներ:

Անոնց մէջ իր կարեւոր ներդրումը ունեցաւ ՀԲԸՄ-ը, որուն շնորհիւ Սուրիոյ տարածքին, գիւղերու եւ քաղաքներու մէջ տասնեակներով դպրոցներ բացուեցան:

Ոչ մէկը կրնայ ուրանալ այն կենսական առաքելութիւնը զոր իր վրայ վերցուցած էր Միութիւնը, շարունակելով ընթանալ հիմնադիրներու գծած ազգօգուտ ուղիէն:

Հարկ չկայ վերաքաղը ընելու ՀԲԸՄ-ի 114 տարիներու ազգանուէր գործունէութեան, որ կրնայ հատորներ լեցնել, ի հեճուկս «կարճատեսներու», նոյնիսկ «կոյրերու», որոնք յաճախ արժանին չգնահատելու կողքին, երբեմն ալ առիթ չեն փախցներ ստուերելու անոր անունն ու վաստակը:

Ըսի սկիզբէն, որ հայ դպրոցը շատ զգայուն ջիղ մըն է, եւ այդ ջիղը պրկուեցաւ, ցաւեցաւ ու մեծցաւ, մէյ մը երբ Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութիւնը փակուեցաւ, մէյ մըն ալ վերջերս, երբ Փասատենայի Մանուկեան-Տեմիրճեան դպրոցը փակելու որոշում առաւ ՀԲԸՄիութիւնը:

Երկու պարագաներն ալ ընդվզումի մղեցին ոչ միայն չկամները, այլեւ շարք մը միութենականներ ու Միութեան համակիրներ, որոնց համար հայ դպրոց փակելը դատապարտելի էր եւ նոյնիսկ հաւասար՝ դասալքութեան եւ, կարգ մը անհատներու ծայրայեղ որակաւորումով՝ «դաւաճանութեան»:

Մէկ օրէն միւսը Միութեան իսկայական բարեգործութիւններն ու ազգապահպան առաքելութիւնը մոռացութեան մատնուեցան որոշ մարդոց կողմէ, որոնք այսպիսի առիթի մը կը սպասէին:

Մենք յախուռն բնաւորութիւն ունինք, լուցկիի պէս անմիջապէս կը բռնկինք ու բանականութիւն ըսուածը կը ստուերուի: Միութիւնը իրաւունք ունի՞ դպրոց փակելու, համոզիչ բացատրութիւն ունի՞. անպայման ունի՛, սակայն ընդդիմադիրները չեն համոզուիր եւ իրենց դատապարտութիւնն ու բողոքը մաղձի կը վերածեն եւ նոյնիսկ չեն վարանիր Միութեան ղեկավարի անունին ալ թրքական պիտակ փակցնել ու դիմատետրի էջերուն վրայ զետեղել: Խաթարուած ուղեղներով մարդիկ կան, որոնք առիթի կը սպասեն իրենց հակակրանքի կապարճը պարպելու եւ հակասրամադրութիւններ ստեղծելու հարցին անծանօթ, միամիտ մարդոց մօտ:

Լիբանանի մէջ տասնեակ դպրոցներ փակուեցան, ո՞ւր էին այն ատեն այս «նախանձախնդիրները», թէ՞ ինչ որ մէկուն յարիր է, միւսին՝ չէ:

Ծառուկեան կ՚ըսէր, թէ մեր «չափը՝ չափազանցութիւնն է», սակայն այս եղածը ոչ թէ չափազանցութիւն է, այլ ամօ՛թ: Բոլորս ալ կը ցաւինք եղածին համար, սակայն բողոքն ու դատապարտումն ալ սահման ունենալու են: Ցեխարձակումները, յատկապէս ՀԲԸՄ-ի նման կազմակերպութեան մը հասցէին, նախ եւ առաջ կը նսեմացնեն անոնց հեղինակներն ու ափսոսանք կը պատճառեն:

***Խմբ. կողմից***- *Անկեղծորեն, կուզենայինք ձայնակցել մեր հոդվածագրի քննադատություններին՝ ուղղված ՀԲԸՄիությանը քարկոծողներին՝ Մանուկյան-Տեմիրճյան վարժարանի փակման առթիվ: Բայց մի կողմ թողնելով քար ու ցեխ շպրտողներին՝ չենք կարող խստագույնս չդատապարտել Միության ղեկավարությանը, քանզի ըստ երեւույթին դպրոց փակելը վերջինիս համար դարձել է քաղաքականություն, կամ գլոբալիզացիոն արտահայտությամբ՝* ***թրենդ****՝ սկսած Մելգոնյան կրթօջախից մինչեւ...: Բայց այս մասին հանգամանալից՝ առաջիկայում:*

# Ձախողված պետության ֆենոմենը, կամ արտաքին կառավարման «առավելությունը»

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

**Պատմական գիտությունների թեկնածու**

Ֆրանսիական հեղափոխության առանձնահատուկ կարեւորություններից մեկն էլ այն էր, որ այն սկիզբ դրեց պետության կառուցման Եվրոպական մոդելին: Դրա հիմքում ժողովրդավարությունն էր, իր ազատություն, հավասարություն եւ եղբայրություն լոզունգով:

Թե ինչքան էր այն համապատասխանում իրականությանը, սա այլ հարց է, բայց փաստ է, որ հետագայում Նապոլեոնյան արշավանքների հետեւանքով, այսպես կոչված ֆրանսիական արժեքները, որոնք հետագայում կոչվեցին Եվրոպական, սկսեցին տարածվել ողջ Եվրոպայով մեկ, եւ մենք ականատեսը եղանք նոր տիպի պետությունների ստեղծմանը: Թեեւ Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը ավարտվեց Բուրբոնների վերադարձով եւ պարզ դարձավ, որ, այսպես կոչված, հեղափոխությունը Ֆրանսիայի ժողովրդին արժեցել էր 2 միլիոն կյանք, իսկ, հիշեցնենք, որ դա այդ պետության բնակչության մոտ 40 % էր, ֆրանսիական հեղափոխական վարակը սկսեց տարածվել ամբողջ Եվրասիական մայրցամաքով:

Հետագայում շատ երկրներ էին փորձում այդ տիպի պետություն կառուցել, հատկապես այսպես կոչված Արեւմուտքի երկրները: Դրան հակադրվեց միայն Ռուսաստանը իր բոլշեւիկյան հեղափոխությունով, որի արդյունքում առաջադրվեց ֆրանսիական արժեբանության ռուսական ընկալումը ընկեր Լենինի մեկնաբանությամբ:

Ստեղծվեց այսպես կոչված Սովետական համակարգ՝ մեկ կուսակցության բացարձակ գերիշխանությամբ ու տոտալիտար համակարգի կառուցման իր փիլիսոփայությամբ, որի հիմքում ոչ թե անձի կամ կլանի, այլ գաղափարախոսության բացարձականացումն էր: Սա մի երեւույթ է, որի կայացման «գաղտնիքը» դեռ մինչեւ օրս էլ պարզ չէ ու առավել եւս՝ գիտական առումով քիչ ուսումնասիրված, եւ համոզված եմ, որ մարդկությունը վաղ թե ուշ կգա այս ֆենոմենի կրկնման անհրաժեշտությանը:

Պետական կառավարման այս համակարգը, իր գործունեության առաջին շրջանում զարգացման, կարելի է ասել՝ զարմանահրաշ արդյունքներ ցույց տվեց մինչ այդ գրեթե ամբողջովին ագրարային Ռուսաստանին ու դրա հենքի վրա ստեղծված ԽՍՀՄ-ին՝ արդյունաբերական զարգացման թռիչքաձեւ աճով: Նույնիսկ 2-րդ Աշխարհամարտից հետո ԽՍՀՄ-ը շատ արագ վեր հառնեց փլատակներից՝ դառնալով դեպի տիեզերք հրթիռ ուղարկող առաջին գերտերություն:

Սակայն, զարգացման հետակա կորագիծը այնքան էլ տպավորիչ չէր եւ Արեւմուտքի հետ ընթացող Սառը պատերազմում ԽՍՀՄ-ը տանուլ տվեց, իր կառավարման համակարգում առկա թերությունների եւ այլ հարցերի, ու հատկապես ազգային խնդրի պատճառով: ԽՍՀՄ- փլուզումը նպաստեց, որ «աշխարհ» եկան 15 նոր պետություններ, որոնք պետական կառուցվածքի եւ տեսլականի հիմքում ընդունեցին, այսպես կոչված, Եվրոպական «վեկտորը»:

Քանդվեց նաեւ, այսպես կոչված, սոցիալիստական ճամբարը եւ բոլոր պետություններն էլ ընտրեցին պետության կառուցման եվրոպական մոդելը, իսկ այդ շրջանում դա համարվում էր միակ ընդունելի եւ ընկալելի տարբերակը: ՀՀ-ն եւս դարձավ «եվրոպամետ» եւ կառուցեց պետական համակարգը, ինչպես եւ «պահանջվում» էր՝ բաղկացած օրենսդիր, գործադիր եւ դատական մարմիններից:

Փոխաբերական իմաստով ասած՝ մենք սովետական «Ժիգուլին» փոխարինեցինք եվրոպական «Մերսեդեսով» եւ ուրախ ու գոհ էինք այս փոփոխանակումից, քանի որ «Մերսը» «Ժիգուլուց» լավն էր ու ավելի հարմարավետ: Առանձնապես ուշադրություն չէինք դարձնում այն փաստի վրա, որ «Մերսը» հին էր ու ոչ առաջին թարմության. կարեւորը՝ որ եվրոպական էր:

Եվ գոհ ու երջանիկ մեր վրա երկնքից ընկած բախտից՝ սկսեցինք պետություն կառավարել Եվրոպական առաջատար «տեխնոլոգիաների», տվյալ դեպքում՝ «Մերսի» կիրառմամբ: Ու քանի որ այդ կառավարման համար մեզ պետք են նաեւ գիտելիքներ ու ֆինանսներ, ապա իսկույն այստեղ հայտնվեցին Արեւմուտքը ներկայացնող միջազգային կառույցները, որոնք մեզ սկսեցին տրամադրել խորհրդատվություն եւ գումարներ՝ «փայլուն» կառավարման համար:



Իսկ արդյո՞ւնքը. ինչպես եւ սպասելի էր, լիակատար ձախողումն էր: Եվ այստեղ որպես մխիթարանք կարող ենք ընդունել այն փաստը, որ ՀՀ-ն ոչ առաջին եւ ոչ էլ վերջին երկիրն է, որը հաջողություններ չի գրանցում պետության կառուցման իր գործընթացում: Համաշխարհային բանկի եւ Միջազգային արժույթին հիմնադրամի խորհրդակցությունների «արդյունքում» ձախողված պետությունների հիթ-շքերթում Հայաստանի Հանրապետությունը, փառք Աստծո, դեռ առաջին տասնյակում չէ:

Հին «Մերսեդեսը» վարելու համար ՀՀ-ին նորանոր «զապչաստներ»՝ պահեստամասեր էին պետք, որն էլ, արեւմտյան արժեհամակարգի տեսքով մեծամասշտաբ մատակարարվում էր Հայաստանին: Ու ինչքան ժամանակը անցնում էր, այնքան մեքենան ավելի էր հնանում, ու որպես կանոն ավելի ու ավելի շատ էին պետք լինում նոր մասեր, այսինքն արժեքներ՝ պետությունը կառավարելու համար:

Արդյունքում, իրեն ինքնիշխան հռչակած երկիրը ավելի ու ավելի շատ էր կախման մեջ հայտնվում Արեւմուտքից ու նրա արժեհամակարգից: Համաշխարհային ֆինանսական կենտրոնները մեզ հսկայական գումարներ էին վճարում ու ստիպում էին, որ այդ գումարներով արեւմտյան մասնագետներ հրավիրել, որոնք էլ մեզ պետք է սովորեցնեին ինչպես ծառ տնկել, տուն կառուցել եւ, որ ամենակարեւորն է՝ զավակ ունենալ:

Ու որպես կանոն մեզ սովորեցնում են, որ մեր պատմությունը ընդամենը անցյալ է, մեր հերոսները կեղծ են, մեր կրոնը ընդամենը աղանդ, մեր պատկերացումները ընտանիքի, կանացիության ու առավել եւս տղամարդկայնության մասին՝ հետամնացություն: Նման «արեւմտյան» արժեհամակարգ դավանող պետությունը վաղ թե ուշ վերածվում է ինչ-որ խառը հիբրիդի, որը ի վիճակի չէ այլեւս ինքնուրույն գոյատեւել եւ, որպես կանոն, այդ պետությունները սնանկանում են ու այնտեղ հաստատվում է արտաքին կառավարում:

Սա այն իրավիճակն է, որն այսօր ստեղծվել է ՀՀ-ում, երբ արտաքին կառավարման ներմուծման համար իրականացվեց այսպես կոչված հեղափոխություն, անունը էական չէ, եւ հաստատվեց ոնն ժողովրդական իշխանություն: Վերջին երեք տասնամյակների կառավարման արդյունքում, արտաքին արժեհամակարգի ներմուծմամբ եւ սեփական կրթական համակարգի ոչնչացման արդյունքում, մեծանում է բացառապես այլ արժեքներ դավանող «դեգեներատների» սերունդ, որը սեփական պետության փաստացի կազմաքանդումը ընդունում է ողջույններով եւ ուրախ գոռում-գոչյուններով:

Փաստացի արտաքին կառավարման ներքո գտնվող պետությունը կա՛մ պետք է լիովին ձախողվի եւ որպես կանոն դրա արժեքը նոր տարածքների զիջումն է, օրինակ Սերբիան կամ Վրաստանը, եւ կա՛մ, եթե ի հարկե կա դեռ առողջ, ազգային արժեքներ դավանող մարդկանց թեկուզ եւ մի փոքր խումբ, սկսվի նոր տիպի պետության համար պայքարի ժամանակաշրջանը:

Նոր պետության կառուցումը հնարավոր է միայն սեփական արժեհամակարգի հաստատմամբ, արտաքին կախվածությունից հրաժարման գնով, ինչը սակայն ոչ միայն հեշտ չէ, այլեւ վտանգավոր, քանի որ այս աշխարհում չեն սիրում տարբերվողներին, բացի այդ էլ Արեւմուտքը վաղուց արդեն հայտարարել է, որ իր արժեքները համամարդկային են ու բոլորի համար ընդունելի: Հետեւաբար համաշխարհային քարոզչամեքենան ամենօրյա ռեժիմով ձեզ բացատրելու է, որ պետք չէ հեծանիվ հայտնաբերել, երբ այն արդեն կա:

Աշխարհը կանգնած է արեւմտյան արժեքների ճգնաժամի շեմին, ծայրահեղ լիբերալիզմը, վաղուց արդեն վերածվել է նեոբոլշեւիզմի մեկ այլ մեկնաբանության, որը չի ընդունում ոչ մի այլ գաղափարաբանություն բացի սեփականից ու դրա անփոխարինելիության ընդունումից: Մենք՝ հայերս, ի տարբերություն այլ ազգերի, քաղաքակրթություն ստեղծած ժողովուրդ ենք եւ առաջին անգամը չէ, որ հայտնվում ենք այս իրավիճակում եւ այս փոսից կարող ենք դուրս գալ ուժեղացած՝ եթե հասկանանք, որ հայկական պետությունը կարող է հզորանալ եւ զարգանալ եթե կարողանանք արժեւորել մեր իսկ ունեցած արժեքներն ու պատմական նվաճումները, կարողանանք գնահատել Արցախյան պատերազմի մեր հաղթանակի իրական պատճառները ու դրա հիման վրա կառուցել իսկապես Նոր Հայաստան:

AZG NEW SHABAT.QXD 16/01/2020 21:58 Page 3



# Լիբիայի ճգնաժամի կարգավորման նախաձեռնությունը...



⇨1 Աջակցության, ինչպես նաեւ ռազմածովային բազա ստանալու ակնկալիքով Էրդողանը մեկնել է Թունիս, իսկ արտգործնախարար Մեւլութ Չավուշօղլուն՝ Ալժիր, բայց ապարդյուն: Այս երկու երկրներն էլ պահանջել են, որ Թուրքիան չխառնվի Լիբիայի ներքին գործերին: Այդ առումով Էրդողանին անձամբ զգուշացրել է նաեւ ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը**, մատնանշելով, որ զերծ մնա Լիբիայում քաղաքական զարգացումների մեջ խորանալու գայթակղությունից:

Հասկանալի է, որ բացի արաբական երկրներից Խալիֆե Խաֆթարին են պաշտպանում Ֆրանսիան, Իտալիան, հավանաբար նաեւ Գերմանիան, Հունաստանը, Կիպրոսը, Ռուսաստանը: Քանի որ նշված երկրներից Հունաստանն ու Կիպրոսի Հանրապետությունն անմիջականորեն ներգրավված են Արեւելյան Միջերկրականի նավթի եւ բնական գազի պաշարները շահագործելու նախագծում, իսկ հորատման աշխատանքները, որոնց մասնակցում է նաեւ Եգիպտոսը՝ Իսրայելի գլխավորությամբ, ուստի Խաֆթարին պետք է պաշտպանի նաեւ Իսրայելը: Վերջինի պարագայում խնդիրը Եվրոպական Միության երկրների աջակցությունը վայելող նշված նախագիծն է: Դա արժանացել է նաեւ Թրամփի հավանությանը, այն հաշվով, որ նախագծի իրագործումը կթուլացնի ԵՄ-ի երկրների կախվածությունը ռուսական գազից ու նավթից: Չնայած դրան, նախագծին հավանություն է տալիս նաեւ Ռուսաստանը, ըստ ամենայնի Արեւելյան Միջերկրականում ծավալվող գործընթացներին ակտիվորեն ներգրավվելու առաջադրանքով:

Ի տարբերություն Ռուսաստանի, Թուրքիան արդեն սոսկ դուրս չի մնացել այդ գործընթացներից, այլեւ օտարվել է տարածաշրջանի երկրներից: Նա ավելի քան 10 տարի դեսպան չունի Սիրիայում, Իսրայելում եւ Եգիպտոսում: Նրա հարաբերությունները չափազանց լարված են Սաուդյան Արաբիայի եւ առհասարակ արաբական բոլոր երկրների հետ, բացառությամբ Քաթարի, ինչը, թերեւս, մեծապես պայմանավորված էր «Մուսուլման եղբայրների» հանդեպ Էրդողանի անզուսպ հակումներով, առավել եւս դրանց տարբեր երկրներում իշխանության բերելու ձեռնարկումներով: Նա դեռեւս 2011-ին փորձել էր այդ բանն անել Սիրիայում, եւ թերեւս այդ էր պատճառը, որ Դամասկոսի Օմայյան մզկիթում նամազ անելու հույսեր էր փայփայում:

Էրդողանի հույսերը չարդարացան, ավելին՝ Սիրիայի հյուսիսարեւմուտքում տեղակայված թուրք զինվորները սկսել են ապաստանել Ալ Բաբի ռուսական դիրքերում: Իդլիբում թուրքական զորքերն ունեն 12 դիտակետ, ու քանի որ Բաշար Ասադի ուժերը պաշարել են դիտակետերը, ուստի դրանց անվտանգությունը ռուսական ռազմական ոստիկանությունն է ապահովում: Այս ամենը «Խաղաղության աղբյուր» գործողությունների անփառունակ ավարտի ցայտուն վկայությունն է: Չի բացառվում, որ նույն արդյունքին հանգի Տրիպոլիի կառավարության հետ ստորագրված «անվտանգության եւ ռազմական համագործակցության» համաձայնագիրն ու ծովային տնտեսական գոտիների սահմանազատման մասին հուշագիրը:

Էրդողանն այս հուշագիրը պայմանավորում է Արեւելյան Միջերկրականում Թուրքիայի եւ «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» «ոտնահարված իրավունքները» վերականգնելու առաջադրանքով, դիտարկելով հուշագրից բխող նավթի ու գազի որոնման եւ հորատման աշխատանքները, որպես այլընտրանք Իսրայելի ու Եգիպտոսի մասնակցությամբ Հունաստանի եւ Կիպրոսի իրականացրած վերոհիշյալ նախագծին: Բայց ինչպե՞ս: Էրդողանի նախանշած թուրքական ծովային գոտին անցնում է Կիպրոսի հյուսիսով եւ Կրետե կղզու հարավով, իսկ Տրիպոլին, որի հեռավորությունը Թուրքիայից ավելի քան 2 հազար կմ է, գտնվում է Լիբիայի արեւմուտքում, Թունիսին սահմանամերձ հատվածում: Այդ իսկ պատճառով էլ երկու գոտիների շփման գիծը չափազանց կարճ է:

Այդ գոտիների շահագործման արդյունավետությանը ենթադրում է Թուրքիայի համագործակցությունն առնվազն Թունիսի եւ Ալժիրի հետ, իսկ վերջիններս կտրականապես դեմ են դրան: Դրա հետ մեկտեղ Տրիպոլիի ազգային համաձայնության կառավարությունը, որ մինչ Թուրքիայի հետ գործարքը, վերահսկում էր երկրի տարածքի 20 %-ը, ներկայումս դա, Խաֆթարի 60 հազարանոց բանակի առաջխաղացման հետեւանքով կրճատվեց 6 %-ի: Այդ ընթացքում մարշալ Խաֆթարին հաջողվեց գրավել Սիրտե քաղաքն ու պաշարել Տրիպոլին, անելանելի վիճակի մեջ գցելով ազգային համաձայնության կառավարությանը:

Այդ էր, թերեւս, պատճառը, որ **ալ-Սարաջը** դեկտեմբերի վերջերին շուտափույթ ռազմական օգնության խնդրանքով դիմեց Էրդողանին: Օգնության պարագային խնդիրը զենքն ու զինամթերքը չէր, չնայած զենքի տրամադրումը Լիբիա արգելելու ՄԱԿ-ի որոշմանը, Թուրքիան դրանք ալ-Սարաջի կառավարությանը տրամադրում էր նախքան ռազմական համագործակցության համաձայնագիրը, ուղարկելով միաժամանակ Սիրիայից գրոհայիններ : Հետեւաբար խոսքը Տրիպոլի թուրքական զորք, ռազմանավեր, ռազմաօդային ուժեր ուղարկելու մասին էր: **Էրդողանն** արձագանքելով օգնության խնդրանքին, ասաց. «Եթե մեզ հրավիրում են, ապա մենք կգնանք: Թուրքիայի եւ կիպրացի թուրքերի շահերը պահանջում են, որ Տրիպոլիում իշխանության դեկին մնա ալ-Սարաջի կառավարությունը»:

Ավելին՝ նա արտերկիր զորք ուղարկելու թույլտվության պահանջով դեկտեմբերի 30-ին դիմեց Թուրքիայի ազգային մեծ ժողով՝ Մեջլիսին, որը հունվարի 2-ին «Արդարություն եւ բարգավաճում», ինչպես նաեւ Ազգայնական շարժում կուսակցությունների կողմ ձայներով հաստատեց դիմումը: Ժողովրդա-հանրապետական, Ժողովուրդների դեմոկրատական եւ «Լավ» կուսակցությունները ոչ միայն դեմ քվեարկեցին, այլ պահանջեցին Էրդողանից բացատրել, թե ի՞նչ գործ ունեն թուրքական զորքերը Լիբիայի անապատներում, ե՞րբ են ուղարկվելու, որքա՞ն ժամանակով, ինչպիսի՞ թվակազմով եւ առաջադրանքով: Ժողովրդա-հանրապետական կուսակցության առաջնորդ **Քըլըչդարօղլուն** նույնիսկ առաջարկեց Լիբիա զորք ուղարկելու փոխարեն հակամարտող կողմերի միջեւ հրադադար հաստատելու հարցում միջնորդական առաքելություն ստանձնելու խնդրանքով դիմել ՄԱԿ-ին, կապ հաստատել նաեւ երկիրը գրեթե ամբողջությամբ՝ ավելի քան 90 %ով վերահսկող Խաֆթարի հետ:

Էրդողանն առաջարկին ի պատասխան ասաց, որ Քըլըչդարօղլուն բացարձակ չի հասկանում միջազգային հարաբերություններից, Խաֆթարին անվանեց իշխանության բռնազավթիչ եւ ահաբեկիչ, իսկ վերջինի բանակին՝ հրոսակախումբ, ընդգծելով, թե ինքն արդեն կապի մեջ է միջազգայնորեն ճանաչված ալ-Սարաջի օրինական կառավարության հետ: Ի դեպ ՄԱԿ-ը ոչ թե ճանաչել է այս կառավարությանը, այլ ընդամենն ընդունել նրա ճանաչման դիմումը: Ընդդիմությունը փորձեց Էրդողանին ետ պահել նոր արկածախնդրությունից, իսկ նա ստացած լինելով Մեջլիսի թույլտվությունը նախ ահաբեկչական նոր խմբավորումներ ուղարկեց Տրիպոլի,փաստորեն համալրելով 70 %-ը այլազգի վարձկաններից կազմված Տրիպոլիի բանակը, ապա նաեւ հատուկ նշանակության 70 հոգանոց զորախումբ՝ կորպուսի գեներալի հրամանատարությամբ: Այնուհետեւ Թուրքիայի նախագահը ձեռնամուխ եղավ ռազմանավեր եւ ռազմական ինքնաթիռներ ուղարկելու նախապատրաստությանը:

Էրդողանի ձեռնարկումներն էլ ավելի շիկացրին Թուրքիայի ներքաղաքական կյանքի առանց այդ էլ ընդդիմության հետ փոխադարձ մեղադրանքներով շիկացած մթնոլորտը: Այդ ընթացքում Արաբական լիգան արտակարգ նիստում դատապարտեց Լիբիայի զարգացումներին արտաքին միջամտության ամեն մի դրսեւորում: Կահիրեում հրավիրվեց արաբական երկրների արտգործնախարարների խորհրդակցություն, Եգիպտոսը Թուրքիայի միջամտությունը կասեցնելու կոչով դիմեց միջազգային հանրությանը, եգիպտական ռազմանավերը Լիբիայի ափերում զորավարժություններ անցկացրին, սահմանելով միանգամայն հունական նավերի հետ համատեղ պարեկություն: Սակայն Էրդողանը մնաց անդրդվելի, բայց մինչեւ նախագահ Վլադիմիր Պուտինի այցը Ստամբուլ:

ՌԴ նախագահը Ստամբուլ այցելեց հունվարի 8-ի «Թուրքական հոսք» գազատարի գործարկման մեկնարկը տալու նպատակով : Սակայն մինչ այդ նա ուղեւորվեց Դամասկոս, որտեղ նախագահ Ասադի ուղեկցությամբ եղավ Օմայյան մզկիթում: Թուրք քաղաքական մեկնաբանները խիստ խորհրդանշական համարեցին մզկիթ այցելու հանգամանքը, մատնանշելով, թե նախագահ Պուտինը դրանով կանխորոշեց Էրդողանի դերակատարության ավարտը Սիրիայում: Ինչպես երեւում է, Լիբիայում հակամարտող կողմերի միջեւ հրադադար հաստատելու նախաձեռնությամբ Պուտինն էլ սպառելու է նաեւ ալ-Սարաջի կառավարությանն աջակցելու պատրվակով Տրիպոլում «Մուսուլման եղբայրներին » իշխանության ղեկին պահելու, ինչպես նաեւ ծովային գոտիները սահմանազատելու մասին հուշագրով Արեւելյան Միջերկրանում Թուրքիայի դիրքերն ամրապնդելու Էրդողանի դիրքորոշումը:

Հունվարի 8-ին Ստամբուլում նախագահ **Պուտինը** Էրդողանին առաջարկեց Լիբիայում հրադադար հայտարարելու կոչ անել հակամարտող կողմերին: Առաջարկի ընդունումից հետո հունվարի 12-ը նշանակվեց հայտարարման օր: Ենթադրվում էր, որ ալ-Սարաջի ազգային համաձայնության եւ աթ-Թանիի ժամանակավոր կառավարությունները կընդունեն հրադադարի առաջարկը: Թերեւս մնում էր համոզել մարշալ Խաֆթարին: Այդ պարտականությունը, Չավուշօղլուի դիպուկ արտահայտությամբ իր վրա էր վերցրել ռուսական կողմը, խոստանալով թուրքերին, թե կհամոզի: Ստանալով հակամարտող կողմերի համաձայնությունը, հունվարի 13-ին Մոսկվայում հրավիրվում է հանդիպում, որին մասնակցում են նաեւ Թուրքիայի արտգործնախարար Չավուշօղլուն, պաշտպանության նախարար Հուլուսի Աքարը եւ Ազգային հետախուզական կազմակերպության ղեկավար Հաքան Ֆիդանը:

Արտգործնախարար Սերգեյ Լավրովի գլխավորած ռուսական պատվիրակությունը թուրքականի հետ մշակում է հրադադարի պայմանագրի նախագիծ: Ալ Սարաջն ստորագրում է նախագիծը, իսկ **Խալիֆա Խաֆթարը** նախագիծն ուսումնասիրելու համար մինչեւ առավոտ լրացուցիչ ժամանակ է պահանջում, իսկ առավոտյան իր պատվիրակության հետ վերադառնում է Թոբրուք: Ճիշտ է, Ռուսաստանի ճնշման տակ նա ստիպված հայտարարում է, որ իրեն երկու օր էր հարկավոր, այնուամենայնիվ հրադադարի պայմանագրի ստորագրման ռուսական նախաձեռնությունը, թեկուզ ժամանակավոր, ձախողվում է: Էրդողանը այս փաստի առնչությամբ հայտարարեց. «Իշխանության բռնազավթիչ Խաֆթարը առանց ստորագրելու թողեց փախավ, մնացածն արդեն նախագահ Պուտինի գործն է»:

Նա այդ հայտարարությամբ հանձնելով ողջ պատասխանատվությունը Ռուսաստանին, ակամա ընդունում է Լիբիայի ճգնաժամում Թուրքիայի դիրքերի սպառումը, ինչն Էրդողանի տեսանկյունից հերթական ձախողում է նշանակում: Մանավանդ որ Խաֆթարը, ինչպես հետո պարզվեց, առարկել է նախագծի հրադադարի պահպանման հսկողությունը Թուրքիային հանձնարարելու կետին եւ պահանջել է, որ նախքան պայմանագրի ստորագրումը օտարերկրյա բոլոր զինծառայողները դուրս բերվեն Լիբիայից: Ի դեպ, վերոհիշյալ հանդիպումից մեկ օր առաջ Մոսկվա էր այցելել նաեւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, քննարկելու Պուտինի հետ հունվարի 19-20-ին Բեռլինում նախատեսվող Լիբիայի ճգնաժամին նվիրված կոնֆերանսին առնչվող խնդիրները: Դա Գերմանիայի հետ համատեղ ջանքերով կազմակերպելու է Ռուսաստանը: Քննարկումներում որոշվել է հակամարտող կողմերից բացի հրավիրել նաեւ ԱՄՆ-ին, Ֆրանսիային, Անգլիային, Իտալիային եւ Չինաստանին:

Ինչ խոսք, կհրավիրվի նաեւ Թուրքիան, բայց դիտորդի կարգավիճակով, ինչը Էրողանի համար կհանդիսանա հիասթափության նոր աղբյուր: Գուցե նա դրանով վերջապես կհասկանա եւ կհրաժարվի մեծ տերությունների ղեկավարների հետ ոտք մեկնելու գայթակղությունից: Համենայն դեպս, հաջողության դեպքում Բեռլինի կոնֆերանսն ազդեցության առումով կարող է Ռուսաստանի առջեւ բացել նոր հեռանկարներ Միջերկրականում: Քանի որ դա նվիրված է Լիբիային, իսկ այս երկիրը կենտրոնական Միջերկրականի ափին է, ոչ թե արեւելյան, որտեղ ռուսական ազդեցությունը սկսեց տարածվել դեռեւս 2015-ի սեպտեմբերից, երբ Պուտինն որոշեց միջամտել Սիրիայի քաղաքական զարգացումներին, ուստի դժվար չէ կռահել դեպի Արեւմտյան Միջերկրական առաջխաղացման համար Ռուսաստանի առջեւ բացվող հեռանկարի մասին: Ընդ որում Ռուսաստանը Միջերկրականի ավազանի երկիր չէ:

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ

ՌԴ-ում «Ազգի» հատուկ թղթակից

# ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի ամենամյա ուղերձը Դաշնային ժողովին

Յունվարի 15-ին ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինը Մոսկվայի «Մանեժի» կենտրոնական ցուցասրահում հրապարակեց Դաշնային ժողովին ուղղված իր ամենամյա ուղերձը:

Ռուսաստանի Դաշնության նախագահի պաշտոնը ստանձնելու չորս ժամանակահատվածներում սա Վլադիմիր Պուտինի նմանօրինակ 16-րդ ուղերձն էր, որին լրագրողներս հետեւում էինք մեզ հատկացված հատուկ սրահում:

Իր ուղերձում, որը տեւեց մոտ մեկ ժամ, Ռուսաստանի նախագահն առաջարկեց «արմատական փոփոխություններ» կատարել երկրի Սահմանադրության մեջ՝ ամրապնդելով Պետդումայի դերն ու վերանայելով Դաշնային Ժողովի դերակատարումը:

Նրա առաջարկները նախատեսում են մի շարք փոփոխություններ Ռուսաստանի պետական կառավարման համակարգում: Այդ փոփոխությունները, Պուտինի խոսքով, պետք է դրվեն համընդհանուր քվեարկության: Ըստ այդմ, Սահմանադրությունը պետք է ունենա առաջնահերթություն Ռուսաստանի իրավական տարածքում միջազգային իրավունքի նկատմամբ: Բարձրաստիճան պաշտոնյաները, դատավորները պետք է չունենան օտարերկրյա քաղաքացիություն եւ այլ պետության բնակության թույլտվություն, նախագահի թեկնածուն պետք է առնվազն 25 տարի ապրի Ռուսաստանում եւ երբեք օտարերկրյա քաղաքացիություն չունենա, Սահմանադրությունից հանել այն կետը, որում ասված է, թե նույն անձը չի կարող ընտրվել նախագահի երկու ժամկետից ավելի «անընդմեջ»:



Սա այն կետն էր, որը թույլ էր տվել Պուտինին երրորդ անգամ նախագահ վերընտրվել 2012-ին: Պուտինի առաջարկը նշանակում է, որ Ռուսաստանում այլեւս չպետք է լինի 2 անգամից ավելի ընտրված նախագահ: 2024-ին լրանում է Պուտինի նախագահության չորրորդ ժամկետը, եւ Սահմանադրությունն արգելում է նրան նախագահ վերընտրվել հինգերորդ անգամ: Այսօր նա փաստորեն առաջարկել է Սահմանադրության մեջ ամրապնդել Պետական խորհրդի կարգավիճակը:

Բացի այդ, Պուտինն առաջարկում է ընդլայնել խորհրդարանի լիազորությունները: Պետդուման պետք է հաստատի վարչապետի թեկնածությունը, այնուհետեւ, նրա առաջարկով, կառավարության անդամների: Նախագահից պահանջվելու է այդ անձանց նշանակել առաջարկված պաշտոնում:

Իրավապահ մարմինների ղեկավարները նշանակվելու են նախագահի կողմից՝ Դաշնության խորհրդի հետ խորհրդակցելուց հետո: Դաշնության խորհուրդը կստանա սահմանադրական եւ Գերագույն դատարանների դատավորներին աշխատանքից ազատելու իրավունք:

Դաշնային ժողովին ուղղված ուղերձում Ռուսաստանի ղեկավարը կենտրոնացավ երկրի ազգաբնակչության կյանքի որակի բարելավման մի շարք հարցերի վրա՝ մասնանշելով հասարակության կոնկրետ խավեր եւ կոնկրետ բնագավառներ: Մասնավորապես, Պուտինը հանդես եկավ ծնելիության մակարդակի բարձրացման առաջարկով՝ ֆինանսական խթանման ուղին մասնանշելով երիտասարդ ընտանիքների համար: Նա նաեւ ուսուցիչների ցածր աշխատավարձի խնդիրը մեջտեղ բերեց, շեշտելով ուսուցիչների համար հավելավճարներ ներմուծելու անհրաժեշտությունը:

Միջցառման ավարտին ԶԼՄ ներկայացուցիչներիս հնարավորություն ընձեռնվեց հանդիպելու եւ հարցեր ուղղելու ՌԴ Պետդումայի պատգամավորներին, որոնք կարեւորեցին երկրի նախագահի ուղերձում նշված մեծածավալ փոփոխությունների անհրաժեշտությունն ու հրատապությունը: Ընդհանրապես, այդ օրը ինձ հանդիպած բազմաթիվ պատգամավորներ, որոնք, ի դեպ, վկայակոչեցին նաեւ Ռուսաստանի բնակչության մեծամասնության կարծիքը, համոզված են, որ Վլադիմիր Պուտինը անփոխարինելի ղեկավար է, կշռադատված քաղաքական գործիչ եւ միջազգային հարաբերություններում իմաստուն դիվանագետ, որը երկար ու ձիգ տարիներ Ռուսաստան պետության նավը անփորձանք տանում է բարեկեցիկ եւ արժանապատիվ եզերքներ:

Վլադիմիր Պուտինի ուղերձից մի քանի ժամ անց տեղի ունեցած կառավարության նիստում Ռուսաստանի վարչապետ **Դմիտրի Մեդվեդեւը** հայտարարել է կառավարության հրաժարականի մասին:

«Այսօր ՌԴ նախագահի մատնանշած արմատական փոփոխությունները երբ ընդունվեն, ամենայն հավանականությամբ դա տեղի կունենա քննարկումներից հետո, դրանք էական փոփոխություններ կմտցնեն ոչ միայն Սահմանադրության մի ամբողջ շարք հոդվածներում, այլ նաեւ իշխանական թեւերի հավասարակշռության մեջ՝ գործադիր իշխանությունում, օրենսդիր իշխանությունում, դատական իշխանությունում»,- ասել է Դմիտրի Մեդվեդեւը:

«Այդ համատեքստում,-շարունակել է նա,-ակնհայտ է, որ մենք՝ որպես Ռուսաստանի Դաշնության կառավարություն, պետք է մեր երկրի նախագահին հնարավորություն տանք ընդունելու դրա համար բոլոր հնարավոր որոշումները, եւ այդ պայմաններում ես համարում եմ՝ ճիշտ կլինի, որ Սահմանադրության 117-րդ հոդվածին համապատասխան Ռուսաստանի Դաշնության կառավարությունը գործող կազմով հրաժարական տա»:

⇨5

ՆԱԻՐ ՅԱՆ

# Մտորումներ Հանրապետության հրապարակի տակ գտնվող հին քաղաքի մասին

Հանրապետության հրապարակի տակ գտնվող հին քաղաքի թեման թարմացել է ու բուռն քննարկումների դաշտ մտել: Դեռ 2003-ին, երբ հնագետներ Ֆրինա Բաբայանն ու Աղավնի Ժամկոչյանը հնավայրը հայտնաբերեցին, շատերը կարծիք հայտնեցին, թե պետք է հին քաղաքը հնարավորինս բացել, հողի շերտերից ազատել: Բայց որոշվեց նորից այն փակել, հողի շերտի տակ պահպանել ու Հանրապետության հրապարակի տեսքը չփոխել:

Մեկ շաբաթ առաջ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ֆեյսբուքյան հերթական գրառումն արեց, այս անգամ հրապարակի տակ գտնվող հին քաղաքի մասին՝ նշելով, որ այն պետք է դառնա զբոսաշրջային տեսարժան վայր ու վերածվի թանգարանի: Հաջորդ օրն իսկ հնագետներն ու ճարտարապետներն սկսեցին մեկնաբանել ու վերլուծել՝ բացե՞լ, թե չբացել պատմական շերտը, արդյո՞ք հին քաղաքն արժեք է ներկայացնում:

Ճարտարապետ Մարկ Գրիգորյանի թոռը՝ **Մարկ Գրիգորյանը**, կարծում է, որ այն ո՛չ ճարտարապետական, ո՛չ էլ պատմամշակութային տեսակետից որեւէ արժեք չունի: Ըստ նրա՝ շինությունները 18-րդ դարի են, բացելու դեպքում էլ հայտնի չէ, թե ինչ անակնկալի կհանդիպենք: Չի բացառվում, որ այն մահմեդական կառույց լինի, քանի որ այդ ժամանակաշրջանում Հայաստանը պարսկական տիրապետության տակ էր: Մարկ Գրիգորյանին մտահոգում է այն, թե ինչ նախագիծ է ներկայացվելու, ինչպես ու որտեղից է փորվելու հնավայրը, չէ՞ որ այն Երեւանի ուղիղ կենտրոնում է եւ կարող է խաթարել հանրության տեղաշարժը, փողոցների երթեւեկը: Ի վերջո, Երեւանում պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող բազմադարյա կոթողներ ու հնավայրեր կան, որոնք առաջինը խնամքի եւ ուշադրության կարիք ունեն:

Հրապարակի պատմական շերտը բացելու եւ թանգարանի վերածելու գաղափարն իրագործելու համար ԿԳՄՍ նախարարությանը կից փորձագիտական հանձնաժողով է ստեղծվել. նիստ առայժմ չի հրավիրվել:

ՀՀ վաստակավոր ճարտարապետ **Հրաչ Պողոսյանն** էլ կարծում է, որ շինությունները պետք է բացվեն ու ներկայացվեն հանրությանը. ամենեւին էլ կարեւոր չէ՝ դրանք ում կառուցածն են, կարեւորն այն է, որ հայերի տներ են ու պետք է պատմությանն այլ կերպ վերաբերվել:



**Ֆրինա Բաբայանը** պնդում է, որ կառույցը 17-րդ դարի է, շինվածքի հեղինակները հայ վարպետներն են, որոնք հայկական տուֆ են օգտագործել: Հնագետն, իհարկե, ուզում է, որ հին քաղաքի մնացորդները հրապարակի սալահատակի ու ասֆալտի տակից հանվեն եւ ուսումնասիրվեն:

Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն **Պավել Ավետիսյանը** շինությունները բոլորովին այլ դարաշրջանի է վերագրում՝ 19-րդ դար:Նա մասնագիտորեն բացատրում է, որ Երեւանում ուղիղ փողոցներ կառուցվել են 1850-ականներին, մինչ այդ փողոցները մահմեդական ազդեցությամբ ոլոր-մոլոր են եղել: Քանի որ հրապարակի տակ եղած շինությունները դասավորված են ուղիղ կառուցված փողոցի վրա, ուրեմն դժվար չէ եզրակացնել, որ հին քաղաք կոչվածը 19-րդ դարի երկրորդ կեսին է կառուցվել, ոչ թե 18 կամ առավել եւս 17-րդ դարերում: Ուղիղ փողոցների առաջին օրինակներից է նաեւ Աստաֆյան՝ այժմյան Աբովյան փողոցը: Պավել Ավետիսյանը բացառում է, որ շինություններն ավելի վաղ դարաշրջանի են պատկանում, բայց դա չի նշանակում, որ դրանք արժեք չունեն: Հնագետը պնդում է՝ լինի Երեւանը, թե այլ քաղաք, հողի տակ ինչ էլ հայտնաբերվի, կարեւոր ու արժեքավոր է: Մեր քաղաքային կյանքի անցյալը, հիշողության մշակույթը ցաքուցրիվ է ներկայացված: Այս մեկը Հովհաննես Քաջազնունու տունն է, մյուսը՝ Աֆրիկյաններին է պատկանել, երրորդում Ակսել Բակունցն է ապրել: Մեր պատմությունն ու մշակույթը ընդհատված հիշատակումներով է ներկայացված, ոչ թե ամբողջական հիշողությամբ: Այդ իմաստով որեւէ հնավայր՝ անգամ 19-րդ դարի, պետք է ուսումնասիրվի եւ հանրայնացվի: Բայց այս դեպքում գործը բարդանում է, քանի որ շինությունները գտնվում են Հանրապետության հրապարակի տարածքում: Ոչ ոք առայժմ չի պատկերացնում կամ ելք չի առաջարկում՝ ինչպես եւ որտեղից է բացվելու հնավայրը: Կարծիքներ են հնչում, թե միգուցե ասֆալտն ու սալահատակը քանդվեն, իսկ ապակի դրվի, որի տակից էլ հին քաղաքը կերեւա: Մյուսների պատկերացմամբ պետք է աստիճաններով մուտք ու ելք բացի, որպեսզի զբոսաշրջիկներն ու տեղացի այցելուները կարողանան իջնել ու ոչ միայն տեսնել քաղաքի նկուղները, այլեւ շրջել այնտեղ:

Հնագետ Պավել Ավետիսյանը դեմ չէ, թող հնավայրը բացվի, բայց ինչպես է արվելու: Գործ ունենք Հանրապետության հրապարակի հետ, որը մերօրյա պատմամշակութային կոթող է: Իսկ համաձայն շրջակա միջավայրի եւ հուշարձանների պահպանման մասին օրենքի՝ պատմամշակութային հուշարձանի տեսքը խաթարելն օրենքով պատժելի է: Բացի այդ, աշխատանքներն ինչպե՞ս են տարվելու, որ հրապարակի տեսքը չխաթարվի, կապվածահար չլինի նաեւ երթեւեկությունը ոչ միայն հրապարակում, այլեւ հարակից փողոցներում:

Դժվար չէ ենթադրել, թե հին քաղաքը բացելու եւ թանգարանի վերածելու համար ինչ հսկայական գումարներ են պահանջվելու: Իշխանություններն ուզում են այսկերպ զարգացնել զբոսաշրջությունը, որպեսզի Երեւան այցելած օտարերկրացին տեսնի նաեւ ժամանակակից քաղաքներին ոչ բնորոշ, անսովոր տեսարան՝ երկհարկանի Երեւան:

Իհարկե, Հանրապետության հրապարակի տակ գտնվող պատմական շերտի արժեքը ոչ ոք չի նսեմացնում, բայց նույն Երեւանն ունի քաղաքային մշակույթի հնամենի կոթողներ՝ Շենգավիթը, Կարմիր բլուրը, Էրեբունին: Կարմիր բլուրի պեղումները ղեկավարած անվանի հնագետ Բորիս Պիատրովսկու որդին՝ Էրմիտաժի տնօրեն Միխայիլ Պատրովսկին պարբերաբար գալիս է Երեւան ու հիասթափված հեռանում, որովհետեւ տեսնում է, որ մեր հնավայրերը դարձյալ անմխիթար ու անխնամ վիճակում են, դրանք այդպես էլ չեն դառնում թանգարան բաց երկնքի տակ, որովհետեւ ներկայանալի տեսք չունեն: Երեւանյան հնավայրերն էլ մեր Պիզայի աշտարակը կամ Կոլիզեյն են, որոնք շարունակում են անտեսված մնալ թե՛ պետության, թե՛ հասարակության կողմից:

Երեւանի կենտրոնն առանց այդ էլ ծանրաբեռնված է, մեր քաղաքը զբոսաշրջիկների համար գրավիչ ու հետաքրքրական դարձնելու համար արդյո՞ք ավելի ճիշտ չի լինի խնամել, ներկայանալի տեսքի բերել Կարմիր բլուրն ու Էրեբունին, գումարներն այնտեղ ուղղել: Այդ հնավայրերն իրենց արժեքով անհամեմատելի են 19-րդ դարի քաղաքի մնացորդների հետ, ու եթե ուզում ենք օտարերկրյա այցելուին զարմացնել ու հիացնել, ապա զարմացքի ու հիացմունքի առարկաները վաղուց պատրաստ են՝ հազարամյակների մշակույթ, պատմություն ու քաղաքակրթություն կրող Կարմիր բլուրն ու Էրեբունին:

# Միջինարեւելյան պղտոր պայմաններում Թուրքիան փորձում է ձուկ որսալ

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ
Դետրոյթ, ԱՄՆ

Քաղաքագետներն ու փորձագետները արդեն բավական ժամանակ է, ինչ ճնչները պահած փորձում են կռահել, թե ի՞նչ է տեղի ունենալու Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի «Ալ Քուդս» խմբավորման հրամանատար եւ ազգային պաշտամունքի հերոս դարձած Ղասեմ Սոլեյմանիի սպանությունից հետո:

Հարցերը բազմազան են համաշխարհային մամուլում: Ինչպե՞ս կարելի էր Իրաքի ինքնիշխանությունը վարկաբեկել՝ իր տարածքում հարված հասցնելով Սոլեյմանիին: Լարվածությունը է՞լ ավելի է սրվելո՞ւ, թե՞ գտնվելու է քաղաքական կարգավորում: Շրջանառվում են նաեւ այլ հարցեր, որոնց ճիշտ պատասխաններ գտնելը հեշտ գործ չէ, քանի որ կացությունը չափազանց հեղհեղուկ է:

Սկսենք նրանից, որ Մ. Նահանգներում եւ մասնավորապես Վաշինգտոնում պետքարտուղար Մայք Պոմպեոն իր ձեռքն է վերցրել իշխանությունը Սպիտակ տանը: Ռուբիկոնն անցնելը բնորոշ չէ նախագահ Թրամփի ոճին եւ մարտավարությանը: Մինչ օրս նա իր թշնամիներին գրգռելու արարքներով մշտապես տարակուսանքի մեջ է պահել քաղաքագետներին եւ լրատվամիջոցներին: Լեզվի ֆրեյդյան սայթաքում չէր, երբ Պոմպեոն հանրությանը հայտնեց, որ նախագահը «դժկամորեն» որոշում ընդունելու գործընթացում էր: Մեր օրերում Պոմպեոն կրկնում է Ջորջ Բուշի կառավարության ժամանակաշրջանում փոխնախագահ Դիկ Չեյնիի դերը, որ ձգտում էր ներխուժել Իրաք:

Կոնգրեսը պահպանողական դիրքերում մնաց: Օրենսդիրների մտքում կասկած չկար, որ Սոլեյմանին «չարության մարմնացումն» է, բայց նրան խաղից դուրս քշելը կոնգրեսական որոշման կարիքն ուներ: Սա իհարկե դեմոկրատների պնդումն էր, իսկ հանրապետականները համակարծիք էին նախագահի որոշմանը:

Իսկ Թրամփի որոշման ամենաջերմ պաշտպանն անշուշտ Իսրայելի վարչապետ Բենյամին Նաթանյահուն էր: Քիչ ուշադրություն է դարձվում այն փաստին, որ Վաշինգտոնի քայլը կանխարգելիչ բնույթ ուներ: Այն չեզոքացնում էր մի նոր միջինարեւելյան պատերազմի հնարավորությունը:

Այո, Նաթանյահուն խրված է սկանդալների մեջ: Մեղադրական ակտ է հարուցված նրա դեմ, իսկ նախընտրական արշավում ունի ուժեղ մրցակից՝ հանձին Բեննի Գանցի: Ենթադրվում է, որ Նաթանյահուն պատրաստվում էր հարձակվել Իրանի միջուկային զինապահեստների վրա, տարածաշրջանում մի նոր պատերազմ հրահրելու հեռանկարով, այն պատճառաբանությամբ, որ Թեհրանի համար Իսրայելը ավելի մոտիկ ու հեշտ թիրախ է, քան Վաշինգտոնը: Այնպես որ, կարելի է ասել, թե Մ. Նահանգների պատերազմի հրձիգները իրենց վրա վերցրեցին կացությունը փրկելու կամ վերահսկելու պատասխանատվության բեռը: Այս մասին, իհարկե, շատ չի շրջանառվում լրատվամիջոցներում:

Միջազգային հանրության հակազդեցությունը միանշանակ չէր: Նույնիսկ Ամերիկայի ամենամոտիկ դաշնակիցը՝ Բրիտանիան, պահպանելով հանդերձ զորակցությունը Վաշինգտոնին, մտահոգություն հայտնեց հետեւանքների վերաբերյալ: Ռուսաստանի արտգործնախարարության խոսնակ **Մարիա Զախարովան**, զսպվածության կոչ անելով, կատարվածը բնութագրեց որպես «ցինիկ մեքենայություն»: Իսկ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար **Անտոնիո Գուտերեշը** խորհուրդ տվեց կողմերին խուսափել իրավիճակի թեժացումից:

Չինաստանի հակազդեցությունը մեղմ էր: Արտգործնախարարը պարզապես բարձրաձայնեց ՄԱԿ-ի զգուշավոր մոտեցումը: Լսվեց նաեւ Երեւանից վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** հայտարարությունն այն մասին, որ Հայաստանը բարեկամական հարաբերություններ ունի ինչպես Մ. Նահանգների, այնպես էլ Իրանի հետ: Բարձրաստիճան պաշտոնյաները հատուկ նիստ գումարեցին եւ երկրի զինված ուժերը զգաստ վիճակում պահեցին:

Գերմանիայի **Անգելա Մերկելը** որոշեց ուղեւորվել Մոսկվա, հավանաբար նախագահ Վլադիմիր Պուտինի միջնորդությունը հայցելու համար, քանի որ Ռուսաստանը լավ հարաբերություններ ունի Իրանի եւ Միջին Արեւելքում նրա թշնամիների (ինչպիսիք են Արաբական Միացյալ Էմիրությունները, Սաուդյան Արաբիան եւ Իսրայելը) հետ:

Նման խառնաշփոթ ժամանակներում է, որ անակնկալ մեքենայություններ հաճախ տեղի են ունենում, իսկ Թուրքիան միշտ պատրաստ է միջազգային արկածախնդրությունների՝ հանուն մի քանի քար ավելացնելու իր օսմանյան ծրագրերին:

Չնայած Թուրքիան եւ Ռուսաստանը համագործակցում են Սիրիայում, եւ Անկարան, ի հեճուկս Վաշինգտոնի, համարձակվում է գնել ռուսական S-400 պաշտպանական հրթիռային համակարգեր, երկու երկրները պատմականորեն մրցակիցներ են եղել տարածաշրջանում Իրանի հարցում, եւ այդ մոտեցումը շարունակվում է մինչ այսօր: Թուրքիան իր ուժերն է կենտրոնացնում Ադրբեջանում, մասնավորապես Նախիջեւանում, մի բան, որ ունի իր ճյուղավորումները տարբեր ուղղություններով:

Որեւէ դիտորդ կարող է նկատել, որ Թուրքիայի նման քայլը ինքնանպատակ է եւ ծառայում է լոկ իր շահերին: Բայց Ռուսաստանը դրան նայում է իր պատմական կոնտեքստում, իսկ ՆԱՏՕ-ի ծրագրերը մշակողները գտնում են, որ դա երկակի խաղ է, քանի որ Թուրքիայի ներկայությունը այնտեղ՝ Իրանի շեմին, մի կողմից ձեռնտու է իրենց, որպես դաշնակցի, իսկ մյուս կողմից ծառայում է Ռուսաստանի հնարավորությունները սահմանափակելուն:

Այս բոլորի լույսի ներքո, Կրեմլի հավաստիացումները, որ կկրկնապատկի Գյումրիի իր ռազմաբազային մարտունակությունը, այնքան էլ ցնծության առիթ չպետք է լինի, քանի որ դրա նշանակությունը շատ ավելի հեռուն է գնում, քան Հայաստանի պաշտպանությունն է: Պատերազմական իրավիճակի պարագայում դրա առկայությունը երկիրը (Հայաստանը) առաջնային թիրախ է դարձնում տարածաշրջանային խաղի մասնակիցների համար:




Մինչ համաշխարհային լրատվության ուշադրությունը կենտրոնացած է Վաշինգտոնի եւ Թեհրանի միջեւ թշնամական հարաբերությունների համեմատական սառեցման վրա, Թուրքիայի հաջորդ մեքենայությունը նրան դարձյալ Կիպրոս է հասցրել: Բավական չէր, որ ինքնիշխան պետության տարածքի 38 տոկոսին տարիներ շարունակ գրավյալ է պահում, Թուրքիան այժմ էլ իրավական պահանջ է ներկայացնում տիրանալու այդ նույն տարածքի արեւելյան առափնյա մասում գտնվող նավթի եւ գազի պաշարներին: Նա նաեւ մտադիր է ռազմակայան կառուցել Կիպրոսում:

Մյուս կողմից Օսմանյան կայսրության վերականգնման մարմաջը նրան տարել է Լիբիա, որն այժմ, այն բանից հետո, երբ ՆԱՏՕ-ի ուժերը կործանեցին երկրի կայուն կառավարությունը, դարձել է զոհը պատերազմի հրձիգների եւ որջը՝ իսլամիստ ծայրահեղական զորքերի:

Լիբիան մինչեւ 1912 թվականը, երբ անցավ Իտալիայի տիրապետության տակ, մաս էր կազմում Օսմանյան կայսրության: Այժմ Անկարան ցանկանում է տիրանալ նաեւ այդ տարածքի գազի ու նավթի պաշարներին: Այդ նպատակով Թուրքիան զորք է ուղարկում Տրիպոլի՝ պաշտպանելու համար հակառակորդ խմբավորումներից մեկին եւ նրա հետ համաձայնագիր կնքելու՝ նախքան, որ այդ երկիրը վերակազմավորվի՝ խմբավորումների միավորման հետեւանքում: Թուրքիան սիրում է պղտոր ջրում ձուկ որսալ:

**Սեթ Ջ. Ֆրանցմանը** «Ջերուսալեմ փոստի» հունվարի 1-ի համարում գրել էր. «Թուրքիայի արկածախնդրության ետեւում ռազմական ուժն ու քաղաքական կամքն է: Անկարան իր նավատորմն էր ուղարկել (ի ցույց տալով իր դրոշն ու հզորությունը) հորատումներ կատարելու Կիպրոս կղզու շուրջ: Թուրքիան ստորջրյա հրթիռներ ունի, բայց նաեւ նոր հորատող նավեր է գնում: Կիպրոսը կարծում էր, որ առաջ է անցել այդ հարցում պայմանագրեր ստորագրելով 2003-ին՝ Եգիպտոսի, 2007-ին՝ Լիբանանի եւ 2010-ին՝ Իսրայելի հետ, բայց Թուրքիան այժմ մարտահրավեր է նետում»: Թուրքիան նաեւ Հունաստանին է զայրացնում պնդելով, որ իր առափնյա հորատման իրավունքներն ավելին են, քան հունական կղզիներինը:

Նախագահ **Թրամփն** զգուշացրել էր Թուրքիային, որ զորք չուղարկի Լիբիա, բայց նրա զգուշացումները, ինչպես քրդերին չսպանելու իր նախորդ զգուշացումները, ոչ մի արժեք չունեն: Եգիպտոսն իր նավատորմը կազմ ու պատրաստ վիճակում է պահում, բայց եգիպտական բանակը չի կարող մրցել թուրքականի հետ: Մ. Նահանգները, ճիշտ է, զինում է իր դաշնակիցներին, նրանց թվում նաեւ Եգիպտոսին, բայց միայն այն աստիճան, որ հնարավոր լինի վախեցնել տարածաշրջանային իրենց թշնամիներին, բայց ոչ երբեք գերազանցի Իսրայելի ռազմական հզորությանը Միջին Արեւելքում:

Էրդողանը նաեւ մեկ այլ արկածախնդրությանն է հետամուտ լինում, որն ունի միջազգային ենթատեքստ: Փորձելով վերակենդանացնել օսմանյան երազանքը, նա ձգտում է գերազանցել Աթաթուրքի ժառանգությունը եւ Թուրքիային պարգեւել համաշխարհային նվաճումների դափնեպսակը: Ստամբուլի նոր միջազգային օդանավակայանից եւ նոր կամուրջից հետո, նա ծրագրում է կառուցել «կանալ Ստամբուլը», որն անցնելու է Բոսֆորի նեղուցին զուգահեռ, ըստ հաղորդագրությունների՝ թեթեւացնելու համար Բոսֆորի ծանրաբեռնվածությունը: «Կանալի» կառուցման նախնական արժեքը գնահատվում է 20-ից մինչեւ 75 միլիարդ դոլար: Նախագիծը, որ բացի ներքին խոչընդոտներից, ունի նաեւ միջազգային ենթատեքստեր, ուժգին քննադատության է ենթարկվել ընդդիմադիրների կողմից: Հարցն այն է, որ Բոսֆորում առեւտրանավերի եւ ռազմանավերի անցումը կանոնակարգվում է 1936-ին կնքված Մոնտրոյի կոնվենցիայով: Նոր «կանալի» կառուցման պարագայում խնդիր է առաջանալու վերանայելու այդ պայմանագիրը, որն իր հերթին խնդիրներ է առաջացնելու այդ կոնվենցիան ստորագրած բոլոր երկրների համար: Որոշ դիտորդների կարծիքով դա կարող է սրել ռուս-թուրքական հարաբերությունները եւ անգամ հասցնել հակամարտության:

Թուրքիայի նախկին արտգործնախարար **Ահմեթ Դավութօղլուն** ժամանակին ասել էր, որ Օսմանյան կայսրության հպատակ ազգաբնակչությունը իդիլիական (խաղաղ, անվրդով) հարաբերությունների մեջ էր իրեն տանջող իշխանությունների հետ: Էրդողանը նույն կարծիքին է: Իրականում, այդ արյունահեղ իշխանությունը ամեն ինչ էր բացի իդիլիական լինելուց: Դա կեղտոտ անեծք էր Միջին Արեւելքի եւ Արեւելյան Եվրոպայի բոլոր ժողովուրդների համար, եւ դրա վերակենդանացումը ոչ մի լավ բան չի կարող խոստանալ:

Թարգմ.՝ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Arm. Mirror-Spectator)

# ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի ամենամյա ուղերձը Դաշնային ժողովին

⇨4 Կառավարության նիստին ներկա Վլադիմիր Պուտինը գոհունակություն է հայտնել կառավարության ձեռք բերած արդյունքների կապակցությամբ՝ նշելով, որ ամեն ինչ չէ, որ ստացվել է. «Ամեն ինչը միշտ էլ ամբողջությամբ չի ստացվում», - ասել է նա եւ հույս է հայտնել, որ մոտ ապագայում բոլորի հետ հանդիպումներ կունենա:

Ընդունելով գործադիրի հրաժարականը՝ նախագահ Պուտինը Դմիտրի Մեդվեդեւին առաջարկել է զբաղեցնել Անվտանգության խորհրդի նախագահի տեղակալի պաշտոնը եւ զուգահեռաբար ժամանակավոր կատարել կառավարության ղեկավարի պարտականությունները:

Ռուսաստանի կառավարության ներկայիս կազմը ձեւավորվել է 2018 թվականի մարտին՝ նախագահական ընտրություններից հետո, երբ Պուտինը չորրորդ անգամ ընտրվեց նախագահ:

Մեդվեդեւը նախարարների կաբինետը գլխավորում է 2012 թվականից:

Նույն օրը Վլադիմիր Պուտինը Ռուսաստանի վարչապետի պաշտոնում առաջադրել է **Միխայիլ Միշուստինի** թեկնածությունը:

Վերջինս 53 տարեկան է, անկուսակցական, 2010-ից զբաղեցնում էր Դաշնային հարկային ծառայության ղեկավարի պաշտոնը:

Մինչ պետական համակարգում պաշտոն ստանձնելը Միշուստինը զբաղվել է գործարարությամբ, ղեկավարել ակտիվների կառավարմամբ զբաղվող միջազգային UFG Capital Partners ընկերությունը:

Ժամանակին նա աշխատել է իր մտերիմ ընկերոջ՝ Լեւոն Ամդիլյանի «Միջազգային համակարգչային ակումբ» ՓԲԸ-ում:

AZG NEW SHABAT.QXD 16/01/2020 21:58 Page 6



# Արժանավայել «Պայքարի» արժանապատիվ հաղթանակը







**ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ**

պգդ, պրոֆեսոր

***Վերջերս «Պայքար» թերթը արժանացավ Հայաստանի PR(ՓիԱր) ընկերակցության եւ հաղորդակցության ամենամյա մրցանակաբաշխության դափնեկրի կոչմանը: Որպես այդ հաղթանակում փոքրիկ ներդրում ունեցող թերթի հոդվածագիր, այս պատմական հակիրճ ակնարկով հաճույքով միանում եմ մեծաքանակ շնորհավորանքներին եւ մաղթում հետագա հաղթանակներ:***

❖❖❖

Այն հանրահայտ ճշմարտությունը, թե մամուլը ժամանակի եւ կյանքի հայելին է, լիովին վերաբերում է նաեւ հայ իրականությանը: 1794 թ. սկսած՝ հայ ժողովրդի կյանքում աստիճանաբար կարեւոր դերակատարություն ստանձնող մամուլը հետագայում ոչ միայն դարձավ դրա անբաժանելի մասը, այլեւ շատ դեպքերում վերածվեց հասարակական-քաղաքական եւ գաղափարական վճռական գործոնի: Հատկապես ազգային-ազատագրական պայքարի եւ դրան հաջորդող տասնամյակներում մամուլը դարձել էր այն կարեւորագույն հարթակը, որտեղ բախվում, քննարկվում, բայց ի վերջո նաեւ բյուրեղանում էին տարբեր գաղափարախոսություններ:

Հայկական առաջին՝ «Ազդարար» պարբերականից հետո, աշխարհի տարբեր երկրներում լույս են տեսել շուրջ չորս հազար անուն հայերեն եւ տարբեր լեզուներով հայեցի դիմագիծ ունեցող պարբերականներ: Հայ ժողովրդի ճակատագիրն իր կնիքն է դրել լրագրության բնույթի վրա: Հայ մամուլի 225-ամյա պատմության ընթացքում լույս են տեսել ինչպես քիչ հայտնի, երբեմն թիթեռնիկի կյանք ունեցող, այնպես էլ երկարակյաց, ծանրակշիռ, ասելիքով տարողունակ եւ այդ գործընթացների վրա վճռական ազդեցություն ունեցող պարբերականներ: Դրանցից էին Մխիթարյանների, 1830 50-ական թթ. արեւմտահայ, XIX դարի երկրորդ տասնամյակին ծնված եւ հետագայում հրատարակված արեւելահայ մեծ թվով պարբերականները: Մասնավորապես 1860 80-ական թթ. լույս տեսած Ստ. Նազարյանցի, Հ. Սվաճյանի, Գր. Չիլինկիրյանի, Հ. Պարոնյանի, Ա. Հովհաննիսյանի եւ մյուսների հրատարակած պարբերականները: Անշուշտ, այս ոսկեբույլում հայ ժողովրդին դարավոր ընդարմացումից հանելու գործում իրենց անգնահատելի դերակատարությունն ունեցան Գր. Արծրունին իր «Մշակ»-ով՝ արեւելահայ եւ Մ. Փորթուգալյանն իր «Արմենիա»-ով՝ արեւմտահայ կյանքում: Պարբերականներ, որոնք, հիրավի, դարակազմիկ երեւույթ էին հայ պարբերական մամուլի ողջ գոյության ընթացքում:

Տարբեր ժամանակներում լույս տեսած հայ պարբերականների ամբողջությունը նաեւ մեր պատմության համար առատ կենսաղբյուր է, փաստերի շտեմարան: Իսկ յուրաքանչյուր պարբերական, լինելով այդ ամբողջի մասնիկը, նաեւ իր դեմքն ու գույնն ունի, ասելիքն ու դերակատարությունը: Անկասկած, դրանց թվում են նաեւ հայ հասարակությանն անփոխարինելի ծառայություն մատուցած կուսակցական պարբերականները, որոնք, հաղթանակի նկատմամբ անսասան հավատ ներշնչելով, նախ՝ ազատագրական պայքարի ոգեկոչեցին հայությանը, իսկ այնուհետեւ լծվեցին հայապահպանության սրբազան գործին:

❖❖❖

Սփյուռքահայ մամուլի մասին մեծաքանակ ուսումնասիրություններ են հրատարակվել, սակայն դեռեւս կան զգալի թվով պարբերականներ, որոնց պատմությունը կարոտ է լուսաբանման: Ընդհանրապես մամուլի մասին խոսելիս մենք սովորաբար նշում ենք դրանց ստեղծման թվականը, վայրը, խմբագրերի անունները: Այնինչ զուտ մատենագիտական այդ տվյալներից ավելի կարեւոր է գաղափարախոսական ու թիրախային ասելիքը, որը սփյուռքահայ երկարակյաց թերթերի պարագայում կուսակցական, համայնքային կամ անհատական կենսագրությունից բացի նաեւ ազգի, հայրենիքի ու պետության կենսագրությունն է արձանագրում:

Դրանցից մեկը Ռամկավար Ազատական կուսակցության Ամերիկայի շրջանակի պաշտոնական օրգան, ազգային, քաղաքական եւ գրական «Պայքար» թերթն է, որի պատմությունը կարելի է բաժանել չորս փուլերի:

**Առաջին կամ նախապայքարյան շրջան**՝ երբ թերթը լույս է տեսել «Ձայն հայրենեաց», ապա՝ «Ազգ» եւ «Պահակ» եւ սրանց միավորումից հետո՝ «Ազգ-Պահակ» անուններով: 1899 թ. Գարեգին Չիթճյանը եւ Մխո Շահենը Նյու Յորքում սկսում են հրատարակել «Ձայն Հայրենեաց» անունով թերթ, որը Հայկակ Էկինյանն էր փոխանցել իրենց: Կարճ ժամանակ անց թերթը Նյու Յորքից փոխադրվում է Ուստր, որտեղից էլ՝ Բոստոն, որն այդ օրերին աստիճանաբար սկսել էր դառնալ ամերիկահայության կարեւորագույն կենտրոնը:

Մխո Շահենի թերթից հեռանալուց հետո, Գ. Չիթճյանը թերթը դարձնում է Վերակազմյալ հնչակյան կուսակցության պաշտոնաթերթը: Հետագայում կուսակցության պառակտումների եւ եղբայրասպան ցավալի իրադարձությունների հետեւանքով «Ձայն Հայրենեացը» դադարում է լույս տեսնել: Այդ պատճառով վերակազմյալները Բոստոնում հիմնում են «Ազգ» շաբաթաթերթը, այն նկատելով իբրեւ «Ձայն Հայրենեացի» շարունակություն: Իսկ 1908 թ. սկսում է լույս տեսնել որպես Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության Ամերիկայի շրջանակի պաշտոնաթերթ:

1911 թ. նույն Բոստոնում սկսում է լույս տեսնել Վերակազմյալ հնչակյանների մեկ այլ՝ «Պահակ» շաբաթաթերթը, որն էլ 1921 թ. միանում է «Ազգին»: Որոշ ժամանակ թերթը լույս է տեսնում «Ազգ-Պահակ» միացյալ անունով, իսկ 1922 թ. արդեն՝ «Պայքար» անունով: 1922-1980 թթ. թերթը լույս է տեսել Բոստոնում, ապա Ուոթրթաունում եւ կրկին Բոստոնում: Տարբեր տարիներին թերթի գլխավոր խմբագիրներ են եղել Ա. Նազարը, Ե. Մեսիայանը, Հ. Երվանդը, Ա. Փոլատյանը, Ա. Անդրեասյանը, Ն. Պերպերյանը, Գր. Քյոսեյանը:

**Երկրորդ՝ ամերիկյան կամ նոր շրջան**: Թերթն այս ընթացքում ակտիվորեն լուսաբանել է ամերիկահայ, ինչպես նաեւ սփյուռքի այլ գաղթավայրերի ազգային, կրթական, մշակութային կյանքը, արձագանքել ընդհանրապես հայությանը հուզող խնդիրներին՝ փաստորեն դառնալով XIX դարի վերջին եւ XX դարի 8 տասնամյակների ամերիկահայ կյանքի հայելին ու յուրակերպ տարեգիրը: Շուրջ մեկ դար դրվատելի որակով եւ բարձրարժեք հրապարակումներով ծառայելով Ամերիկայի Արեւելյան ափի հայությանը՝ թերթը միաժամանակ իր աշխույժ գործունեությամբ ու հրատապ ասելիքով ներդաշնակ համագործակցում էր կուսակցության մյուս պաշտոնաթերթերի հետ: «Պայքարը» մշտապես ու անխաթար քարոզել է ՌԱԿ գաղափարախոսությունը, մերժելով կեղծիքն ու օտարամոլությունը՝ տեր կանգնել հայկական արժեքներին, հրատապ հարցերի նկատմամբ Սփյուռքում զգաստ է պահել հայության ժողովրդական զանգվածներին եւ դարձել կուսակցական մտավորականության կարեւորագույն հարթակներից մեկը: Վեր կանգնելով գաղափարախոսական տարբերություններից եւ մերժելով բոլշեւիկների իշխանության տարիներին տեղ գտած անհանդուրժող, կտրուկ եւ բռնի գործելաձեւերը, միաժամանակ ողջունել է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը, հաճախ նյութեր տպագրել խորհրդահայ տնտեսության եւ մշակույթի ձեռքբերումների վերաբերյալ, քաջալերել նրա շինարարական աշխատանքներին օժանդակող կազմակերպությունների (ՀՕԿ, «Հայ կարմիր խաչ», ամերիկահայ հայրենակցական միություններ եւ այլն), ՀԲԸ Միության հայրենանպաստ գործունեությունը:

«Պայքարն» անդրադարձել է նաեւ միջազգային քաղաքական բոլոր կարեւոր իրադարձություններին, քեմալական շարժմանը Թուրքիայում, Հայաստանի Առաջին հանրապետությանն ու դրանում ընթացող գործընթացներին, այնուհետեւ խորհրդային իշխանության հաստատմանը Հայաստանում: Բուռն արձագանքել եւ մեծ թվով հոդվածներ է հրապարակել 1920-1930 թթ. եւ 1946 թ. զանգվածային հայրենադարձության մասին: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թերթը լուսաբանել է հակահիտլերյան խմբակցության ռազմական ձեռնարկները, խորհրդային բանակի հաղթանակները, հայ ռազմիկների եւ սպաների մասնակցությունը պատերազմին, «Ամերիկահայ ազգային խորհրդի» գործունեությունը: Ետպատերազմյան շրջանում «Պայքարը» նպաստել է Հայրենիք-Սփյուռք կապերի զարգացմանը, պարբերաբար նյութեր տպագրել Խորհրդային Հայաստանի տնտեսության, գիտության ու մշակույթի ձեռքբերումների վերաբերյալ, արտատպումներ կատարել խորհրդահայ մամուլից: Թերթի գրական բաժնում տեղ են գտել արեւմտահայ, սփյուռքի, խորհրդահայ, ինչպես նաեւ օտար հեղինակների տարբեր ժանրերի գործեր:

Կարճ ասած՝ չկա այդ տարիների քիչ թե շատ նշանակալի որեւէ իրադարձություն, որին իր բովանդակալից ասելիքով, խորազնին դիտարկումներով եւ ժամանակի մեջ հիմնականում քննություն բռնող եզրահանգումներով ու իրատեսական կանխատեսումներով արձագանքած չլինի թերթը:

Որպես պատմաբան եւ հայ պարբերական մամուլի պատմությանը նվիրված մի քանի աշխատությունների հեղինակ, կարող եմ վստահաբար ընդգծել, որ թերթին թռուցիկ ծանոթությունն անգամ հուշում է, թե որքան ասելիք ու հետազոտության կարոտ հիմնախնդիրներ կան պարփակված դրա էջերում: Վստահ եմ նաեւ, որ մոտ ապագայում այն այլեւս դուրս չի մնա երիտասարդ ուսումնասիրողների տեսադաշտից:

1982 թ. «Պայքարը» վերածվում է շաբաթաթերթի, իսկ 1993 թ.՝ ամսագրի:

**Երրորդ՝ հայաստանյան շրջան**: 1995 թ. թերթը փոխադրվում է Երեւան եւ իբրեւ Ռամկավար Ազատական կուսակցության եռամսյա հանդես լույս է տեսնում մինչեւ 1998 թվականը, Հարություն Կարապետյանի խմբագրությամբ: Թերթի այս տեղափոխումն անմիջական եւ սերտ կապ ուներ Հայաստանի վերանկախացման, Ռամկավար Ազատական կուսակցության հայաստանյան կառույցի՝ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության հիմնադրման եւ դրան հաջորդող այլ կարեւոր իրադարձությունների հետ: Կարճ ժամանակում պարբերականը հասցրեց դառնալ հայ մտավորականներից շատերի գիտամշակութային խոսափողը: Դրա էջերում տեղ գտան հայրենի եւ սփյուռքյան շատ նշանավոր հեղինակների հրապարակումներ: Սակայն օրվա իշխանությունների ոչ այնքան բարեհաճ վերաբերմունքը, տպագրական ծախսերի թանկացումը, ավագ սերնդից շատերի ասպարեզից հեռանալը, հայալեզու ընթերցողների թվի պակասումը, ներկուսակցական որոշ տարաձայնություններն ու հատկապես նյութական միջոցների անբավարարությունը բացասաբար ազդեցին եւ հանդեսը դադարեց լույս տեսնել:

**Չորրորդ՝ ամերիկա-լիբանանյան կամ նորագույն շրջան**: Տեւական ընդմիջումից հետո, ՌԱԿ մի խումբ երկարամյա անդամների եւ հատկապես հայ մամուլի երախտավորներ Երվանդ Ազատյանի եւ Հակոբ Վարդիվառյանի ու նրանց համախոհների ու քաջալերողների ջանքերով 2017 թ. հունվարի 1-ին, որպես Ռամկավար Ազատական կուսակցության պաշտոնաթերթ, «Պայքարը» վերստին սկսեց լույս տեսնել միաժամանակ Լոս Անջելեսում եւ Բեյրութում: Մինչ այդ նույն հարցերը նորից էին ծառացել նախաձեռնության հեղինակների առջեւ. արդյոք նույն դժվարությունները չե՞ն կասեցնի «Պայքարի» վերածնունդին: Բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին Նյու Ջերսիի շրջանում Միջին ու Մերձավոր Արեւելքից եկածների հաշվին զգալիորեն ավելացել էր հայախոսների թվաքանակը, որ թերթի էլեկտրոնային տարածումը հնարավորություն էր ընձեռել բացառել առաքման ծախսերը, որ վճարովի ծանուցումներ հրատարակելու բարձր հավանականություն կա, որը եւս հույս էր ներշնչում, որ հնարավոր դառնա նորածին թերթի անսայթաք ընթացքը, անվարան ձեռնարկեցին թերթի հրապարակումը:

⇨7

AZG NEW SHABAT.QXD 16/01/2020 21:58 Page 7



ՄԱՆՈՒԿ ԱՐԱՄՅԱՆ

# Բյուջեի հարկային եկամուտների խոստացված աճը...

Անցնող տարվա՝ 2019 թ.ի պետական բյուջեի եկամուտների մասին խոսելիս, վարչապետ Փաշինյանն այնքան միմյանց հակասող տվյալներ է հայտնում, որ դժվար է լինում տարբերել իրականությունն ու կեղծիքը: Դրանցից վերջինը դեկտեմբերի 31-ին ամանորյա ուղերձում հրապարակված ցուցանիշն էր, ըստ որի «2019 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտները գերակատարվել են ավելի քան 100 միլիարդ դրամով»: Սա այն դեպքում, երբ դրանից ընդամենը մեկ շաբաթ առաջ գրառում էր կատարել, որ «դեկտեմբերի 23-ի դրությամբ, 2019 թվականի պետական բյուջեն գերակատարվել է 89 միլիարդ դրամով»: Հարց կարող է առաջանալ, թե մի՞թե հնարավոր չէ մեկ շաբաթվա ընթացքում 11 մլրդ դրամ լրացուցիչ հարկային եկամուտ հավաքել: Պատասխանը միանշանակ է՝ եթե ամեն ինչ լինի օրինականության սահմաններում, ապա միանշանակ ո՛չ:

**Բանն այն է, որ բոլոր հարկերի վճարումները կատարվում են մինչեւ հաջորդ ամսվա 20-ը: Այսինքն, դեկտեմբերի 23-ին՝ Նիկոլ Փաշինյանի գրառման օրը, այլեւս բոլոր հարկերը մուծված պետք է լինեին:** Սա նշանակում է, որ կա՛մ տարեվերջին մի քանի խոշոր հարկատուներից պահանջելու են մի քանի միլիարդ դրամ փոխանցել բյուջե՝ հետագա ամիսներին վերադարձնելու համար, ինչպես դա արվեց նախորդ տարվա վերջին՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հետ, կա՛մ Նիկոլ Փաշինյանը պարզապես կլորացրել է գումարը՝ «11 մլրդ դրամ այս կողմ կամ այն կողմ, էական չէ» տրամաբանությամբ:

Մեկ այլ հետաքրքրական հանգամանք, որ տարեվերջին ոչ մի կերպ չի նշել վարչապետը: Տոկոսային առումով որքա՞ն են ավելացել հարկային եկամուտները: Չէ՞ որ տարվա առաջին կեսի տվյալները ներկայացնելիս, նա իր ֆեյսբուքյան էջում գրել էր հարկային եկամուտների 25 տոկոսից ավելի գերազանցման մասին, ասելով, որ դա համապատասխանում է իր այն խոստմանը, որ բյուջեի եկամուտները մեկ-երկու տարում կավելացնի մեկ երրորդով: Մոռացե՞լ է իր հերթական խոստման եւ մի քանի ամիս առաջ կատարած գրառման մասին Նիկոլ Փաշինյանը: Ոչ իհարկե, պարզապես նրա համար խոստումներ շռայլելն ու դրանք «մոռանալը» կենսակերպ է: Եվ քանի որ առայժմ ոչինչ չի ասել, թե քանի՞ տոկոսով են այս տարվա եկամուտները գերազանցել անցած տարվա եկամուտներին, ներկայացնենք այս պահին հրապարակված վիճակագրական կոմիտեի տվյալները 2019 թ.-ի հունվար-նոյեմբեր ամիսների վերաբերյալ:

Համաձայն այդ հրապարակման, 2019 թ.-ի հունվար-նոյեմբերին հարկային եկամուտները կազմել են 1 տրլն 304 մլրդ դրամ, 2018 թ.-ի նույն ժամանակահատվածում՝ 1 տրլն 104 մլրդ դրամ: **Աճը կազմել է 19 տոկոս, այլ ոչ թե 25 տոկոս կամ մեկ երրորդ, ինչպես խոստացել էր վարչապետը: Ուշագրավ է նաեւ, թե ինչո՞վ է պայմանավորված այս աճը:**



Հիշեցնենք, որ այս տարի Հայաստան է ներմուծվել աննախադեպ քանակությամբ՝ մոտ 200 հազար ավտոմեքենա, քանի որ ավարտվում է նախկին մաքսատուրքերով ներմուծելու այն արտոնությունը, որ Հայաստանը ձեռք էր բերել ԵԱՏՄ մտնելիս՝ 2015 թ.ին: Բյուջեի եկամուտների գերակատարումը բացառապես նախկին իշխանության շնորհիվ ձեռք բերված ավտոմեքենաների ներմուծման արտոնության արդյունք է: Ըստ ՊԵԿ նախագահի, երբ Հայաստան ներմուծված մեքենաների թիվը մոտ 114 հազար էր, դրանից պետական բյուջե գանձվել էր մոտ 51 մլրդ դրամ: Համապատասխանաբար՝ 200 հազարի դեպքում գանձվող գումարն էլ ավելանում է մոտ 43 մլրդ դրամով: Արդյունքում, միայն մեքենաների ներմուծման շնորհիվ բյուջե է մտել մոտ 94 մլրդ դրամ հավելյալ գումար:

**Այսինքն, ստացվում է, որ բյուջեի գերակատարում կոչվածը գրեթե ամբողջությամբ տեղի է ունեցել մեքենաների ներմուծման կտրուկ աճի շնորհիվ, որի հետ այս իշխանությունն առնչություն չունի, բայց հպարտանում է դրանից ստացվող բյուջետային եկամուտներով:** Մյուս կողմից էլ նախորդ տարվա համեմատ 210 մլրդ դրամ ավելի հարկային եկամուտների հավաքման գրեթե կեսը, մոտ 45 տոկոսը, պայմանավորված է դարձյալ այս գործոնով: Մնացած հավելյալ մուտքերի վերաբերյալ պետք է նշել, որ նմանատիպ աճեր գրանցվել են նախկինում եւս, եւ տարեց տարի պետական բյուջեի եկամուտները տասնյակ միլիարդավոր դրամներով, իսկ երբեմն նաեւ 100 մլրդ դրամը գերազանցող գումարներով ավելացել են: Օրինակ 2007-ին՝ 148 մլրդ դրամով, 2008-ին՝ 198 մլրդ դրամով, 2011-ին՝ 100 մլրդ դրամով եւ այլն:

Ինչպես արդեն նշեցինք, ներկա պահին հայտնի են միայն անցած տարվա 11 ամիսների պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքման ցուցանիշները: Տարեկան ցուցանիշները կհրապարակվեն մեկ ամսից: Սակայն ակնհայտ է, որ դրանց խոստացված մեկ երրորդ աճը այդտեղ չի լինելու, իսկ եղած աճի մոտ կեսը պայմանավորված է մի գործոնով, որտեղ Նիկոլ Փաշինյանի կառավարությունը որեւէ դերակատարում չունի:

# Արժանավայել «Պայքարի» արժանապատիվ...

⇨6 Անչափ կարեւոր էր նաեւ այն, որ հայկական որակյալ նոր թերթի հրատարակությունը իր ներդրումը պիտի կատարեր արեւմտահայերենի պահպանման կենսականորեն անհրաժեշտ եւ կարեւոր հարցում:

Նպատակի հստակ գիտակցումով եւ դեպի այն անեւեր ու հավատով լեցուն ընթացք ապահովելով, ինչպես նաեւ ներդրած ջանքերի ու իրենց գործի արհեստավարժ խմբագրակազմի բեղուն աշխատանքի շնորհիվ շատ կարճ ժամանակում շաբաթաթերթը դարձավ սփյուռքահայ մտավորականության ամբիոնը, ռամկավար եւ ոչ ռամկավար մտավորականների, պատմաբանների, հասարակագետների, քաղաքագետների, մշակութային ու կրթական մշակների, գրողների եւ արվեստագետների հանդիպման վայրը՝ ապացուցելով, որ արդար ու տեղին էր 118 տարեկան «Պայքարին» երրորդ շնչառություն տալու նախաձեռնությունը: Իրավի, զինվորագրյալների այն թիմը, որն իրականություն դարձրեց այդ ազգանվեր առաքելությունը, միանգամայն արժանի է գնահատանքի, իսկ յուրաքանչյուր գիտակից հայի պարտքն է՝ բոլոր միջոցներով սատարել թերթին, որպեսզի ակնթարթային չլինի այս վերածնունդը եւ հարատեւ լինի ընթացքը: Շտկվեց նաեւ այն սխալը, որ մինչ այդ, հատկապես հրապարակախոսական մեծ ավանդույթներ ունեցող լիբանանահայ գաղութում, չնայած մինչ այդ գործող ռամկավար «Զարթօնք», հնչակյան «Արարատ», դաշնակցական «Ազդակ» եւ այլ կուսակցական թերթերի առկայությանը, սակայն սփյուռքահայ բազմաթիվ մտավորականներ, զրկված էին ազատ ամբիոն ու խոսափող ունենալու հնարավորությունից, իսկ ՌԱԿ-ը՝ պատվարժան պարբերական ունենալուց:

Այնպես որ, շատ արագ «Պայքարը» գրավեց իր արժանի տեղը սփյուռքահայ մամուլի պատվարժան ընտանիքում: Մի բան, որը ուրախացրեց շատերին, սակայն շարժեց նաեւ ոմանց նախանձը: Արդյունքում Լիբանանի արաբական «Ալ Նաշրա» կայքում «Պայքար» շաբաթաթերթի դեմ տեղադրվեց մի զրպարտագիր, վերջինիս վերագրելով ներլիբանանյան համակեցությունը խաթարելու, մամուլի մասին լիբանանյան օրենքը խախտելու, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի նկատմամբ թշնամանք հրահրելու, նույնիսկ Հայաստանի Հանրապետության դեմ հակաքարոզչություն կատարելու եւ բարեկամ երկու երկրների միջեւ հարաբերությունները վատթարացնելու վերաբերյալ «մահացու» մեղքեր: Այնինչ, «Պայքարի» մինչ այդ լույս տեսած 42 համարների բովանդակությունը լիովին հակառակն էին ապացուցում: Ուստի միանգամայն բնական էր, որ չնայած որոշ փոքրոգիների թափած ջանքերին, խնդիրը շատ արագ հարթվեց եւ «Պայքարը» հանդարտ ու հաստատակամ շարունակեց իր ազգաշահ երթը:

Մերօրյա համաշխարհայնացման գործընթացների ու էլեկտրոնային լրատվամիջոցների բազմազանության մեջ «Պայքարն» ասպարեզ վերադարձավ իր առաքելությանը եւ ՌԱԿ-ի գաղափարախոսությունը համայն հայությանը հասցնելու հստակ գիտակցությամբ: Խիստ պատվավոր մի ընթացք, որը պետք է ապահովի գործին քաջատեղյակ, այդ ասպարեզում բեղմնավոր ճանապարհ անցած եւ ճիշտ ընտրված խմբագրակազմը՝ պատասխանատու խմբագիր՝ Երվանդ Ազատյանը, գործադիր խմբագիր Հակոբ Վարդիվառյանը, դոկտ. Հարություն Արզումանյանը, Հակոբ Ավետիքյանը, Պայծիկ Գալաճյանը, Զավեն Գրիգորյանը, Վաչե Սեմերճյանը:

Լավագույնս գիտակցելով, որ մեր օրերում տպագիր մամուլը որոշ նահանջ է ապրում, խմբագրակազմն իրավացիորեն որոշել է միաժամանակ հրապարակել նաեւ թերթի էլեկտրոնային տարբերակը, որով այն հասանելի է դարձել աշխարհասփյուռ հայությանը: Ինչպես նաեւ իր ձայնն է հնչեցնում հօգուտ հայանպաստ գործերի եւ որպես ՌԱԿ-ի գաղափարական պատգամախոս, անկասկած իր նպաստավոր ազդեցությունը կունենա կուսակցության վերակառուցման եւ հիմնովին առողջացման գործընթացներում: Գաղտնիք չէ, որ տեղեկատվության պակասի կամ միակողմանիության հետեւանքով, երբեմն կուսակցական շրջանակները հայտնվում են թյուր իրողության շրջապտույտներում: Հենց այդպիսի թյուրիմացություններից խուսափելու, կուսակցության գաղափարախոսությունն ու գործելակերպը ճիշտ ներկայացնելու անհրաժեշտության ըմբռնումով է խմբագրակազմը ճանապարհ դուրս եկել:

Բոլորովին պատահական չէր, որ ՌԱԿ-ի տարբեր կառույցներ, մի շարք պարբերականներ եւ էլեկտրոնային կայքեր, կուսակցության երախտավորներ եւ մտավորականներ, ինչպես նաեւ տողերիս հեղինակը, ժամանակին ողջունեցին կուսակցության գաղափարական պատգամախոս «Պայքարի» սպասված վերադարձը, բարի երթ մաղթեցին եւ հույս հայտնեցին ու հավատացին, որ այն ազնիվ ու անզիջում կպայքարի ստի ու խաբեության, հոսոսական դրսեւորումների, ազգավնաս ու կուսակցադավ բոլոր դրսեւորումների դեմ, վեհանձնորեն կիրականացնի գաղափարական առաքյալի իր դերը՝ զգաստ կպահի զանգվածներին հայության հրատապ հարցերի նկատմամբ, ինչպես նախկինում է արել: Նախկին եղեռնվածի ու խեղճի փոխարեն՝ կներկայացնի սեփական ուժեղ պետության տիրոջ եւ պահանջատեր ժողովրդի դիմագիծը: Որպես ամենամոտ ապագայում հիմնովին առողջ ու միասնական կուսակցության պաշտոնաթերթ՝ կարեւոր դերակատարություն կունենա մեզ նետված մարտահրավերներին արժանիորեն պատասխանելու եւ նշագծելու այն ուղիները, որոնցով հայ ժողովուրդը կկերտի նորանոր հաղթանակներ:

«Պայքարը» պիտի պայքարի, որ Հայաստանը եւ համայն հայությունը դիմագրավեն մեզ առաջադրված բազմաբնույթ մարտահրավերներին, որոնք թեեւ «թավշյա հեղափոխությունը» եկավ լուծելու, սակայն Արցախի, սոցիալ-տնտեսական, արտագաղթի եւ բազմաթիվ այլ հիմնախնդիրներ օր առաջ դեռեւս լուծման կարիք ունեն: Այսպես՝ տակավին հայրենի իշխանությունները գործնականում լիովին չեն որդեգրել ժողովրդից, ժողովրդի հետ եւ ժողովրդի համար գործելաձեւը, ամբողջովին չի դադարել երկիրը հյուծող արտագաղթը, դժվարություններ կան Հայրենիք-Սփյուռք եւ Հայաստան-Արցախ հարաբերություններում եւ այլն: Իսկ Հայաստանում եւ Սփյուռքում գործող կազմակերպությունները, եկեղեցին, Բարեգործականը, կուսակցական եւ մշակութային միությունները այդ խնդիրներն ու իրենց հուզող զանազան հարցեր վերլուծող, լուծումներ առաջարկող, հավասարակշռված եւ վստահություն ներշնչող գաղափարախոսական առողջ եւ թարմ ասելիք ունեցող պարբերականի կարիք ունեին: Այդ դերակատարությունն ստանձնել եւ ՌԱԿ մամուլի հնաբնակների հետ փորձում է լուծել «Պայքար» թերթը, որն առողջ ու թարմ շունչ բերեց եւ իր բարերար ազդեցությունն ունեցավ հայության կյանքում: Ուստի միանգամայն օրինաչափ էր, որ կարճ ժամանակում «Պայքարի» այդ առողջ պայքարը եւ իր ազգանվեր առաքելության ճիշտ գիտակցումն ու կատարումը միանգամայն արժանիորեն արժանացավ հայկական PR(ՓիԱր) ընկերակցության եւ հաղորդակցության ամենամյա մրցանակաբաշխության դափնեկրի կոչման:

Մրցանակաբաշխություն, որի նպատակն է բարձրացնել ու կարեւորել հանրային կապերի մասնագետի դերը, խրախուսել հաղորդակցության կառավարման նոր մեթոդներն ու ճարտարագիտական նորարարական կիրառումները, ինչպես նաեւ արձանագրել ոլորտում առկա բացթողումները: Դեկտեմբերի 19-ին տեղի ունեցած մրցանակի հանձնման արարողությանը ներկա էին Հայաստանի շատ մտավորականներ, հանրային կապերի մասնագետներ ու քաղաքական գործիչներ: Մրցանակը «Պայքար» շաբաթաթերթի Լիբանանից խմբագրակազմի անդամ Պայծիկ Գալաճյանին հանձնեց Հայկական PR(ՓիԱր) կազմակերպության նախագահ Աստղիկ Ավետիսյանը: Նա իր շնորհավորական ելույթում նշեց, որ արդեն անընդմեջ չորրորդ տարին է Հայկական PR(ՓիԱր) ընկերակցությունը պարգեւատրում հանրային կապերի եւ հաղորդակցության լավագույն ծրագրերի ու գաղափարների հեղինակներին:

Սիրով միանում ենք բոլոր շնորհավորանքներին եւ մաղթում անխափան երթ մեդիա դաշտում, ավելի լուրջ ձեռքբերումներ եւ նորանոր հաղթանակներ:

ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ
Անվտանգության հարցերով փորձագետ

# Խռովարարների պատկերները

2019 թ. դեկտեմբերի 20-ին «**Ազգ**» շաբաթաթերթի 48 -րդ համարում լույս էր տեսել Արեւիկ Քեշիշյանի «Թուրքական գլուխկոտրուկներ Միջերկրական ծովում» հոդվածը, որտեղ տրված էր լավ վերլուծություն, թե ինչ է փնտրում Անկարան արեւելյան Միջերկրածովում՝ նոր ծովային գոտիներ սահմանազատելիս եւ Լիբիայի ազգային համաձայնության կառավարության հետ հուշագիր ստորագրելուց հետո:

Վերոհիշյալ կառավարությունը ղեկավարում է Ֆայիզ Սարաջը, որի հսկողության տակ է մայրաքաղաք Տրիպոլին եւ երկրի արեւմտյան մասը: Թուրքիան փորձում է խառնվել Լիբիայի ներքաղաքական իրադարձություններին եւ, փաստորեն, մասնակցել այդ պետության քաղաքացիական պատերազմին՝ պաշտպանելով Սարաջի կառավարության շահերը:

Եվ այսպես, ով է **Ֆայիզ Մուստաֆա ալ-Սարաջը**, ծնված 1960 թ. փետրվարի 20-ին Տրիպոլիում: Լիբիայի քաղաքական եւ պետական գործիչ, դավանում է իսլամ, Ազգային համաձայնության կառավարության վարչապետ, նախագահական խորհրդի ղեկավար: Ավարտելով Ալ- Ֆատեհի համալսարանը (ներկայումս Տրիպոլիի համալսարան) եւ ստանալով ճարտարապետության բակալավրի աստիճան, նա սկսել է իր աշխատանքային կարիերան Լիբիայի բնակարանային շինարարության նախարարությունում դեռեւս նախագահ Մուամար Քադդաֆիի ժամանակաշրջանում: 1999 թ. Ֆայիզ Սարաջը ստացել է մագիստրոսի աստիճան վարչարարական աշխատանքի ոլորտում:

2015թ. հոկտեմբերի 9-ին երկրում հաստատվեց ազգային միասնության կառավարություն կազմելու մասին որոշում եւ Լիբիայում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը՝ **Բեռնարդինո Լեոն**, նույն օրը հայտարարեց, որ վարչապետ է նշանակվում Ֆայիզ Սարաջը:

**Ծանոթագրություն**: 2011թ. փետրվարին Լիբիայում սկսվեցին ժողովրդական հուզումներ, խռովություն, որը վերածվեց պատերազմի, որն էլ իր հերթին՝ Լիբիայի ղեկավար Մուամար Քադդաֆիի ռեժիմի տապալման եւ վերջինիս սպանության պատճառ հանդիսացավ: Լիբիան պառակտվեց երկու հակամարտող ճամբարների՝ իսլամամետ իշխանությունը տեղաբաշխվեց մայրաքաղաք Տրիպոլիում եւ երկրի արեւմուտքում, իսկ նրա հակառակորդները, համաշխարհային ընկերակցության կողմից ճանաչված ժամանակավոր կառավարությունը իր վերահսկողության տակ վերցրեց երկրի արեւելքը Տոբրուկ կենտրոնով: Այդ կառավարությունը ղեկավարում է **Աբդուլլահ Աբդուռահման աս-Թանիին**, որի դաշնակիցն է հանդիսանում ֆելդմարշալ **Խալիֆա Հավթարը**, ազգային բանակի հրամանատարը: Նման քաոսային իրավիճակում, երկրում իհարկե գլուխ բարձրացրին ծայրահեղականները, ահաբեկիչները, այդ թվում եւ «Իսլամական պետությունը»: 2014 թվականից Լիբիան լքել են ավելի քան 440 000 բնակիչներ, իսկ ավելի քան 100 000 մարդ ապրում է «բաց երկնքի» տակ կամ դպրոցների, պահեստների եւ այլ շինություններում:

Եվ այսպես, Ֆայիզ Սարաջը հանդիսանում է թագավորական նախարար Մուսթաֆա Սարաջի որդին: Մուստաֆա Սարաջը ժամանակին Լիբիայի հողերը վաճառում էր իտալացի գաղութաբնակներին, ավելին՝ երբ իտալական ֆաշիստ, դիկտատոր Բենիտո Մուսոլինին 1937 թվականին այցելեց Լիբիա, վերջինս ուղեկցում էր նրան՝ բռնելով նրա ձիու սանձը: Այդ ժամանակ Լիբիան ղեկավարում էր մարհոնետային թագավոր Իդրիսը, որի ռեժիմը տապալեց գնդապետ Մուամար Քադդաֆին:

Եվ այսպես, Լիբիայի ժողովրդին եւ համաշխարհային հանրությանը մեծ ընտրություն չի տրված. կա՛մ Տրիպոլին եւ Ազգային համաձայնության կառավարությունը (Ֆայիզ Սարաջի գլխավորությամբ), որին ճանաչում է ՄԱԿ-ը եւ որի ետեւում կանգնած են Թուրքիան, Քաթարը, «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը, կա՛մ ժամանակավոր կառավարությունը Տոբրուկում: Այս կառավարությունը ղեկավարում է ֆելդմարշալ Խալիֆա Հավթարը, որին մի շարք ձախողումներից հետո էլ դեռ ակտիվորեն աջակցում են սաուդցիները, Միացյալ Արաբական Էմիրությունները, Եգիպտոսը եւ այդ պետություններին միացած Ռուսաստանը՝ իր «Վագներ» մասնավոր ռազմական ընկերության մարտիկներով (մոտ 2000 հոգի):

Այժմ տեսնենք, թե ով է Իսլամ դավանող, Թուրքիայի եւ «Մուսուլման եղբայրների» պրոտեկցիային արժանացած Ֆայիզ Սարաջի հակառակորդը:



*Ֆայիզ Սարաջը (ձախից) եւ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը*

Դա Արեւելյան Լիբիայի գլխավոր հրամանատար, ռազմական խորհրդի նախագահ, պրոֆեսիոնալ զինվորական Խալիֆա Հավթարն է, որի կենսագրությունը եւ անցած ճանապարհը կարող են հիմք ծառայել մի շարք դետեկտիվ կամ լրտեսական վեպեր գրելու համար: Հավաստացած եղեք, այդ վեպերը շատ արագ կվաճառվեին:

Հավթարը ծնվել է 1943 թ. Լիբիայի Բենգազի քաղաքից ոչ հեռու Աջդաբիա քաղաքում, ծագումով Ալ-Ֆարջան ցեղից է, նա իր երիտասարդ տարիներին ընտրեց Մերձավոր Արեւելքում եւ Ասիայում ամենահարգված եւ սոցիալական բարձունքների հասցնող ամենաարագ ուղին՝ զինվորական ծառայությունը: Փայլուն կերպով ավարտել է Բենգազիի ռազմական քոլեջը, որտեղ ի դեպ հրահանգիչները եւ դասախոսները արագ նկատեցին ապագա հրամանատարի ընդունակությունները ռազմական մարտավարությունը ծրագրելու ոլորտում: Քոլեջն ավարտելուց հետո՝ Հավթարը շարունակեց իր զինվորական կրթությունը Եգիպտոսում, իսկ հետո՝ Խորհրդային Միությունում: Երբ նա վերադարձավ Տրիպոլի, Լիբիան ամբողջովին կլանված էր «արաբական սոցիալիզմի» կողմնակից Գամալ Աբդել Նասերի (Եգիպտոսի այդ ժամանակվա նախագահի) գաղափարներով. պետականաշինության գործում բանակի առանցքային դերի առաջքաշում, ավտորիտարիզմ եւ «քաղաքական իսլամի» եւ հատկապես «Մուսուլման եղբայրների» դեմ անհաշտ պայքարի մղում: Ահա նրա կրեդոն, որին գրկաբաց սպասում էին Լիբիայի երիտասարդ սպայական կազմում: Սպայական կազմ, որը երազում էր եգիպտական, սիրիական եւ իրաքյան հեղափոխությունների «ներմուծում» Լիբիա:

Պատահական չէ, որ Հավթարը 1969թ. սեպտեմբերի 1-ին հայտնվեց կապիտան Մուամար Քադդաֆիի կողքին, որը երկրում հեղաշրջում կազմակերպեց: Ըստ որոշ տվյալների, հեղաշրջման ամբողջ ծրագիրը մշակել էր անձամբ Հավթարը: «Նա իմ որդին է, իսկ ես նրա հոգեհայրը», ասուլիսներից մեկի ժամանակ հայտարարեց **Քադդաֆին**:

Այնուհետեւ նորից ուսում Խորհրդային Միությունում, նորից վերապատրաստում «Ֆրունզեի» անվան ռազմական ակադեմիայում, ֆունդամենտալ ռազմական գիտելիքների ձեռք բերում եւ այս անգամ արդեն որպես Լիբիայի արաբական ջամահիրիայի հեղափոխական առաջնորդ Քադդաֆիի մտերմիկ բարեկամ: Պատկերացրեք ինչպես էին նրան ընդունում Խորհրդային Միության բարձրաստիճան զինվորականները եւ հատկապես խորհրդային հետախուզությունը: Խորհրդային Զինված ուժերի Գլխավոր հետախուզական վարչությունը «աչքաթող» չէր անի որեւէ օտարերկրյա քաղաքացու, որը սովորում էր իր երկրի ռազմական ուսումնական հաստատություններում: Ավելորդ է նշել, թե ինչ ռազմական վերելք ունեցավ Հաֆթարը Լիբիա վերադառնալուց հետո:

1973 թ. հոկտեմբերին Հաֆթարը իր զորախմբով, որը տեղաբաշխված էր Եգիպտոսում, անմիջական մասնակցություն ունեցավ արաբա-իսրայելական պատերազմում (այդ պատերազմում ոչ-ոք չհաղթեց):

Այդ պատերազմում նա աչքի ընկավ որպես վճռական եւ ագրեսիվ հրամանատար: Երբեւիցէ մարտական գործողությունների մասնակցած զինվորականները լավ կհասկանան, թե ինչ է նշանակում նման բնութագիրը:

Սակայն ձախողումներն ու անկումը գեներալի կյանքում սկսվեցին Լիբիա - Չադ 1978-1987 թթ. պատերազմի ընթացքում: Քադդաֆին իր գլխապտույտ հաջողություններից ելնելով, որոշեց Չադ «արտահանել» լիբիական հեղափոխությունը, իսկ այնուհետեւ՝ ամբողջ Աֆրիկա: Սակայն այստեղ էր, որ Քադդաֆին եւ վերջինիս գլխավոր ռազմական ստրատեգը սխալվեցին: Պատերազմն ընդդեմ Չադի, իրականում պատերազմ էր ընդդեմ Ֆրանսիայի: Այդ պատերազմում Լիբիան չէր կարող հաղթել:

Վճռական մարտերից մեկի ընթացքում (արդեն Լիբիայի տարածքում), Լիբիան կորցրեց 70 տանկ, 30 զրահամեքենա, 20 ինքնաթիռ եւ ուղղաթիռ, սպանվեցին 1700 լիբիացի զինվորներ եւ սպաներ, 300-ից ավելին հայտնվեցին ռազմագերու կարգավիճակում: Գերի ընկավ նաեւ Խալիֆա Հավթարը: Քադդաֆին այն աստիճան կատաղած էր Հաֆթարի վրա, որ նույնիսկ հրաժարվեց նրան ազատելու բանակցություններից՝ մեղադրելով նրան լիբիական բանակի պարտության մեջ:

Եվ հենց այստեղ էր, որ հայտնվեց մշտապես «արթուն», աչալուրջ եւ ակտիվ ամերիկյան հետախուզությունը ու շփում հաստատեց գերու կարգավիճակում գտնվող գեներալի հետ: Մնացածն արդեն ժամանակի եւ տեխնիկայի հարց էր:

Շուտով Հավթարը եւ նրա կողմնակից սպաներից շատերը հայտնվեցին Քադդաֆիի ռեժիմի դեմ պայքարող ընդդիմության՝ «Լիբիայի Ազգային փրկության ճակատի» շարքերում: 1993 թ. Լիբիայում Հաֆթարը, հեռակա կարգով, մահապատժի դատապարտվեց: Սակայն Լիբիայի հետախուզության «ձեռքերը» կարճ գտնվեցին եւ չհասան ԱՄՆ Վիրջինիայի նահանգում թաքնված Հավթարին: 1996 թ. գեներալը անձամբ ղեկավարեց Լիբիայի լեռնային շրջաններից մեկում խռովությունը՝ ընդդեմ Քադդաֆիի: Խռովությունը ձախողվեց:

2011թ. Հավթարը (ի դեպ արտաքինով նա հիշեցնում է դպրոցի շարքային ուսուցչի) ԱՄՆ-ից նորից վերադարձավ Լիբիա եւ Բենգազիում ղեկավարեց 90 հազարանոց «Ազգային ազատագրական բանակը» ընդդեմ Քադդաֆիի: Բայց չգիտես ինչու ԱՄՆ-ը նույնպես դադարում է նրան Լիբիայի միակ ղեկավարի պոստում տեսնել: Եվ ահա այստեղ է, որ Հավթարի համոզված գաղափարները ընդդեմ իսլամական ծայրահեղականների եւ «Մուսուլման եղբայրների»՝ գրավեցին Եգիպտոսի, Ալժիրի, Սաուդյան Արաբիայի եւ Արաբական Միացյալ Էմիրությունների ուշադրությունը:

Հուսահատվելով ամերիկյան իր «բարեկամներից», Հավթարը նորից ձեռք է մեկնում Ռուսաստանին: Ինչ կա որ, չէ՞ որ հայտնի է՝ ով հեռանում է ԱՄՆ-ից, ընդգրկվում է «Ռուսաստանի բարեկամների» ցուցակում, նամանավանդ, որ նախկինում եղել են հաստատուն կապեր: Բարեկամական շեշտադրումները



*Առաջին հայացքից դպրոցի շարքային ուսուցիչ հիշեցնող ֆելդմարշալ Խալիֆա Հավթարը*

փոխոխվում են, ինչին ուշի-ուշով հետեւում են տարբեր երկրների հետախուզությունները՝ կոնկրետ այս դեպքում ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ Թուրքիայի: Այս երկրներն էլ կոնկրետ ծրագրեր ունեն Մերձավոր Արեւելքում եւ Աֆրիկայում:

Որքան շատ երկրներ են խառնվում այլ երկրների ներքին գործերին, այնքան հեռու են մղվում այդ երկրներում խաղաղությունը եւ ներքին կայունությունը: Ժամանակը ցույց կտա, սակայն մի բան ակնհայտ է. Լիբիայում պատերազմը չի մոտեցնում Թուրքիան եւ Ռուսաստանը եւ դա լավ է, մի գուցե շատ լավ:

***Ծանոթագրություն**: Մինչ հոդվածս լույս կտեսներ, 2020թ. հունվարի 7-ին Թուրքիայի առաջին զինվորական կոնտինգենտը ժամանեց Տրիպոլի:*

***Խմբ. կողմից.-** Հիշեցման կարգով մեր ընթերցողներին տեղեկացնենք, որ նախորդ տարվա Ապրիլի 24-ին Խալիֆա Հավթարը դատապարտել էր Թուրքիային Հայոց ցեղասպանություն կազմակերպելու համար եւ ճանաչել այդ իրողության փաստը:*

AZG NEW SHABAT.QXD 16/01/2020 21:58 Page 9



# «Թավշյա հեղափոխությունից» հետո էլ Դիլիջանում անտառահատող մաֆիան չի վերացել

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա





Ֆրանսգերմանական arte հեռուստաալիքի՝ Եվրոպայի տարբեր երկրների ու նրա մարդկանց մասին 30 րոպեանոց ռեպորտաժների շարքը համալրվեց Հայաստանի ապօրինի ծառահատումների դեմ պայքարող ակտիվիստ բնապահպանների մասին տեսանյութով, որ հունվարի 14-ին հեռարձակեց գերմանական ZDF-ը:

Ապօրինի ծառահատումների թեման արծարծող հիշյալ տեսաֆիլմը անդրադառնում է Դիլիջան ազգային անտառում (պարկ) տարիներ ի վեր գոյություն ունեցող եկամտաբեր բիզնեսին, որի մեջ ներգրավված պաշտոնյաներն անարգել հովանավորել են այն՝ անպատիժ մնալով: Անտառամերձ բնակավայրերի մարդիկ կենսապահովման նվազ զամբյուղը հագեցրել են անտառի հաշվին, որը շատերի համար եկամտի աղբյուր է նաեւ: Ըստ ֆիլմի 90-ականներից ի վեր ապօրինի ծառահատումների պատճառով Հայաստանը զրկվել է իր անտառածածկույթի ավելի քան քառորդ մասից: Այժմ անտառածածկույթը Հայաստանի 10 տոկոսից պակաս տարածքն է ներկայացնում, իսկ Հաղարծինը ապօրինի ծառահատումների կենտրոնն է:

Ֆիլմը պատմում է 37-ամյա բնապահպան **Գոռ Հովհաննիսյանի** եւ նրա երեքհոգանոց խմբի մասին, որ փորձում է Դիլիջան ազգային անտառի՝ 28 հազար հեկտարի ոչնչացման դիտորդ լինելու փոխարեն պայքարել. նախ ամեն օր ստուգում են տարածքը, արձանագրում ապօրինի յուրաքանչյուր ծառահատում, հետեւում, թե կացին, էլեկտրական սղոց բանեցնողներն ովքեր են, ով է հովանավորում երկրի սահմաններում եւ դրանից դուրս՝ առավելաբար Ռուսաստան առաքվող թանկարժեք փայտանյութը: Ապօրինի ծառահատումների կոռուպցիոն շղթայում առաջին հերթին ընդգրկված են անտառի պահպանությունն ի պաշտոնե իրականացնողները: Գոռը, որի մանկությունն անցել է Դիլիջանի անտառներում, թողել է Երեւանի համալսարանի դասախոսի իր պաշտոնը, կնոջ, երկու անչափահաս դուստրերի հետ բնակություն է հաստատել Դիլիջանում եւ իր նման նվիրյալ բնապաշտպանների հետ բացահայտ պայքար է ծավալում անտառն ապօրինի ոչնչացնողների դեմ: Անվտանգ գործ չէ, մանավանդ, երբ բազմիցս սպառնալիք է եղել, բայց ո՛չ Գոռը, ո՛չ նրա ընտանիքը, ոչ էլ բնապահպանների խումբը չեն երկյուղել, չեն նահանջում:

Դիլիջան ազգային անտառի տնօրեն **Սուրեն Աղաջանյանն** առարկում է Գոռ Հովհաննիսյանի այն պնդմանը, թե ծառահատման մաֆիան չի վերացել: Ըստ Գոռի, 2018-ի ապրիլից՝ «թավշյա հեղափոխությունից» հետո, Դիլիջանում անտառահատման ծավալը փոքր-ինչ նվազել է, բայց դեռ կա: Տեղի սղության պատճառով ֆիլմին անդրադառնում ենք հպանցիկ, բայց մի կարեւոր նկատառում չենք վարանի չնշել:

Գերմանական հեռուստատեսության պատրաստած ռեպորտաժում հարգանք կա բնագրի՝ հայոց լեզվի հանդեպ: Սա անշուշտ ձայնագրման տեխնիկային լավագույնս տիրապետելու խնդիր է, բայց նաեւ մտածողության կերպ. նախ բնապահպանություն է նաեւ լեզվական բնագիր պահպանելը, հետո այլ առավելությունների հետ ռեպորտաժն ավելի հավաստի է դառնում՝ հատկապես երկու լեզվին տիրապետող դիտորդների համար: Իմ ունկնդրած գերմաներենը չէր խանգարում հայերենին, իսկ հայերենը նույնիսկ հարստացնում էր տեսանյութի ձայնային դաշտը: Օտարներից շատ եմ լսել, թե հայերը, նաեւ Հայաստանի բնակիչները նվազագույնը երեք լեզվի տիրապետում են, մենք էլ երբեմն շեշտադրում ենք լեզուների մեր իմացությունը, բայց հեռուստաեթերից՝ լինի կարեւոր ռեպորտաժ, թե հարցազրույց, մեկ լեզվի գերակայությունն է ընդգծվում, սովորաբար չի լսվում բնագիրը: Տեխնիկակա՞ն խնդիր է սա, թե՞ երբեմն փաստերը քողարկելու միջոց:

# Օրհաց խնդիրներ

⇨1

Որ այս պատերազմում սովորաբար տեսականորեն միշտ կարող է գերադաս դիրք ունենալ մեդիան՝ կարծում ենք կասկածել պետք չէ:

Երեկ Ազգային ժողովում կազմակերպված խորհրդարանական լսումներում եւս այս մասին խոսվեց, որտեղ նաեւ պարզ դարձավ մեդիածառայությունների ոլորտի օրենսդրական փոփոխությունների նոր կարգավորումների ուղղվածությունը՝ հեռուստաընկերությունների լիցենզավորման ավելի խիստ պահանջներ են սահմանվելու նոր պատրաստվող օրենսդրությամբ, որոնց կարող են չբավարարել հեռուստաընկերություններից շատերը, օրակարգում է նաեւ ԶԼՄ-ների ֆինանսական թափանցիկության հարցը: Կառավարության նիստից էլ պարզ դարձավ, որ առուծախ է իրականացվելու հեռուստագովազդ չափող ընկերությունում, որի չափումների արդյունքում գովազդի գումարները բաշխում էր բաշխող ընկերությունը՝ զույգ ընկերություններին տիրապետողների քիմքին համապատասխան: Ակնկալվում է գովազդային դաշտի ազատականացումը: Այս բոլորը պետք է արձանագրվեն օրենսդրական փոփոխություններում, որոնք պետք է իրականացվեն մինչեւ ամառ, երբ մուլտիպլեքսի հանրային տիրույթի հեռարձակման մասնակցության նոր մրցույթ կհայտարարվի: Դա միգուցե եւ ճիշտ է, եւ վարչապետ Փաշինյանի ասած «Կոռուպցիա գրուպ» հեռուստաընկերություններին կստիպի ավելի թափանցիկ աշխատել, մանավանդ՝ ֆինանսական աղբյուրների բացահայտումը եւս օրենսդրությամբ պարտադրվելու է: Բայց մտահոգություն, այնուամենայնիվ, կարող է լինել՝ հանկարծ թացն էլ չորի հետ ոտքի տակ չգնա: Համենայնդեպս այս գործընթացում պատկերացումների տարբերություն եւ դիմակայություն նկատվեց լրագրողական կազմակերպությունների ղեկավար **Աշոտ Մելիքյանի, Բորիս Նավասարդյանի**, ՀՌԱՀ տնօրեն **Տիգրան Հակոբյանի** եւ անգամ տեսալսողական մեդիածառայությունների ոլորտի օրենսդրության բարեփոխմանը նվիրված լսումները կազմակերպած Աժ հանձնաժողովների նախագահների ելույթներում, իսկ խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչը խոստովանեց՝ ոլորտի օրենսդրական կարգավորումները դիմակայության են արժանանում: Այո, ոլորտը դժվար կարգավորելի է, եւ առիթի դեպքում ավելի կմանրամասնենք պրոբլեմները:

### Ինչու է աղմկում Վանեցյանը

Մենք կրակն ենք ընկել ԱԱԾ նախկին տնօրենների ձեռքը: Այ մարդ, ողջ աշխարհում հատուկ ծառայությունների աշխատակիցները պարտավորություն են ստորագրում՝ երեսուն տարի չխոսել, քանի որ այդպես է պահանջում անվտանգության հայեցակարգերի մի կարեւոր բաղադրիչը: Մեր մոտ հակառակն է՝ ԱԱԾ նախկին տնօրենները խոսում ու խոսում են, խոսում ու խոսում են, ընդ որում՝ բացառապես ընդդիմադիր դառնալուց հետո: Անվտանգության ոլորտ ներկայացնողի (անվտանգության նախկին պաշտոնյա չի լինում՝ եթե տիրապետած տեղեկությունները ծավալը նկատի առնենք) ընդդիմադիրը ո՞րն է, անվտանգության աշխատողները, հատկապես կադրային սպայի ուսադիրները կրողները, մի կանխավարկածից, մի պատուհանից պետք է նայեն մարտահրավերներին, ըստ այդմ՝ մշտապես կապի մեջ լինեն ու օգնեն պետության անվտանգության գործին: Չէ, մերն ուրիշ է, նախկին մեկը, պարզվում է, ոնց ուղնուծուծով քաղաքական գործիչ եղել է, այդպես էլ մնացել է, այդ թվում՝ ԱԱԾ պետ եղած ժամանակ, եւ այժմ ինչ գիտի-ինչ չգիտի՝ խոսում է: Մյուսն էլ, Վանեցյանը, անընդհատ սպառնում է՝ այ կխոսեմ, այ քաղաքական գործիչ կդառնամ: Երկրի անվտանգությության մասին բամբասանքի մակարդակով շատախոսությունը սարքել եք ձեր քաղաքական կարիերայի անհրաժեշտ բաղկացուցիչ, ամոթ է, էլի: Երկրի ղեկավարին թիրախավորելը, հարգելի ԱԱԾ նախկին պետ, հակաանվտանգային է, սպառնալիք է հենց պետությանը, անկախ նրանից՝ սիրում եք այդ ղեկավարին, թե ոչ, չգիտեիք՝ իմացեք, իսկ թե նախապես դրա համար էիք պաշտոն ստանձնում՝ սա էլ ձեզ բուծողների խղճին է: Չնայած մեր տիպի երկրներում ամեն տեսակի սցենարներ էլ հնարավոր են՝ նայած խաղարկողների, ու արտահոսքը, թե Վանեցյանն ու ներկա իշխանությունը պայմանավորված են խաղում՝ է, որպես վարկած նույնպես տեղ ունի: Բոլոր դեպքերում Վանեցյանի պերմանենտ խոսամոլության շարժառիթը հանրությանը հասկանալի չէ, նրան թերթի կամ անհամարժեք պատասխանողի միջոցով հակադարձելը՝ անընդունելի, իսկ անվտանգության գաղտնիքներին տիրապետողի մուտքը քաղաքականություն՝ դատապարտելի:

### Ռուսաստանը փոխում է խաղի կանոնները

Այն ինչ չհաջողվեց Սերժ Սարգսյանին՝ հաջողվում է Վլադիմիր Պուտինին. վերջինս իր կառավարման ավարտից երեք տարի առաջ արդեն պատրաստում է իր իշխանության հանձնումը իրեն հարմար մարդկանց եւ շրջանակների՝ մտադիր լինելով սահմանադրական փոփոխություններով փաստացի ուժեղացնել նախագահի ինստիտուտը, միաժամանակ օրենսդրական մարմնին ֆորմալ առումով ավելի մեծ լիազորություններով օժտելով: Ինչու չհաջողվեց դա մեզ մոտ, բայց հաջողվում է Ռուսաստանում՝ պատճառները տարբեր են, Ռուսաստանն ավելի ամբողջատիրական երկիր է, միեւնույն ժամանակ՝ ավելի ռեսուրսաշատ եւ ինքնաբավ: Թեեւ դեռ հայտնի չէ՝ մեկ մարդու որոշումներով երկրի իշխող կարգում նոր փոփոխությունների նախաձեռնությունը կհանդուրժվի՞, ինչպես երկար տարիներ հանդուրժվել է նրա մենիշխան կառավարումը, թե՞ տարբեր ինքնակազմակերպվող քաղաքական եւ տնտեսական խմբերի դիմակայությանը կարժանա: Կապրենք, կտեսնենք: Առայժմ Պուտինն անսպասելիությամբ շշմեցրել է իր քաղաքական հակառակորդներին՝ ՌԴ Պետդումային ուղղված իր հերթական ուղերձում առաջարկելով սահմանադրական փոփոխություններ անել: (Այս մասին ավելի մանրամասն կարդալ Մոսկվայից մեր թղթակցի նյութում: Էջ 4):

Պուտինն այսպիսով փորձում է առաջ ընկնել ժամանակից՝ ինքը դառնալով Ռուսաստանում հրամայական փոփոխությունների գեներատորը եւ թույլ չտալով իր պաշտոնավարման ավարտին սպասվելիք ընդդիմադիր շրջանակների հարվածներով թուլացնել իր իշխանությունը: Կընդունի՞ բազմամիլիոն Ռուսաստանը մեկ մարդու պատկերացրած՝ պետության կառուցվածքների լիազորությունների վերաբաշխման, ըստ էության ՌԴ ներկայիս իշխանության հետագա վերարտադրության նախաձեռնությունը, մանավանդ երբ պարզ կլինի, թե ինչ պաշտոնի է հավակնում Պուտինն ինքը՝ իր գծած սխեմայում, կապրենք-կտեսնենք: Համենայնդեպս՝ նա արդեն պաշտոնաթող Դմիտրի Մեդվեդեւին առաջարկել է նոր ստեղծվելիք Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալի պաշտոնը, եթե քարտուղարն էլ ինքն է լինելու, նշանակում է՝ երկուսն էլ առանցքային դերակատարներ են մնում դեռ երկար ժամանակ:

Այն, ինչ Ռուսաստանում հիմա անում են, Հայաստանում հնարավոր չեղավ՝ նախկին իշխանության բազմաթիվ դեմքերի անհագ ախորժակի, մինչեւ ուղնուծուծը կոռուպցիայի մեջ թաղված լինելու, փոխվելու ոչ մի ցանկություն ցույց չտալու, ժողովրդի համբերության պաշարը սպառելու եւ Սերժ Սարգսյանի՝ վարչապետ դառնալու սխալ որոշման պատճառով: Իսկ թե ինչ անդրադարձ կունենա Ռուսաստանում տեղի ունեցողը Հայաստանի վրա՝ ակնդետ հետեւելու բան է:

Մանավանդ՝ Հայաստանում եւս կարծես մտադրություն ունեն հետողորմյա անել եւ ուժեղացնել նախագահի ինստիտուտը՝ համենայնդեպս այդպիսի խոսակցություն կա, եւ նոր ստեղծվելիք սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովը ձեւավորելու է պետության կառույցների լիազորությունների բաշխման նոր մոտեցումներ: Անգամ խորհրդարանական կառավարման մեխանիզմը Հայաստանի համար վաղ լինելու կարծիքներ են հնչում: Սակայն սահմանադրական փոփոխությունները որպես կոստյում կարելու նախկին փորձերն այժմ կրկնելը մեծագույն սխալ կլիներ, հատկապես եթե նախագահի ինստիտուտն ուժեղացվում է որոշակի մարդու համար:

AZG NEW SHABAT.QXD 16/01/2020 21:58 Page 10



ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Հասնել ու անցնել... ԱՄՆ-ին

Խորհրդային տարիներին մի զավեշտ զրույց կար. գյուղսովետի ղեկավարի ընտրությանը մասնակցելու ցանկություն հայտնած ոչ տառաճանաչ ծերունուն հարցնում են, թե ինչո՞ւ է ցանկանում ընտրվել: Պատասխանը հետեւյալն է լինում.- ինչ է, կարո՞ղ է վիլիսից վայր ընկնեմ: Վիլիս-ը, նույն ինքը Վլադիմիր Իլյիչ Լենին-Իոսիֆ Ստալին անվանումներից կազմված հապավումն էր, գյուղսովետների նախագահներին հատկացվող տրանսպորտ: Ծերունին այսկերպ ակնարկել է, որ որեւէ ընտրվող, ջահել թե ահել, այդ տարիների յուրօրինակ ջիպ-ով երթեւեկելով իր կարեւորությունն է ընդգծելու, աշխատանքն էլ հո գայլ չէ, որ անտառ փախչի:

Նորանկախ Հայաստանում էլ կարծես ոչինչ չի փոխվել, որի անառարկելի հաստատումն էր ՀՀ վարչապետի նախորդ տարվա դեկտեմբերի 12-ի կառավարության նիստում բարձրաձայնած՝ «պետական ողջ համակարգը դեմ է իրականացվող բարեփոխումներին» գնահատականը: Թե ո՞ւր մնաց բարձրագույն պաշտոնյաների ամսավճարների աներեւակայելի բարձրացմամբ այս հակասությունը կանոնակարգելու խոստումը, դժվար է ասել: Հանրության որոշակի շրջանակներում այն մոտեցումը կա, որ աշխատանքի արդյունքը որեւէ կապ չունի նախարարա-տեղակալական 1-1,5 մլն դրամ ստացածի եւ հավելյալ պարգեւատրումների ու այլեւայլ արտոնությունների վճարումների հետ: Դրանք պարզապես պաշտոնյաների այդ խմբի անհավանական ծախսերը սքողելու յուրօրինակ միջոց ու նպատակ են: Տարվա արդյունքով այնպիսի գումարներ են ստացվում, որ կարելի է եւ շքեղ ավտոմեքենա ու անշարժ գույք ձեռք բերելը եւ արտերկրներ հանգստի մեկնելն ու 400 հյուրերով ծնունդ ու հարսանիք կազմակերպելը հիմնավորել: Պարզապես հարց է ծագում, թե ինչու է այս ամենն այսչափ արագ ու հապճեպ արվում, երբ անցած շրջանից դեռեւս գոհացուցիչ արդյունքներ չկան, զգացվում է, որ առաջիկայում էլ դրանք այնքան աննշան կլինեն, որ մեր մարդկանց լավ ապրելու սպասումները տասնամյակներ անց էլ իրականություն չեն դառնա: Խոսքերով ու խոստումներով չէ որ երկիր են կառուցում. առայժմ սա է մեզանում գերակշռողը:

Կառավարել ասվածն անշուշտ բազմիմաստ հասկացություն է, յուրաքանչյուրն այստեղ իր բացատրությունն ու արդարացումն ունի, հար եւ նման՝ բակլան ինն է, խաչած եմ ցանում մոտեցման: Սակայն միանշանակ է, որ երբ գործը հանրային միջոցները ծախսելուն է վերաբերում, աշխատավարձերի ու գործուղումների, ծրագրերի ու այլեւայլ միջոցառումների կազմմանն ու անցկացմանը, հարկ է յոթ չափել, նոր կտրել սկզբունքով առաջնորդվել: Չէ՞ որ մեր մարդիկ նայում են իրենց շրջապատին, կատարվող իրադարձություններին եւ շատ հաճախ տեղին տարակուսում: Մայրաքաղաքի յուրաքանչյուր միկրոշրջանում շարքային քաղաքացիների հարեւանությամբ ապրում են նաեւ պետական պաշտոնյաներ ու պատգամավորներ, իրավապահներ ու համայնքային ղեկավարներ, որոնց տեսադաշտում են կատարվում ամենատարբեր օրինախախտումները, հասարակական կարգի խեղաթյուրումները՝ սկսած ավտոմեքենաները արգելված տեղերում, մայթերին ու գազոններին կանգնեցնելուց մինչեւ շարունակվող ապօրինաշինությունները, շփացածության ակնհայտ դրսեւորումները: Չգիտես ինչու այսօրինակ երեւույթների դեմ պայքարը ՀՀ բարձրագույն իշխանությունը բարդում է շարքային քաղաքացու վրա, ում տառապանքը փոքր ունի՝ սկսած բացատրություն գրելուց ու վկայություն տալուց, իրավապահներին բազմիցս ներկայանալուց ու դատական նիստերի կանչվելուց... Վերջում էլ կարող է պարզվել, որ վատամարդը հեղափոխության պարզամիտ ակտիվիստն է, ով նաեւ դարձել է հարեւանների թիրախը: Բայց ո՞ւր է թե մեր խնդիրներն այսքանով ավարտվեին:



Մեզանում վեհ նպատակ է հռչակվել՝ Երեւանը խելացի քաղաք դարձնել: Թե ինչ է այն, առայժմ պարզ չէ: Փոխարենը հանրահայտ է, որ ասենք փողոցը ավտոմեքենաների երթեւեկի համար հատկացված տարածք է, որը մեր քաղաքացիների որոշակի մասը նաեւ ըստ իր հայեցողության է օգտագործում՝ արգելված հատվածը տարբեր հնարքներով կտրում անցնում է, երբեմն էլ՝ ծանր հետեւանքների հանգեցնում: Հարյուր հազարավոր հետիոտներ անվարան օգտվում են կարգավորվող անցումներից, մի քանի տասնյակ զանցառուները՝ ոչ: Եվ խնդրեմ. քաղաքային տնտեսության պատասխանատուները վերջիններին հաճոյանալու թե սիրաշահելու յուրօրինակ միջոց են գտել՝ փողոցների արհեստականորեն վտանգ առաջացնող հատվածներում լուսացույցեր են տեղադրում, որոշակի թե ահռելի գումարներ ծախսում: Կարծես ոչինչ, որ դրանք խաչմերուկներից ընդամենը 100-150 մետրի վրա են գտնվում, վարորդները վրդովվում են, ավտոմեքենաների անհարկի կանգառները խցանումների են հանգեցնում, երեխաներն էլ կանաչ լույսը բացող կոճակների հետ խաղալ են սկսել: Այնպես որ ցանկացել են առերեւույթ լավ բան անել, ստացվել է՝ ինչպես միշտ, միայն թե ահռելի գումարներ ծախսելով: Իսկ ընդամենը պահանջվում է մարդկանց ուղղորդել պահպանել երթեւեկի տարրական կանոնները, ավելորդ խոչընդոտ չստեղծել վարորդների համար, այդ թվում՝ հանրային տրանսպորտի, որից դժգոհությունները միայն ավելանում են նաեւ նման նորամուծությունների արդյունքում: Սա մեզանում հռչակված խելացի քաղաքի դրույթի պարզունակ խեղաթյուրումն է: Հետեւանքը. ՀՀ քաղաքացու սպասումների չիրականացում, իր բոլոր դրսեւորումներով:

Իսկ ո՞ւր մնաց վերնագրում խոստացված նպատակը, կհարցնի ընթերցողը: Խնդրեմ ծանոթացեք լրագրողական հետաքրքրությանս արդյունքում պարզած փաստերից ընդամենը մեկին, ԱՄՆ-ին հասնելուն եւ անցնելուն: Երկիր մոլորակի թիվ 1 տնտեսությունն ունեցող այս երկիրը նահանգներից է կազմված, որոնցից ՀՀ տարածքին ամենամոտը թերեւս Մեն նահանգն է, Ատլանտյան ափի հյուսիսում, մեզնից 9 ժամ գոտում գտնվողը: Ըստ ԱՄՆ-ում 1868 թ.-ից հրատարակվող «Համաշխարհային փաստեր. 2020» տեղեկատուի, Մեն նահանգը տարածքով 39-րդն է, բնակչությամբ 42-րդը, 1,3 մլն մարդ, որոնց ուժերով 2018-ին այստեղ ստեղծված համախառն ներքին արդյունքը կազմել է 64,4 մլրդ դոլար, մեկ բնակչի տարեկան եկամուտը՝ 48000 դոլար: Թե քանի տասնամյակ կպահանջվի ՀՀ տնտեսության ներկայիս պատասխանատուներից նշված արդյունքներին մոտենալու համար, մեր հրաշագործներին էլ հայտնի չէ: Փոխարենը... պինդ բռնվեք. Մեն նահանգի նահանգապետի ամսական աշխատավարձը... 5800 դոլար է, գրեթե այնքան, ինչքան մեր բարձրագույն պաշտոնյաներից շատերինը: Այնպես որ՝ հասնել եւ անցնել ԱՄՆ-ին յուրօրինակ գործընթացը սկսվել է: Ցավոք թե տարօրինակորեն, միայն ոչ՝ շարքային հայաստանցիների համար:

13.01. 2020 թ.

## Երուսաղեմի դրախտային հանդերձը՝ հայկական կապույտ- կանաչ խեցին

**«Հայացք դրախտին» անունն է կրում մինչեւ սեպտեմբեր Արեւելյան Երուսաղեմի Ռոքֆելլեր հնագիտության թանգարանում բացված հայկական կերամիկայի ցուցահանդեսը: Գերմանիայում հրատարակվող «Յուդիշե ալգեմայնե» թերթն ակնհայտ սիրով է գրում Երուսաղեմի հին քաղաքի տարբեր շինությունները՝ հայկական սուրբ Հակոբի տաճարը, Հեսեդ Վերախամիմ սինագոգը, Նախշբանդի մզկիթը, American Colony հյուրանոցը զարդարող հայկական խեցու կապույտ- կանաչ զարդերանգի մասին: Շատերիս համար անհայտ է թերթի ներկայացրած այն փաստը, որ Առաջին աշխարհամարտի ժամանակ Անատոլիայից Հալեպ, այնուհետ Երուսաղեմ գաղթած խեցեգործ Դավիթ Հովհաննիսյանը Երուսաղեմի հայկական բացառիկ դպրոցը հիմնել է 100 տարի առաջ: Ցուցահանդեսին կանդրադառնանք առաջիկայում:**

Ան. ՀՈՎՍԵՓՅԱՆ

## Եթե Դավութօղլուն պատմի իր իմացածը...

Թուրքիայի նախկին վարչապետ Ահմեթ Դավութօղլուի կողմից հիմնադրված «Ապագայի կուսակցության» գործադիր խորհրդի անդամ Էթյեն Մահչուփյանը հայտարարել է, որ եթե Դավութօղլուն պատմի այն, ինչ գիտի, ապա Թուրքիայի պատմությունը կվերաշարադրվի:

«Եթե Ահմեթ Դավութօղլուն պատմի այն ամենը, ինչ գիտի ու ինչի միջով անցել է, ապա ոչ վաղ անցյալի ողջ մեր պատմությունը նորից կվերաշարադրվի: Ես դա գիտեմ, որովհետեւ որոշ բաներ լսել եմ, բայց պատմելն իմ գործը չէ», ասել է հայ ազգի գործիչը:

Մահչուփյանի խոսքով՝ Թուրքիայի նախագահ եւ իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցության (AKP-ԱԶԿ) ղեկավար Ռեջեփ Թայիփ Էրդողանի կախվածությունը Ազգայնական շարժում կուսակցությունից (MHP-ԱՇԿ) ավելի շատ է, քան ԱՇԿ-ի կախվածությունը Էրդողանից:

«Այն պարագայում, երբ Էրդողանը մեկուսացված է եւ աշխատում է այնպիսի անտաղանդ թիմի հետ, ինչպիսին հիմա է, չի կարող լավ ռազմավարություն մշակել: Նա ամեն ինչ անելու է իր իմացածի պես: Պետք է մոռանալ նաեւ իր գործընկերոջը (նկատի ունի ԱՇԿ-ի ղեկավար Դեւլեթ Բահչելիին-խմբ.): Էրդողանը այլեւս չի կարողանում միայնակ որոշումներ ընդունել»,- ասել է Մահչուփյանը:

Գ. Գ.

## Կեսդարյա հոբելյան

Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգը բաղկացած է երեք ենթակայաններից, որոնք տեղաբաշխված են Որոտան գետի վրա: Հիդրոէլեկտրակայանների համակարգը կազմված է երեք աստիճանից: Գումարային տեղակայված էլեկտրական հզորությունը կազմում է 404.2 ՄՎտ, տարեկան միջին նախագծային արտադրանքը՝ 1.16 միլիարդ կՎտժ:

1970 թ. գործարկվել է համակարգի առաջնեկը՝ Տաթեւ ՀԷԿ-ը, 1978թ-ին՝ Շամբը, իսկ 1989 թ-ին՝ Սպանդարյան ՀԷԿ-ը:

Տաթեւ ՀԷԿ-ը համակարգի առաջնեկն է: Ճնշումային առումով կայանը առաջինն էր նաեւ նախկին ԽՍՀՄ-ում: Կայանի հիմնական կառույցներն են՝ գլխամասային հանգույց, դերիվացիոն թունել, օրական կարգավորիչ ջրամբար, տուրբինային խողովակաշար, կայանային հանգույց:

Գլխամասային հանգույցի մեջ մտնում է պատվարը, ջրամբարը, ջրընդունիչը եւ ջրթափ կառույցը: Պատվարը կառուցված է տեղական նյութերով, ավազակավային էկրանով: Այն ունի 41 մետր բարձրություն, 107 մետր երկարություն: Ջրամբարն ունի 13.6 միլիոն խորանարդ մետր օգտակար տարողություն: Ջրընդունիչի հաշվարկային թողունակությունը կազմում է 25մ3/վրկ, տեղակայված է Որոտան գետի ձախ ափին, ունի հարթ կրկնակի անցքերով փականներ:

Ջրթափ կառույցը բաղկացած է վեց թունելախորշերից եւ մարգարտածաղկի տեսքով ջրընդունիչից: Գումարային թողունակությունը կազմում է 348 մ3/վրկ:

Դերիվացիոն թունելն ունի 18 կիլոմետր երկարություն: Փաստացի թողունակությունը կազմում է 23 մ3/վրկ: Առբերիչ ջրանցքի ձախ կողմին տեղակայված է ոռոգման նպատակով ջրընդունիչը: Ջրավազանն ունի 80 հազար խորանարդ մետր տարողություն, ջրի մակարդակը հասնում է 1306,54 մետրի:

Ջուրը 1900 մետր ընդհանուր երկարությամբ ճնշման խողովակաշարով հասնում է կայան: ՀԷԿ-ի շենքի մոտ խողովակաշարը բաժանվում է երեք մասի եւ յուրաքանչյուրը 11 մ3/վրկ թողունակությամբ միանում կայանի ագրեգատներին:

Կայանի շենքը գտնվում է Որոտան գետի ձախ ափին, հաշվարկային ճնշումը 568,8 մ է, ունի երեք ագրեգատ, 157,2 ՄՎտ գումարային հզորություն, 630 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիայի տարեկան հնարավոր արտադրությամբ:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու

AZG NEW SHABAT.QXD 16/01/2020 21:58 Page 11



# Սիրիան փրկված է. ո՞վ կփրկի Իրաքը փլուզումից

## *Դոմինոյի սկզբունքը գործողության մեջ*

Մինչ որոշ փորձագետներ փորձում են կռահել, թե այն պահին, երբ լարվածությունը հասել է նման մեծ չափերի, Իրաքում ամերիկյան ռազմակայանների վրա հարձակված իրանական հրթիռները ինչու պատերազմական վիճակը վերածեցին խաղաղ վիճակի, Մերձավոր Արեւելքում դիմակայության էպիկենտրոնը տեղափոխվում է դեպի Բաղդադ: Իրաքում նախադրյալներ են ստեղծվել վերջնական ապակենտրոնացման, փլուզման հետեւանքով մի քանի կենտրոնների ստեղծման համար, որոնք միավորված կլինեն կրոնական ընդհանրության, տնտեսական շահերի եւ տոհմացեղային կապերի հիման վրա: Ստեղծվում է մերձավորարեւելյան յուրօրինակ խճապատկեր, որն առայժմ քողարկվում է Վաշինգտոնի եւ Բաղդադի որոշակի քայլերով:

Տեղի է ունեցել ԱՄՆ պետքարտուղար **Մայք Պոմպեոյի** հեռախոսազրույցը Իրաքի վարչապետի պաշտոնակատար **Ադել Աբդուլ-Մահդիի** հետ, որի ընթացքում վերջինս Պոմպեոյից պահանջել է պատվիրակություն գործուղել Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման պայմանները համաձայնեցնելու համար: Հիշեցնենք, որ Բաղդադի օդանավակայանում իրանցի գեներալ Ղասեմ Սուլեյմանիի սպանությունից հետո Իրաքի խորհրդարանը որոշում ընդունեց երկրից օտարերկրյա զորքերի դուրսբերման մասին: ԱՄՆ-ը պատասխանեց մերժումով: Պետդեպարտամենտը հայտարարեց, որ այսուհետեւ Իրաք գործուղվելիք որեւէ պատվիրակություն կզբաղվի միայն երկկողմ գործընկերությունը վերականգնելու միջոցների որոնմամբ, ոչ թե զորքերի դուրսբերման հարցը, այլ Մերձավոր Արեւելքում դրանց առավել արդյունավետ տեղաբաշխման խնդիրը քննարկելու համար: Ավելի վաղ, նախագահ **Դոնալդ Թրամփը** Իրաքին սպառնացել էր լուրջ պատժամիջոցներով: Բացի դրանից, նա ասել էր, որ ամերիկյան զորքը չի հեռանա Իրաքից, քանի դեռ իրաքցիները չեն վճարել այնտեղ կառուցված ամերիկյան ռազմակայանի գինը: Վերջին փաստարկը անհամոզիչ է, քանի որ Իրաքը կարող է ԱՄՆ-ին հաշիվ ներկայացնել 2003 թ. նրա կատարած ներխուժման, ենթակառույցների ավերման եւ միլիոնավոր մարդկանց կորստի դիմաց:

Բայց հարցը ներկայումս ուրիշ հարթության վրա է: Բանն այն է, որ Իրաքում կոալիցիոն զորքերի ներկայությունը կարգավորվում է հատուկ օրենքով, որը կարող է չեղարկվել միայն ուրիշ օրենքի ընդունման դեպքում: Ըստ որում, ամերիկացիները մեկ տարի ժամկետ կունենան Իրաքի կողմից երկկողմ համաձայնագրի չեղարկման մասին գրավոր ծանուցում ստանալուց հետո: Նման օրենք առայժմ չկա: Բացի դրանից, Իրաքի խորհրդարանում քվեարկությանը չեն մասնակցել սուննի եւ քրդական խմբակցությունները, ինչը ամերիկացիներին հիմք է տալիս պնդել ընդունված որոշման անիրավազորության մասին: Այդուհանդերձ, դա լուրջ հարված է տարածաշրջանում ԱՄՆ-ի հեղինակությանը: Իրաքից ամերիկացիների արտաքսումը պահանջում են շիաները այն ուժերը, որոնց հենց ԱՄՆ-ը իշխանության բերեց 2003 թ. ներխուժումից հետո եւ որոնք ներկայումս մեծամասնություն են կազմում Իրաքի խորհրդարանում: Եվ որքան էլ տարօրինակ թվա, իշխանությունից հեռացված սուննիները այժմ քրդերի հետ միասին հանդես են գալիս ԱՄՆ-ի օգտին:



Այս կապակցությամբ Ռուսաստանում Իրաքյան Քրդստանի դեմոկրատական ներկայացուցիչ Հոշավի Բաբաքրը հայտարարել է, որ մի կողմից Բաղդադը բողոքում է ամերիկա-իրանական պատերազմի համար Իրաքում ամերիկյան զորքի ներկայության դեմ, իսկ մյուս կողմից, նա նշել է, որ ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ ծավալված պայքարը հանգեցնում է Իրաքում սուննիների, շիաների եւ քրդերի պառակտմանը, որոնք տարբեր դիրքեր են բռնել տվյալ հակամարտության մեջ: Դա Իրաքը կբաժանի շիա, սուննի եւ քրդական մասերի: Նրա խոսքերով, այդ պառակտման նշանները ավելի ու ավելի ակնհայտ են դառնում, հետզհետե դժվարանում է ամբողջական Իրաքի կառավարումը: Առավել եւս, որ ԱՄՆ-ը շիաների մասից դուրս է բերում իր զորքերը, որտեղ դրանք իրենց այնքան էլ ապահով չեն զգում: Ինչ վերաբերում է քրդերին, նրանք հոգնել են սպասելուց, թե արաբները, շիաները եւ սուննիները երբ կհասնեն փոխհամաձայնության: Ոչ ոք չգիտե, թե ԱՄՆ-ի գլխավորած միջազգային կոալիցիան մտադի՞ր է արդյոք պահպանել Իրաքի տարածքային ամբողջականությունը թեկուզեւ համադաշնության տեսքով, թե՞ նա պատրաստվում է հնարավոր քաղաքացիական պատերազմի:

Բայց նման սցենարի դեպքում եւս ամեն ինչ չէ, որ այդքան պարզ է: Իրաքն առավելապես շիաների երկիր է. բնակչության 64 տոկոսը շիա է, 31 տոկոսը՝ սուննի: Սադդամ Հուսեյնի օրոք սուննի փոքրամասնությունը կառավարում էր շիա մեծամասնությանը: Սադդամի տապալումից հետո շիաները եկան իշխանության, իսկ սուննիների որոշակի մասը աջակցում էր «Իսլամական պետությանը»: Այդ ջիհադիստական խմբավորումը ինչպե՞ս կպահի իրեն, եթե սուննիներն անցնեն ԱՄՆ-ի կողմը՝ լուրջ ճնշում գործադրելով քրդերի եւ շիաների վրա: Ո՞վ եւ ինչպե՞ս կխաղարկի այդ խաղաքարտը: Սադդամ Հուսեյնի օրոք գոյություն ունեցած ներքին սահմանները զգալիորեն փոխվել են, եւ միանգամայն հնարավոր է, որ մոտ ժամանակներս պայքար սկսվի դրանց համար:

Այս կապակցությամբ ԱՄՆ-ը ներկայումս խորհրդակցություններ է անցկացնում զանազան տեղացի խաղացողների եւ ՆԱՏՕ-ի գծով գործընկերների հետ՝ նրանց համոզելով, թե Իրանը փորձում է Իրաքում կոալիցիային հասցնել ոչ սիմետրիկ հարված: Ի՞նչ կլինի հետո: Թուրքական Yeni Ca հրատարակությունը, մեկնաբանելով Մերձավոր Արեւելքում ՆԱՏՕ-ի ռազմական ներկայությունն ուժեղացնելու նախագահ Թրամփի կոչը, գտնում է, որ գեներալ Սուլեյմանիի սպանությունը հանգեցրեց տարածաշրջանում ուժերի վերադասավորմանը, խաղացողների փոխատեղմանը եւ նույնիսկ նոր գործող անձանց հայտնվելուն: Հարկավոր է հաշվի առնել տարածաշրջանում ստեղծվող փաստական իրավիճակը, գտնում է հրատարակությունը: «Իրաքում սկսված մասնատման գործընթացը երկրի հյուսիսում եւ արեւմուտքում, Սիրիայի արեւելքում ԱՄՆ-ի ռազմական ներկայության ուժեղացումը, Սիրիայի հյուսիս-արեւելքում քրդերի ինքնապաշտպանական կազմավորումների ստեղծումը, կայունացման պատրվակով ՆԱՏՕ-ի տարածաշրջան գալը միայն կամրապնդեն գոյացած կառույցները, ինչը փաստորեն կնշանակի Իրաքի եւ Սիրիայի տրոհում: Այդ երկրներում սկսվող տրոհումը դոմինոյի սկզբունքով կդիպչի նաեւ Թուրքիային»:

Անկարան վաղուց է ապրում նման մռայլ կանխատեսումներով, ինչը նրան դրդում է առավել սերտորեն համագործակցել Ռուսաստանի հետ, թեեւ որոշ թուրք փորձագետների բնորոշման համաձայն, իրենց երկիրը առայժմ այդպես էլ չի որոշել իր գերակայությունները: Ռուսաստանին հաջողվեց պահպանել Սիրիայի պետականությունը: Բայց ո՞վ եւ ինչպե՞ս կպահպանի Իրաքը, հարց է տալիս ռուս փորձագետ **Ստանիսլավ Տարասովը**: Իրաքը կրոնական եւ էթնիկական հողի վրա համակված է կատաղի պայքարով, ինչը փաստորեն ավերել է երկիրը, որի փրկությունը լավագույն դեպքում համադաշնության ստեղծումն է: Iraq Insight վերլուծական կենտրոնի տնօրեն **Ռուբա Հուսարիի** խոսքերով՝ «ամերիկացիները քանդեցին երկրի քաղաքական հիմքերը՝ էստաֆետը փոխանցելով նրանց, ովքեր այժմ փլուզում են Իրաքը»:

**ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ**

# Թուրքիան փորձում է Աբխազիան կտրել Ռուսաստանից, պնդում են ռուսական ԶԼՄ-ները

## *Պետական «թավշյա» հեղաշրջում Աբխազիայում. նախագահը հրաժարական տվեց*

Աբխազիայի առողջավայրերում լռություն է, օդի ջերմաստիճանը 0-ից բարձր 6 աստիճան է՝ Մոսկվայից քիչ ավելի բարձր, լողափերը գրեթե դատարկ են: Իսկ մայրաքաղաք Սուխումում շոգ է. քաղաքական կրքեր են բորբոքվել: Ընդդիմությունը գրավում է նախագահի վարչակազմի շենքը եւ փորձում է տապալել անձամբ նախագահ Ռաուլ Խաջիմբային: Սեպտեմբերին նրան վերընտրեցին, բայց հիմա որոշել են, որ ամենայն հավանականությամբ դա տեղի է ունեցել անօրինական կերպով: Անարդարությունը շտկելու համար դիմել են գրոհի: Առիթը հետեւյալն է. չորս ամիս անց որոշել են վիճարկել նախագահական ընտրությունների արդյունքները, որոնց ընթացքում քվեների անհրաժեշտ քանակություն չստացավ նախագահության թեկնածու Ալխաս Կվինցիան:

Աբխազիայում նախընտրում են Նոր տարին նշել հին Գրիգորյան տոմարով՝ հունվարի 13-ի լույս 14-ի գիշերը: Եթե աբխազները հանգստանում են, ապա նրանք ամեն ինչ հետաձգում են, որպեսզի հետո հանգիստ պայմաններում բոլոր հարցերը լուծեն: Այդ պատճառով միանգամայն անսպասելի թվացին Սուխումում բողոքավորների ելույթները, որոնք հաջորդեցին հենց ամանորյա տոներին: Հավաքվեցին նախագահի վարչակազմի շենքի մոտ եւ պահանջեցին նրա հրաժարականը: Հետաքրքրական վիճակագրություն կա. ցուցարարների թիվը տատանվում է հիսունի եւ հինգ հարյուրի միջեւ:

Աբխազիան յուրատեսակ բուֆերային գոտի է Անդրկովկասում ՆԱՏՕ-ի հենարան Վրաստանի մոտ: Ռուսաստանն այնտեղ ունի ռազմակայան եւ սահմանապահներ: Նման դիրքերը չի կարելի կորցնել: Տնտեսական առումով Աբխազիան հեռանկարային չէ. դրամական ներդրումները որեւէ արդյունք չեն տալիս: Հեռանկարային չեն նաեւ Աբխազիայի առողջավայրերը, քանի որ ռուսաստանյան տուրօպերատորները հակված են ավելի շատ դեպի հայրենական առողջավայրերը:

Մնում է տարածքը, որին վաղուց եւ հիմնավորապես աչք է տնկել Թուրքիան: Այնտեղ Օսմանյան կայսրության վերածննման գաղափարները միայն խոսքեր չեն: Թուրքիայի գլխավոր շտաբի առանձնապես չթաքցվող ծրագրերում Աբխազիան դիտարկվում է որպես ազդեցության գոտի: Դեռ 1990-ականների սկզբների ամենածանր ժամանակներում Անկարան բառիս բուն իմաստով կերակրում էր Աբխազիային: Զանգվածաբար այնտեղ էին գալիս լայն սպառման ապրանքներով, այդ թվում պարենով բեռնավորված թուրքական փոքր նավեր: Երբ Ռուսաստանը գրեթե ոչինչ չէր տալիս, Թուրքիան «մարդասիրական օգնություն» էր ցուցաբերում. դա չհայտարարված, բայց լավ հայտնի փաստ է:

Թուրքիան պլանաչափորեն իր վերահսկողության տակ է առնում սեւծովյան ափը, հատկապես այն տարածքները, որտեղ ապրում է մահմեդական բնակչություն, ասում է փորձագետ **Վլադիմիր Պոպովը**: Վերցնենք Աջարիան՝ Վրաստանի տարածքում գտնվող ինքնավարությունը: Այնտեղ համատարած թուրքական ազդեցությունն է, մասնակցություն բիզնես-նախագծերին, թուրք քաղաքացիների բնակեցում գործունեության փաստորեն բոլոր ոլորտներում: Անկարան Աջարիան համարում է փաստորեն սեփական տարածք եւ պատրաստ է վիճարկել, այդ թվում ԱՄՆ-ի հետ, Բաթումի մոտակայքում սեփական ռազմակայաններ ստեղծելու իրավունքը: Անկարայի հաջորդ քայլն ուղղված կլինի Աբխազիային: Ռազմական ճանապարհով դա անելը բավական դժվար կլինի, մինչդեռ իշխանափոխության ալիքը միանգամայն ընդունելի տարբերակ է: Եվ Սուխումի ներկայիս խռովությունները հենց այդ սերիայից են:

Աբխազները դժգոհ են Ռուսաստանի վերաբերմունքից. ֆինանսական հոսքը զգալիորեն նվազել է: Նույն պատճառով դժգոհ են նաեւ իրենց նախագահից: Բագապշի օրոք այն ավելի զգալի էր: Ենթադրվում է, որ ապագայում Աբխազիան կբաժանեն, ամենայն հավանականությամբ կկտրեն Ռուսաստանից:

ՏԱՍՍ գործակալությունը հաղորդում է, որ նախագահ Խաջիմբան ի վերջո հրաժարական է տվել: Հունվարի 13-ին երկրի խորհրդարանը արտահերթ նիստում ընդունել է հրաժարականը: Սպասվում են նախագահական նոր ընտրություններ:

**Ա. ՔԵՇԻՇՅԱՆ**

# Կանադայի բարձրագույն պատվանշանը դոկտ. Արշավիր Գյոնջյանին եւ Գրեգ Սարգիսյանին


Արշավիր Գյոնջյան


Գրեգ Սարգիսյան

Կանադայի գլխավոր դատավոր Ռիչարդ Ուագների գլխավորած պատվանշաններ շնորհող խորհրդատու հանձնախմբի հանձնարարականի հիման վրա դեկտեմբերի 28-ին Կանադայի ընդհանուր կառավարիչ Ջուլի Պայեթը հայտարարել է, որ 120 հոգի արժանացել են Կանադայի բարձրագույն պատվանշանին, որ հիմնվել է 1967-ի հուլիսի 1-ին կոնֆեդերացիայի ստեղծման 100-ամյակի առթիվ, եւ տարին երկու անգամ շնորհվում է, խիստ բծախնդիր քննարկումների արդյունքում, մարդկանց, որոնք բացառիկ ծառայություններ են մատուցել երկրին:

Հպարտությամբ արձանագրում ենք, որ բարձրագույն պարգեւին արժանացել են հայ համայնքի ճանաչված հասարակական գործիչներ՝ գիտնական եւ առաջին հայ-կանադական կրթօջախի ու բազմաթիվ ենթակառույցների հիմնադիր դոկտ. Արշավիր Գյոնջյանն ու գործարար եւ Տորոնտո Համալսարանի ցեղասպանության եւ մարդու իրավունքների ծրագրի, ինչպես նաեւ Զորյան ինստիտուտի հիմնադիր (եւ ներկա նախագահ) Գրեգ (Գուրգեն) Սարգիսյանը:

Ստեղծման օրվանից ավելի քան 6 հազար մարդ, տարբեր բնագավառներից, արժանացել է այդ պարգեւին, սակայն ազգությամբ հայերի թիվը եղել է խիստ սահմանափակ: «Միրոր-Սփեքթեյթր» թերթի տեղեկատվությամբ՝ Կանադայի ասպետի կոչում է շնորհվել լուսանկարիչ Յուսուֆ Քարշին (1990-ին) եւ ռեժիսոր Ատոմ Էգոյանին (2015-ն), իսկ պետական ծառայողի օրդենը շնորհվել է Շառլ Ազնավուրին (2008-ին):

«Բարձրագույն պարգեւի արժանանալու լուրը հեռախոսով ինձ հայտնեցին գլխավոր կառավարչի քարտուղարությունից: Ցնցված էի, զարմացած եւ անշուշտ հուզված: Նման բան հաճախ չի պատահում: Շնորհակալություն եւ երախտագիտությունս հայտնեցի, որ երկիրը գնահատում է իր ծառայությունները: Հետո 50 տարիների իմ աշխատանքը հայ համայնքում ֆիլմաշարի տեսքով անցավ իմ աչքերի առջեւից: Անհաս ներգաղթողներից մենք կարողացել էինք ստեղծել լավ կազմակերպված մի համայնք իր եկեղեցիով, կրթական հաստատություններով եւ մամուլի օրգաններով: Դա իսկապես մեծ ձեռքբերում էր», նշել է դոկտ. Ա. Գյոնճյանը պարգեւատրման առթիվ:

**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**
**(The Arm. Mirror-Spectator)**

***«Ազգ»-ը** ջերմորեն շնորհավորում է իր պատվական երկու բարեկամներին՝ Ռամկավար Ազատական կուսակցության եւ ՀԲԸՄիության վետերան ղեկավար դոկտ. Արշավիր Գյոնջյանին եւ Ցեղասպանության ուսումնասիրման ու հանրայնացման գործում կարեւոր դերակատար Զորյան ինստիտուտի հիմնադիր նախագահ Գուրգեն Սարգիսյանին՝ պետական բարձրագույն պատվանշանին արժանանալու առթիվ:*

# Ռուսական հանդեսը՝ Փարաջանովին




Նովոսիբիրսկում 2000 թվականից լույս տեսնող «Քննադատություն եւ նշանագիտություն» հանդեսի՝ անցյալ տարեվերջին հրատարակված 2019 թվականի 2-րդ պրակը բացվում է Սերգեյ Փարաջանովին նվիրված հինգ հոդված-ուսումնասիրություններով՝ վերջինիս ծննդյան 95-ամյակի առիթով: **Լեւոն Աբրահամյանի** (ՀՀ ԳԱԱ Ազգագրության եւ հնագիտության ինստիտուտ) «Նոթեր Փարաջանովի պոետիկայի մասին» հոդվածում հեղինակը քննում է Փարաջանովի ստեղծագործության բանաստեղծականությունը, նրա ավարտված եւ չկայացած ֆիլմերը, կոլաժներն ու կյանքի դրվագները: Մանրամասն վերլուծվում է «Նռան գույնը» ֆիլմը, որտեղ հոդվածի հեղինակը նկարահանվել է դրվագային դերակատարմամբ, ուստիեւ ծանոթ է կինոնկարի ստեղծման մի քանի ներքին ասպեկտներին: **Տիգրան Ամիրյանի** (Ռուս-հայկական համալսարան) «Տեսողական ինքնագեղարվեստականացման առանձնահատկությունը Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության մեջ» հոդվածում փորձ է արվում հայտնաբերել արվեստագետի ֆիլմերում, կերպարվեստի գործերում, նամակներում ինքնագեղարվեստականացման (աուտոֆիկսացիա) դրսեւորումները: **Սվետլանա Սարգսյանի** (Երեւանի պետական կոնսերվատորիա) «Երաժշտական ֆենոմենը Սերգեյ Փարաջանովի ֆիլմերում» ուսումնասիրության մեջ քննվում է երաժշտության եւ կինոյի փոխկապակցվածությունը, արվեստի տեսակների՝ որոնք հարյուրամյակի ընթացքում դրսեւորել են բազմազան սինթեզ նշանագիտական եւ ֆենոմենոլոգիական մակարդակներում, իսկ դրանց փոխկապակցվածությունը ստեղծում էր դրանց գոյության նոր էական մի ձեւ: Երեւանցի հետազոտող **Էլզա-Բաիր Գուչինովայի** (Կալմիկիայի գիտահետազոտական կենտրոնի հեռակա գիտաշխատող) «Սեւ արեւ եւ ցանկապատված ազատ տարածք. անազատության պատկերները Սերգեյ Փարաջանովի ու Կաձուկի Յասուդայի գործերում» հոդվածում զուգադրված են խորհրդային բանտային գողգոթայով անցած Փարաջանովի եւ սիբիրյան աքսորավայրում պտրած ճապոնացի նկարիչ Յասուդայի ճակատագրերը: Իսկ **Անահիտ Միքայելյանի** (Երեւանի Սերգեյ Փարաջանովի թանգարան) «Բանտի ազգագրությունն ըստ Փարաջանովի» հոդվածը նվիրված է արվեստագետի ստեղծագործության բանտային ժամանակահատվածին՝ 1973-1977 թվականներին: **Ա. Բ.**

# Անմիտ ընդդիմադիրների հերթական ներկայացումը

**Գեւորգ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ**

Մոտ մեկուկես տարի առաջ, երբ Բելառուսիայի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, մեղմ ասած, լավ չխոսեց մեր վարչապետի հետ կամ վարչապետի մասին, հայաստանյան ընդդիմադիր ուժերը վիրավորվելու եւ անհանգստանալու փոխարեն սկսեցին բռնել Լուկաշենկոյի տաբատի փողքերն ու ցեխ շպրտել Նիկոլ Փաշինյանի վրա:

Անշուշտ, դրանք ընդդիմադիրներ չէին, դա մարդկանց այն խումբն էր, ավելի ճիշտ՝ տեսակը, որը խոսում է ազնիվ ընդդիմության, պետականամետության, հայրենասիրության ու արժանապատվության դիրքերից՝ որեւէ կապ չունենալով նշվածներից որեւէ մեկի հետ: Դա հատուկ՝ ընդդիմադիրի տեսակն է, կատեգորիան, տիպը, դասը, հորդան, որը փող է ստանում խոսելու, ներեցեք, սեփական երկրի ղեկավարի վրա ցեխ արձակելու համար:

Այդ զանգվածին օրերս մեծ հաճույք էր պատճառել նաեւ Վրաստանի նախկին նախագահ Միխայիլ Սաակաշվիլու՝ ՀՀ վարչապետին ուղղված հեգնանքը՝ կապված ՀՆԱ-ի աճի՝ Հայաստան-Վրաստան ցուցանիշների հետ:

Իհարկե, ինչպես միշտ, վարչապետը պոպուլիզմի լոգանք էր ընդունել ու որոշել ավելիս անել ժողովրդին՝ հայտարարելով, թե մեր ՀՆԱ-ն գերազանցում ե՛ւ Ադրբեջանի, ե՛ւ Վրաստանի ՀՆԱ-ին: Ինչպես ենթադրելի էր, Վրաստանի արտգործնախարարությունն արձագանքեց այդ հայտարարությանն ու բերեց փաստեր, որոնք վարչապետին համոզեցին, որ ինքը սխալ է: Բայց դառնանք բուն ասելիքին:

Սաակաշվիլին, անդրադառնալով ՀՀ վարչապետի գրառմանը, հայտարարել էր, որ Հայաստանը Տիգրան Մեծից հետո երբեւէ տնտեսապես չի գերազանցել Վրաստանին. հայտարարությունը պարուրված էր անթաքույց հեգնանքով, ծաղրով:

Ինչպես Լուկաշենկոյի դեպքում, այս անգամ էլ գտնվեցին մարդիկ, որոնք մի կողմ դնելով ազգային արժանապատվությունը, սկսեցին դրոշակ դարձնել Սաակաշվիլու խոսքերը եւ այն օդում թափահարելով փորձեցին եւս մեկ հարված հասցնել սեփական սխալների ձեռքից իրեն ու պետությանը կրակի մեջ գցած մեր հպարտ վարչապետին: Ներողություն, բայց դա պետականամետ մարդու արարք չէ: Պետականամետը նա է, որը հարցերին սթափ է մոտենում, ի հարկին պարզաբանելով, առանց ծաղրուծանակի ու հռչակների կոչերի վերածելու:

Ինքս կեցվածքով ու մոտեցումներով ընդդիմադիր եմ, իշխանությունների հասցեին բազմիցս կոշտ ձեւակերպումներ եմ արել (առաջիկայում էլ անելու եմ, եթե հարկ լինի. կլինի՛), բայց ինձ համար խիստ ամոթալի ու վիրավորական է, երբ որեւէ օտարերկրյա պաշտոնյա (ներկա կամ նախկին) հեգնական կամ վիրավորական տոնով է խոսում իմ երկրի ղեկավարի մասին, անկախ այն բանից, թե ով է այդ ղեկավարը:

Իհարկե, Նիկոլ Փաշինյանը որեւէ աղերս չունի իմ երազած ղեկավարի հետ, ես դա գրել եմ ե՛ւ սոցցանցերում, ե՛ւ տպագիր ու առցանց մամուլում, բայց, ընկերներ, գոյություն ունի ազգային արժանապատվություն, որը ներսից պետք է արգելի մեզ ուրախանալ մեր երկրի ղեկավարի ձախորդություններով, առավել եւս, երբ ինչ-որ Սաակաշվիլի ծաղրում է նրան, մի մարդ, որը տեղ չունի անգամ սեփական երկրում...արդարացիորեն տեղ չունի:

Այո՛, վարչապետն արագորեն սպառում է իր քաղաքական կապիտալը, մենք դրա մասին խոսում ենք եւ առաջիկայում էլ պարտավոր ենք խոսել, հարկ եղած դեպքում՝ այդ ամենը կարող ենք ասել կոպիտ, կոշտ, բայց դա մեր պետության ներքին խնդիրն է: Իսկ դրսի հարցում՝ վերոնշյալ ազգային արժանապատվությունը պետք է համոզի, խնդրի, ստիպի ու հորդորի, որ պաշտպանենք այն մարդուն, որը ղեկավարում է մեր երկիրը՝ նրա հետ ունեցած մեր խնդիրները լուծելով ներքին խոհանոցում:

Վարչապետը վա՞տն է՝ փոխենք, բայց երբեք չհաշտվենք այն մտքի, որ որեւէ Լուկաշենկո կամ Սաահակաշվիլի կարող է վիրավորել կամ հեգնել Հայաստանի Հանրապետության ղեկավարին, այսինքն մեզ:

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի (ԱՍԱԼԱ) հիմնադրության 45-ամյակի առթիվ, կիրակի, հունվարի 19-ին, ժամը 15:00-ին, Եռաբլուրի փառքի պանթեոնի ԱՍԱԼԱ-ի նահատակների հուշահամալիրում տեղի կունենա հիշատակի միջոցառում: Կմատուցվի հոգեհանգիստ Հայրենիքի ազատագրության ճանապարհին ընկած նահատակների ու մահացած նվիրյալների համար, կհնչեն ելույթներ եւ երգեր: Փա՜ռք մեր ժողովրդի հերոս նահատակներին:

**Հայկական Ժողովրդային Շարժում**
**Երեւանի գրասենյակ**



«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԹԵՔԵՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Թեքեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 19.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 16.1.2020, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUIT.qxd 16/01/2020 17:19 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ

Թիվ 2(462)
17 ՀՈՒՆՎԱՐ
2020

Սվետլանա ԳՈՒԼՅԱՆ

# ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ
# Արմեն Ջիգարխանյանի հետ

*Հայաստանի հեռուստատեսությունում ութ տարուց ավելի աշխատելու ժամանակամիջոցում ինձ բախտ վիճակվեց մի քանի հարցազրույց անցկացնել հիանալի դերասան, հրաշալի մարդ ԱՐՄԵՆ ՋԻԳԱՐԽԱՆՅԱՆի հետ: Արմեն Բորիսովիչի հետ բոլոր զրույցները հետաքրքրական էին: Այդ պատճառով, աշխատանք սկսելով «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի նյութի վրա, մտքովս անցավ միավորել տարբեր ժամանակներում անցկացված հարցազրույցների լավագույն մասերը: Արմեն Ջիգարխանյանի հետ վերջին հարցազրույցը տեղի էր ունենում Մոսկվայում: Ընդ որում, իմ պրակտիկայում առաջին անգամն էր, որ նկարահանում էր կատարվում առանց նախնական զրույցի: Երկուսիս համար էլ ամենահարմար ժամանակը կիրակի երեկոյան ժամը 10-ն էր, նրա տանը: Ինձ ներհատուկ ճշտապահությամբ՝ ես Արմեն Բորիսովիչի տանն էի օպերատորի հետ: Նա մեզ դիմավորեց շատ բարեհամբույր կերպով: Եվ այստեղ պատահեց անսպասելին՝ վերելակից դուրս եկող օպերատորի հետեւից փակվեց դուռը. օպերատորը հայտնվեց աստիճանավանդակի վրա, իսկ նրա սարքերը՝ վերելակում: Վերելակի դուռը բացելու բոլոր փորձերն անցան ապարդյուն: Վերելակի վարպետի որոնումները ժամեր տեւեցին: Մի խոսքով, Արմեն Բորիսովիչի հետ մեր զրույցը սկսվեց կես գիշերից բավական անց: Զարմանալի է, բայց ո՛չ Արմեն Ջիգարխանյանը, ո՛չ էլ նրա տիկին Տատյանա Վլասովան այս կատակցությամբ որեւէ դժգոհություն չարտահայտեցին: Ավելին, Տատյանա Սերգեեւնան անմիջապես մեզ սկսեց հյուրասիրել մուրաբայով ու թեյով: Տվյալ իրավիճակում առաջին հարցն ինձ թվաց առավել բնական:*

**- Ինչո՞ւ ընտրեցիք դերասանի մասնագիտությունը:**

- Մորս շնորհիվ է: Նա շատ էր սիրում թատրոնը, հաճախում էր բոլոր պրեմիաներին եւ ինձ տանում էր իր հետ: Ես իհարկե, սիրահարվեցի թատրոնին եւ արդեն դեռահասության շրջանում ընտրեցի իմ կյանքի հետագա ուղին: Դերասանի մասնագիտության մասին երազում էի մանկուց, թեեւ արտաքուստ դա որեւէ ձեւով չէր դրսեւորվում. գեղարվեստական ինքնագործունեությանը բնավ չեմ մասնակցել, բանաստեղծություններ չեմ արտասանել: Դպրոցից հետո մեկնեցի Մոսկվա: Փորձեցի ընդունվել Թատերական արվեստի պետական ինստիտուտի դերասանական ֆակուլտետ: Չընդունեցին ընդգծված հայկական առոգանության պատճառով: Վերադարձա Երեւան եւ սկսեցի աշխատել «Հայֆիլմ» կինոստուդիայում որպես օպերատորի օգնական: Ընդունվեցի Երեւանի Թատերական ինստիտուտ: Դեռ ուսանողական տարիներին սկսեցի նկարահանվել կինոյում:

**- Դուք գիտե՞ք Ձեր տոհմաբանությունը:**

- Մի քիչ: Հորս նախնիները սերում են թիֆլիսահայերի հին տոհմից: Բայց ես հորս չեմ հիշում եւ չեմ ճանաչում: Դեռ փոքր երեխա եմ եղել, երբ նա թողել է ընտանիքը: Մեծացել եմ ռուսալեզու միջավայրում, սովորել ռուսական դպրոցում, որտեղ միատեսակ ջանադրությամբ յուրացրել եմ հայկական եւ ռուսական մշակույթների տարրերը:

**- Ինչպե՞ս է սկզբնավորվել Ձեր դերասանական ճակատագիրը:**

- Ինչպես արդեն ասել եմ՝ ընդունվեցի Երեւանի Գեղարվեստաթատերական ինստիտուտ՝ Արմեն Գուլակյանի խումբ: Ուսանողական կյանքի մանրամասնությունները չեմ հիշում, բայց հիշում եմ այն ամենը, ինչ մեզ ուսուցանում էր Արմեն Կարպովիչը: Ինստիտուտի պատերի ներսում թատերական-բոհեմական մթնոլորտ չկար: Գոյություն ուներ գործի ուսուցման իրավիճակ: Բոլոր չորս տարիներին մեզ տանում էին թատրոն, եւ մենք աշխատում էինք թատրոնին շատ մոտիկ պայմաններում: Պրոֆեսիոնալ առումով ձեւավորվել եմ Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում, որտեղ սկսեցի աշխատել դեռ երկրորդ կուրսում:

Դա շատ վաղուց էր: Երեւան հյուրախաղերի էր եկել այն ժամանակ արդեն շատ հայտնի Յուլիա Բորիսովան: «Իրկուտսկյան պատմություն» ներկայացման մեջ նա խաղում էր գլխավոր հերոսուհու դերը: Սքանչելի էր խաղում: Նրա յուրաքանչյուր մուտքը ուղեկցվում էր բուռն ծափահարություններով:

**- Ես ներկա եմ եղել այդ ներկայացմանը, եւ իմ՝ սկսնակ լրագրողուհու ուշադրությունը լիովին գրավեց ոչ թե նա, այլ իր խաղընկերը՝ Երեւանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի երիտասարդ դերասան Արմեն Ջիգարխանյանը: Դուք հիշո՞ւմ եք այդ ներկայացումը:**

- Իհարկե, հիշում եմ, դա հրաշալի ներկայացում էր: Ամենքը խաղում էին մեծ վերելքով: Այդ հիանալի կնոջ ներկայությունը բոլոր դերասաններին լիցքավորում էր ցնցող էներգիայով: Եվ ես էլ բացառություն չէի: Ինձ համար շատ հեշտ էր նրա հանդեպ սիրահարվածություն խաղալ: Յուլիա Կոնստանտինովնան սոսկ հրաշալի դերասանուհի չէ: Նա Մեծ դերասանուհի է:

**- Ի՞նչն եք ձեռքբերում համարում վերջին տարիների աշխատանքներում:**

- Արված աշխատանքի մասին միշտ էլ դժվար է խոսել տարբեր պատճառներով: Հիմնական պատճառը անհամապատասխանությունն է այն բաների միջեւ, ինչը ուզել եմ անել եւ ինչը ստացվել է: Բեմի եւ էկրանի վրա խաղացվածի մասին խոսելու ցանկության դեպքում հարկ է լինում խոսել մտադրության մասին: Իսկ դա շատ երկար եւ երբեմն էլ անհասկանալի խոսակցություն է: Ուստի ինձ թվում է, որ երբ խոսք է բացվում այդ մասին, ավելի լավ է խոսել հակումների մասին, այն մասին, թե դերասանը ինչ է ջանացել կամ ձգտել անել, եւ ինչում դա չի կայացել: Վերջին ժամանակներս ինձ համար հետաքրքիր էր նկարահանվելը Էդմոն Քեոսայանի «Լքված հեքիաթների կիրճը» եւ Ն.Հովհաննիսյանի «Հարսնացուն հյուսիսից» ֆիլմերում: Թատրոնում շատ լարված աշխատանք է ընթանում Է. Ռաձինսկու «Զրույցներ Սոկրատեսի հետ» պիեսի վրա:

**- Ես ներկա եմ գտնվել այդ ցնցող ներկայացման փորձերին: Սոկրատեսի կերպարը երկար մնում է հիշողության մեջ: Կարո՞ղ եք արդյոք ավելի մանրամասն պատմել դրա մասին:**

- Դա ինձ համար շատ թանկ ներկայացում է: Անտիկ փիլիսոփա, ճշմարտության մարտիկ Սոկրատեսի կյանքը պայծառ դաս է երկրագնդի վրա ապրող բոլոր մարդկանց համար: Ներկայացման մեջ արտացոլված են նրա կյանքի վերջին տարիները: Սոկրատեսը ապշեցուցիչ, մարդկության պատմության մեջ թերեւս ամենապայծառ անձնավորությունն է: Ըստ էության, նա դրամայի էպիկենտրոնն է: Այդ հանճարեղ անձնավորության կերպարի վերստեղծման դժվարությունն այն էր, որ Սոկրատեսի դավանած բարոյաէթիկական օրենքները, որոնցով ինքն ապրում էր, հայտնի են ամենքին: Դրանք հայտնի եւ հասկանալի են նույնիսկ երեխաներին: Մեր բավական բարդ եւ ցինիկ դարում քչերն են հետեւում այդ օրենքներին: Մեր առջեւ խնդիր էր դրված թափանցելու հանդիսականների հոգու մեջ եւ նրանց վերադարձնելու տարրական հասկացություններին, որոնցից սկսվում է մարդը: Դժվար էր մտնել այդ կերպարի մեջ: Ինձ թվում է՝ մեր գտած Սոկրատեսի կերպարի պատկերը ճիշտ է: Նա ամրակազմ է, կրում է հնամաշ պարեգոտ: Դրանում երեւում է նրա պլեբեյական ծագումը, չէ՞ որ նա հյուսնի որդի է: Մենք ուզում էինք ընդգծել Սոկրատեսի դյուրահաղորդությունը, զվարթությունը եւ հեգնականությունը: Հեգնանքը նրա հայացքների համակարգի կարեւորագույն գծերից մեկն է: Դրանում թաքնված է խոր հետաքրքրություն յուրաքանչյուր մարդու հանդեպ: Սոկրատեսի կերպարը կազմված էր երկու մասից՝ հասարակ, ամենքին հավասար մարդուց եւ անհասանելի իմաստունից: Սոկրատեսն ասում էր. «Ես չունեմ աշակերտներ, ես ունեմ զրուցողներ»: Ես ուզում էի ընդգծել նրա հռչակած շփման ժողովրդայնությունը, այսինքն՝ միմյանց հանդեպ զրուցակիցների պահանջմունքը, փոխհարգալից վերաբերմունքը որպես իսկայական արժեք: «Ուսուցիչն այն մարդն է, որը կարողանում է իր գիտելիքներն անտեսելով՝ իջնել աշակերտի մակարդակին եւ նրա հետ մեկտեղ ելնել գիտելիքների բարձունքները»: Իմաստնության բարձրագույն համեստությունը Սոկրատեսն է:



**- Հետաքրքրական է, բայց չէ՞ որ Դուք մարդկության կյանքի այդ պայծառ կերպարը շարունակեցիք «Ներոնի եւ Սենեկայի ժամանակների թատրոնը» ներկայացման մեջ, բայց արդեն Ներոնի կերպարում:**

- «Հետազոտե՛նք»: Այդ արտահայտությամբ է ավարտվում «Զրույցներ Սոկրատեսի հետ» ներկայացումը: Մենք ուզում էինք, որ մեծ իմաստունի կոչը առավել հաստատակամորեն հնչի «Ներոնի եւ Սենեկայի ժամանակների թատրոնը» ներկայացման մեջ: Որպեսզի դահլիճում նստած հանդիսականները խորհրդածեն մոլորակի ճակատագրի մասին, մարդկության փորձառության մասին, պատմության դասերի մասին: Պատմության մեջ բռնակալության եւ անօրինակ դաժանության խորհրդանիշ դարձած Ներոնի կենսագրությունը նույնպես դաս է, բայց դառը եւ սարսափազդու: Այդ պատմական կերպարները մեզ համար հավասարապես կարեւոր են նրանով, որ օգնում են գլուխ հանել ներկա օրվանից, խորհրդածել ապագայի մասին: Այս իմաստով Ներոնի դերը բարդ է: Դրա ընկալմանը խանգարում է գոյություն ունեցող կարծրատիպը: Մեր գիտակցության մեջ ձեւավորվել է ինչ-որ բռնապետի, մարդասպանի, բռնակալի բացասական կերպար: Հարկավոր է փորձել ցույց տալ այն մարդուն, որը ոչ միայն կայսր էր, այլեւ դերասան, որը իր բեմական հաջողությունը իշխանությունից բարձր էր գնահատում: Դերասան, որին բորբոքված սնափառությունը անկասելիորեն տանում էր թատրոն, դեպի հանդիսականներ: Մենք հենց այդպես էլ խաղում ենք Ռաձինսկու այդ ողբերգական ֆարսը. խաղում ենք թատրոն թատրոնի մեջ: Այդ հնարքն օգնում է ավելի լավ հասկանալ եւ բացահայտել հերոսի ներաշխարհը, նրա մտքի գաղտնի դրդապատճառները, նրա վարքագծի շարժառիթները:

**- Ձեր կյանքում որեւէ դեր խաղացե՞լ են արդյոք Ձեր ուսուցիչները:**

- Իմ կյանքում եղել է մեկ ուսուցիչ՝ Երեւանի Թատերական ինստիտուտի պրոֆեսոր Արմեն Կարպի Գուլակյանը: Նա պրոֆեսոր էր բոլոր առումներով: Երեւանի ամեն տեսակ դժոխային տապերին նա խստաոճ կոստյումով էր: Օսլայած սպիտակ օձիքը եւ սպիտակ թեւքերը մշտապես փայլում էին: Ռեժիսորական սեղանիկի վրա միշտ մաքուր սփռոց կար: Նա հանում էր ձեռքի ժամացույցը, դնում սփռոցին, եւ փորձը սկսվում էր: Նրա ներկայությամբ շատ արագ մոռացվում էին նախորդ օրվա շատ հաճելի երեկոյի հիշողությունները, նաեւ հոգսերը: Նա մեզանից չէր պահանջում մեր ունակությունների այսրոպեական դրսեւորում, նա պահանջում էր աշխատանք սկսել: Նա գիտեր ներշնչանքի գինը, բայց մեզ սովորեցնում էր աշխատել:

➡ Գ

AZG NEW MSHAKUIT.qxd 16/01/2020 17:19 Page 2



Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Սպարտակ Խաչանով. «Ուրախ կլինեմ հայրենիքում հանդես գալ նոր նախագծով...»

*Ադրբեջանում ծնված, Հայաստանում եւ Ուկրաինայում ապրած, այժմ ֆիննական կղզում բնակվող երիտասարդ քանդակագործ Սպարտակ Խաչանովը անցած տարվա սկզբին հայտնվել էր միջազգային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում՝ իր ստեղծագործության եւ պետության անհանդուրժողականության բախման հետ կապված սկանդալային պատմության պատճառով...*

*Այս եւ այլ հարցերի մասին մենք զրուցում ենք ստորեւ ներկայացվող հարցազրույցում...*

**-Սպարտակ, առաջին անգամ քո մասին կարդացի ոչ ավելին, ոչ պակաս, «Վաշինգտոն փոստ»-ում, թե ինչպես ուկրաինացի ազգայնականների պատճառով ստիպված ես եղել հեռանալ Ուկրաինայից Ֆինլանդիա: Ըստ քեզ՝ այս միջադեպը քեզ համար անուղղակի փիար չդարձա՞վ:**

-2018 թվականի դեկտեմբերի 19-ին ես սկսեցի իմ նոր նախագիծը՝ «Ֆալլոսների շքերթը»: Դա հակապատերազմական նախագիծ էր, երգիծանք ընդդեմ ողջ աշխարհի ռազմական շքերթների եւ հատուկ չէր ներկայացնում որեւէ կոնկրետ բանակ ու պետություն: Նախագիծը ցուցադրվեց Գեղարվեստի եւ ճարտարապետության ազգային ակադեմիայում, երբ ես չորրորդ կուրսի ուսանող էի: Մեզ առաջարկեցին ազատ թեմա, եւ ես իմ աշխատանքները ցուցադրեցի ակադեմիայի կենտրոնական դահլիճում: Ցուցահանդեսը, որն ուներ 100 մետր երկարություն, դուր չեկավ դիզայնի բաժնի դասախոս **Վլադիմիր Խարչենկոյին**, որը կամավոր էր եղել Ուկրաինայի արեւելքի պատերազմում: Նա որոշեց, որ դա ծաղր է ուկրաինական բանակի հասցեին, սպառնաց ու վիրավորեց ինձ, եւ երբ հասկացավ, որ ես չեմ պատրաստվում հանել այն, սկսեց ջարդուփշուր անել, նաեւ ակադեմիա կանչեց իր ընկերներին՝ «C-14» նեոնացիստական խմբին, որը սպառնաց սպանել ինձ: Այս պատմությունը դուրս եկավ ակադեմիայի եւ Ուկրաինայի սահմաններից, իմ մասին իմացան աշխարհի շատ երկրներում, ուստիեւ, ամենայն հավանականությամբ, դա փիար դարձավ Ուկրաինայի ողջ հնացած կրթական համակարգի համար, որտեղ դեկանները 30 տարի հետ են մնացել՝ Ֆիդել Կաստրոյի ու այլ դիկտատորների պես: Այսպիսով, ես նախ իմ սեփական փորձից իմացա, որ Ուկրաինայում չկա խոսքի ազատություն, եւ նեոֆաշիստական կազմակերպությունները իրենց կուրատորի տեղ են դրել ու որոշում են, թե որն է արվեստը, իսկ որը՝ ոչ: Նրանք կարող են գալ բուհեր՝ նկարչական ցուցահանդեսի ու ամեն ինչ ոչնչացնել: Դժգոհությունն իմ աշխատանքից ու դրա ոչնչացումն առաջին դեպքը չէր վերջին հինգ տարիների ընթացքում: Իսկ Ուկրաինայի քաղաքացիները պատերազմի պատանդներ են. մեզ թույլ չեն տալիս արտահայտել մեր կարծիքը, մենք պարտավոր ենք լռել:

**-Իսկ հիմա ինչպե՞ս ես ապրում Ֆինլանդիայում: Կապեր ունե՞ս տեղի արվեստագետների հետ:**

-2018-ի փետրվարի 1-ին ես ժամանեցի Հելսինկի, հաստատվեցի Սուոմենլինա կամ Սվաբորգ կղզում՝ մի նախկին ռազմական ամրոց եւ համակենտրոնացման ճամբար, որն այժմ գտնվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտպանության ներքո: Երեք ամիս ապրել եմ Հելսինկիի արվեստագետների միջազգային ծրագրի կեցավայրում: Այս ընթացքում մեկնել եմ Բեռլին՝ մասնակցելու գերմանացի եւ ուկրաինացի նկարիչների խմբային ցուցահանդեսին, նվիրված ապակոմունիզացիային, ցուցադրվել եմ Հելսինկիի արվեստի թանգարանում եւ «Արկադիա» միջազգային գրախանութում: Իմ մուտքի արտոնագրի սպառվելուց հետո երեք ամիս ապրել եմ Բուլղարիայում՝ «Ռադար» կեցավայրում, որտեղ ցուցադրվել եմ Սոֆիայի «Անդերգրաունդ» պատկերասրահի «Ժամանակակից արվեստի շաբաթ» նախագծի շրջանակներում: Վերադառնալով Ֆինլանդիա՝ մեր կղզում կնոջս՝ Անաստասիայի հետ մշակեցինք «Օլիմպիական խաղեր. վերաբեռնում» լուսանկարչական նախագիծը, որն անցյալ սեպտեմբերին ցուցադրվեց Ֆինլանդիայի Խաղաղության կոմիտեի գրասենյակում եւ «Միիմալա-2» ցուցասրահում: Նոյեմբերին մասնակցել եմ «Վտանգի ենթարկված արվեստագետներ» ցուցահանդեսին Հելսինկիում՝ «Վանդակ» ձայնային ինստալացիայով, նվիրված սպիտակ եւ կարմիր ֆինների միջեւ քաղաքացիական պատերազմին: Մտադրություն կա այն ցուցադրել նաեւ Սուոմենլինա կղզում, որն Առաջին աշխարհամարտից հետո ամենամեծ համակենտրոնացման ճամբարն էր՝ 13300 բանտարկյալներով: Նոյեմբերին մասնակցել եմ նաեւ «Հելսինկիի արվեստագետների միջազգային ծրագրի Արվեստանոցի բացում. աշուն, 2019» ցուցահանդեսին՝ «Պանթեոն» ինստալացիոն նախագծով: Այժմ աշխատում եմ քաղաքական սատիրայի ոճի «Պատրաստված է Երկիր մոլորակում» խաղարկային կարճամետրաժ ֆիլմի վրա՝ Հելսինկիի Շարժվող մարդկանց եւ պատկերների ակադեմիա ընդունվելու համար, միաժամանակ նաեւ՝ պլաստիլինե կերպարներով մի կարճ անիմացիոն ֆիլմի վրա, որը կոչվում է «Մահվան հաղթարշավը»:

Այս ընթացքում հանդիպել եմ բազմաթիվ արվեստագետների, բեմադրիչների, դերասանների, երաժիշտների, գրողների, լրագրողների Ֆինլանդիայից եւ աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաեւ ֆինն քաղաքական գործիչների ու շատ այլ հետաքրքրական մարդկանց:









**-Դու ապրել ես տարբեր մշակութային միջավայրերում: Քո կարծիքով, ինչպե՞ս կարող է ժամանակակից արվեստում արտահայտվել այն, ինչը կոչվում է ազգային առանձնահատկություն:**

-Ժամանակակից արվեստը՝ քանդակագործություն, ինստալացիա, նկարչություն, լուսանկար, վիդեո եւ քանդակ, արվեստի լեզուներից մեկն է, որոնցում ազգային հասկացությունը կարծես թե ջնջվում է: Հելսինկիի նկարիչների համայնքը բաղկացած է տարբեր ազգություններից, իսկ նրանց արվեստում հուզող թեմաները համընդհանուր են՝ էկոլոգիա, գաղթեր, գենդերային պատերազմ, եւ յուրաքանչյուր ժամանակակից արվեստագետ, անկախ ազգությունից, արտացոլում է այս ամենը: Որպես արվեստագետ ես ինձ նույնացնում եմ այն բժշկի հետ, որը հիվանդին ախտորոշում է, բայց չի բուժում: Ես ուղերձ եմ հղում հասարակությանը, եւ ինձ համար կարեւոր է դիտողի վրա իմ աշխատանքի հուզական ազդեցությունը: Դրանով հանդերձ, ես չեմ միջամտում այդ «երկխոսությանը», այլ մնում եմ որպես կատարվածի դիտող: Իսկ իմ աշխատանքներում ազգային առանձնահատկությունն արտացոլվում է իմ թեմաների մեջ:

**-Խաչանով ազգանունն այժմ Ռուսաստանում հայտնի է թենիսիստ, Ռուսաստանի սպորտի վարպետ Կարեն Խաչանովի շնորհիվ: Ազգակա՞ն եք:**

-Խաչանով ազգանունն այժմ հայտնի է նաեւ Ուկրաինայում, իսկ Ֆինլանդիայում՝ լսելով: Խաչանովը Հայաստանում հազվադեպ ազգանուն է, այնպես որ ամեն ինչ կարող է լինել:

**-Դու Բաքվի հայերից ես, որոնք հայտնի իրադարձությունների պատճառով այսօր բնակություն են հաստատել ամբողջ աշխարհում: Ստացվում է, որ գաղթական ես դարձել երկրո՞րդ անգամ:**

-Ես ծնվել եմ 1984-ին Բաքվում: 1988-ին, Սումգայիթի ջարդերից հետո, ընտանիքով տեղափոխվեցինք Հայաստան՝ Կապան, որտեղից մայրս էր: Այն ժամանակ ես չորս տարեկան էի: Այնուհետեւ ծնողներս ու եղբայրս մեկնել են Ուկրաինա, եւ ես տատիկիս ու պապիկիս հետ մնացել եմ Կապանի Վաչագան գյուղում: 1991-ին ծնողներս ինձ տարել են Ուկրաինա՝ Դոնեցկի մարզի Սնեժնոե քաղաք: Պատերազմը մանկուց հետապնդել է ինձ: Ֆինլանդիայում ես քաղաքական ապաստան չեմ հայցել: Ավելի շուտ, ես երրորդ անգամ եմ դարձել գաղթական...

**-Ի՞նչ հիշողություններ ունես պատմական հայրենիքից:**

-Մանկությանս լավագույն ու ամենաջերմ հիշողությունները... Երբ իմացա, որ ինձ ուզում են Ուկրաինա տանել՝ ծնողներիս մոտ, ես փախա տատիկ-պապիկիցս ու թաքնվեցի սարերում, մինչեւ որ քեռի Մարտինը գտավ ինձ ու խոստացավ, որ մենք կգնանք ծնողներիս տեսնելու ու կվերադառնանք: Ես հավատացի նրան, բայց այդպես էլ այլեւս չվերադարձա: Ես նույնիսկ մի փայտե արձան եմ պատրաստել, որը կոչվում էր «Խաբեցին ու տարան», նաեւ գրել եմ մի կարճամետրաժ ֆիլմի սցենար՝ այս հիշատակի մասին: Եթե հնարավոր լիներ անցյալ վերադառնալ, ես ամեն ինչ կանեի, որ մնայի այնտեղ, բայց դա ինձանից չէր կախված: Ես սիրում եմ Հայաստանը, այն իմ հայրենիքն է:

**-Հայոց ցեղասպանության հարյուրամյակի տարում Խարկովում դու հանդես եկար այդ թեմայով նախագծով...**

-2013-2016 թվականներին ես աշխատել եմ Հայոց ցեղասպանությանը նվիրված քանդակների մի նախագծի վրա: Այդ ընթացքում քանդակներ եմ ստեղծել տարբեր նյութերից՝ փայտ, մետաղ, բրոնզ, քար, խեցեղեն, փրփրաբլոկ... 2014-2015 թվականներին աշխատել եմ Հայոց ցեղասպանությանը նվիրված մի նախագծի վրա, երկուսը վերնագրված էր «Գաղթականը» (փայտից ու բրոնզից), երրորդը՝ «Կյանքի անիվը»: 2014-ին մասնակցեցի Խարկովի հայ համայնքի կազմակերպած Մեծ եղեռնի հարյուրամյակին նվիրված հուշարձան ստեղծելու միջազգային մրցույթին: Ես ներկայացրի իմ «Կյանքի անիվի» պլաստիլինե էսքիզը ու գրավեցի երկրորդ տեղը: 2015-ին Խարկովի հայ համայնքից ինձ առաջարկեցին մասնակցել «Մեկը միլիոնուկեսից»՝ Ցեղասպանության հարյուրամյակին նվիրված ցուցահանդեսին «Բուզոկ» պատկերասրահում: Ես հաճույքով մասնակցեցի, ցուցադրեցի վերոնշյալ «Գաղթականը» քանդակներս: Իսկ «Կյանքի անիվը», պատրաստված մետաղից, փայտից ու քարից, դարձավ իմ դիպլոմային աշխատանքը Խարկովի գեղարվեստի քոլեջում, որը ես պաշտպանեցի գերազանց գնահատականներով եւ արժանացա կարմիր դիպլոմի:

**-Դու երկար ժամանակ չես եղել Հայաստանում: Ու չնայած հիմա աշխարհագրականորեն ավելի հեռու ես Հայաստանից, մտադիր չե՞ս վերադառնալ որեւէ նախագծով:**

-Հաճույքով, եթե ինձ առաջարկեն մասնակցել նախագծերի կամ կազմակերպվի իմ անհատական ցուցահանդեսը: Ես միմիայն կողմ եմ, եւ ուրախ կլինեմ հայրենիքում հանդես գալ նոր ստեղծագործական նախաձեռնություններով...

Ֆելիքս ԲԱԽՉԻՆՅԱՆ

# «...Կյանքը ի՞նչ է որ՝ Մի հին ու տարտամ շուտասելուկ»

## Յուրի Սահակյանի հիշատակին

2019-ի նոյեմբերի 24-ին իր մահկանացուն կնքեց ճանաչված բանաստեղծ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Յուրի Սահակյանը, որի ստեղծագործական ուղին կենսագրություն ունեցող ճանապարհ էր, կյանք՝ լցված սիրով հաղորդվելու եւ սեր հաղորդելու պահերով: Կյանք, որն ապացուցում էր, թե մարդկային գոյն աստվածային հրաշքի ծաղիկն է, եւ այդ ծաղկին հասկանալու համար անհրաժեշտ է կարողանալ լռության մեջ վար թափվող անձրեւի ձայնի հետ ընկնել ինքնասուզումների մեջ:

Ուսած խաչերի ծանրությունն իրար հետ կիսելու, ոչ թե խաչափայտն իբրեւ նյութական ունեցվածք իրարից խլելու, եւ դրանով իսկ կյանքն աղավաղելու մասին էր զրուցում մեզ հետ Յուրի Սահակյանը: Նրա խոսքերը համեմված էին ժողովրդական իմաստության փորձաքարով անցած խոսք ու խրատով, հայրենի Արցախի բնության պես պարզ, արդար ու մաքուր, խորհելու տանող եւ խորք ունեցող ձգողականությամբ:

Պատանեկան առաջին տողերից իսկ բանաստեղծը հավատացել էր, որ բառերով աշխատելու իրեն տրված շնորհը քաղցր ու անուշ զնգզնգոցով ավետում է այն ճանապարհի սկիզբը, որ հեռու-հեռավոր է, սակայն ոչ՝ անհասանելի:

Տակավին 60-ական թվականների սկզբներին գաղտնախորհուրդ լռության ծալքերն սկսեցին ետ բացվել Յուրի Սահակյանի բանաստեղծորեն շնչող ներաշխարհում: Միայն ինքը գիտեր, թե որքան է խորանում սեփական հայացքը սեփական հոգում, երբ փակում է աչքերը: Բռնելով իր ներսում ելեւէջող երգի տուտը, հարստացած հուզաշխարհում հայտնաբերած նոր ապրումներով՝ մի լուսավոր ու արեւային բանաստեղծական ճանապարհ է մտնում Յուրի Սահակյանը:

*Եվ եթե մեկն ասի՝*
*Կանգնել ես,*
*Լռել ես,*
*Քնել ես...*
*Ես միայն կժպտամ ասողին...*

Տարված իր ներսում բացվող գաղտնիքներով՝ բանաստեղծը հայտնաբերում է ողջ գաղտնիքն իր մեջ ամփոփող էությունը.



*Հայաստանը փնտրեցեք իմ մեջ:*

Իսկ Հայաստանը լեռ է դառնում, արեւ է դառնում, գետ ու հովիտ, եւ բանաստեղծը, հմայված այդ կերպափոխությունից՝ մի պահ կարկամում է.

*- Լեռներ իմ...*
*Իսկ հետո բառեր չկան,*
*Բառերի փոխարեն աշխարհն է:*

Բառերի ժլատություն կա երջանկության մեջ: Իսկ երջանկությունը նրանից է, որ «ամեն օր բարձրանում է արեւը», եւ՝

*Բարձրացնում են մայրերը որդիներին*
*Դեպի արեւը, դեպի գարունը:*

Այսպես է հաստատվում հավերժությունը: Մարդկային սիրտը հյուր է հավերժության «տաք վայրկյանի» մեջ, ուր «շտապում է Կատարյալի փեշը բռնելու...»:

Ներաշխարհային գաղտնիքների արահետները բռնած բանաստեղծին առավել սիրելի է անձայն արտասանած խոսքը, շշուկով արտաբերած բառը, միայն թե հնարավոր լինի այլոց համար նկատելի դարձնել դեպի իր սիրտը տանող լայն ճանապարհը: Անցյալով ստվարացած ձիեր ու ձիավորներ կան այդ ճանապարհին, «ավերակ տաճարի բեկորների միջից» ժպտացող դեմք կա, ստվերով օրից առաջ անցած այդ օրվա լույսը կա եւ քնքուշ կարոտներ, որոնց հետ հարաբերվելու համար հարազատներ է փնտրում բանաստեղծը.

*Հյուրընկալիր իմ կարոտը մի պահ,*
*Պահիր ինձ մի քիչ քո աչքերի մեջ:*

Ոչ միայն բառի, այլեւ մեկ հատիկ տառի զգացողությանը տիրապետող բանաստեղծ է Յուրի Սահակյանը, եւ նրա համար գաղտնիք չի բնավ, թե

*Մարդկային մի կյանք*
*Տեղավորվում է*
*Մի հատիկ տառում:*

Ճիշտ այնպես, ինչպես բանաստեղծի շուրթերից դուրս թռած «օ»-ն մի դեպքում ցավ է, ուրիշ դեպքում՝ հույս է, լուսաբաց է ու ժամանակ, նայած թե բանաստեղծի ապրումի ո՞ր պահին է իջել նրա հոգու թեւին:

Մինչ գալիք օրը կհասնի բանաստեղծին, նա արդեն վայելում է այդ օրվա լույսը: Մինչ հացը կհասնի նրա սեղանին, բանաստեղծն իրական է համարում հացի բազմացման օրինակը: Երկիրն իր լիության մեջ է ընկալում բանաստեղծը, եւ այս ամենի գաղտնիքը մեկ հատիկ խոսքի մեջ է: «Բարի օր»: Այս խոսքն իր ճշմարիտ կերպի մեջ ընկալելու եւ բաշխելու մեջ է գաղտնիքը.

*Մարդուն բարի օր ասեմ,*
*Կամենամ բարին,*
*Որ նա բարի մի գործին*
*Տասը գումարի:*

Բարին բաժանելով քայլելու մեջ է երջանկությունը: Ահա Յուրի Սահակյանի բանաստեղծական քայլի իմաստը: Քայլել բարիք բաժանելով, որպեսզի «չարն իրեն տեր չկարծի» Երկիր մոլորակին: Իսկ հուսահատության պահերն անհրաժեշտ է խառնել հին ու նոր վշտերի հետ եւ ուսն առնել խաչի նման: Մեր խաչը կրելը հեշտ է, քանի դեռ ընկալելի են Կոմիտասյան վարդապետի «Ես ու դու սեր ենք...» խոսքերը: Իսկ եթե «Ես ու դու սեր ենք...», եւ առավել եւս՝ «Սիրահարված այս աշխարհին», ուրեմն, ըստ բանաստեղծի, հնարավոր է փայփայել միակ հույսը, որպեսզի

*Չշտանա չարն աշխարհի...*

Բանաստեղծը հավատում է մարդուն: Հավատում է, որ նա լույսի եւ բարության զինվորագրյալն է: Այլապես հնարավոր չէ քաղցրացնել այն ունայնությունը, որ կյանք հանելուկի միակ պատասխանն է.

*Ծնվեցի՞ր՝ ապրես,*
*Ապրում ես՝ ապրես,*
*Մեռա՞ր՝ շատ ապրես...*
*Կյանքը ի՞նչ է որ՝*
*Մի հին ու տարտամ շուտասելուկ,*
*Սուտանելուկ ու*
*Սուտասելուկ ու*
*Սուտապրելուկ:*

Բանաստեղծ Յուրի Սահակյանի էությունն ամբողջականացնող նրա խոսքը՝ «Ամեն օր բարի օր», նման է շուտասելուկի, առանց որի հնարավոր չէ ճիշտ ապրել այս «Սուտասելուկը»:

Ցավոք, կտրվեց Յուրի Սահակյանի կյանքը հողի հետ կապող թելը, եւ նա արդեն ամբողջովին ոգեղենացավ ու այլեւս լուսահոգի է:

# ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

## Արմեն Ջիգարխանյանի հետ

**- Գոյություն ունե՞ն արդյոք դերասանական մասնագիտության գաղտնիքներ:**

- Անշուշտ, գոյություն ունեն: Մեզ մոտ երիտասարդ դերասաններին չեն սովորեցնում այդ գաղտնիքները եւ դերասանական անհատականության մեջ դրանց դրսեւորումը: Քանզի բավարար չէ միայն տաղանդավոր ծնվելը, պետք է կարողանալ դերասան լինել: Մարդուն տաղանդավոր դարձնելն անհնար է, բայց կարելի է նրան սովորեցնել դերասան լինել: Արմեն Կարպի Գուլակյանը դա մեզ ուսուցանում էր: Նա մեզ սովորեցնում էր աշխատել:

**- Ձեր վրա ազդու՞մ է արդյոք գործընկերների աշխատանքը:**

- Այո, շատ: «Սոկրատեսի հետ զրույցներում» կա ինձ համար շատ ծանր տեսարան: Սոկրատեսը, տեղեկանալով իր ընկերոջ վերաբերյալ դաժան ճշմարտությանը, բառացիորեն ջղաձգվում է տառապանքների մեջ: Ինձ՝ որպես մարդու՝ դա դժվար պահ է: Զուգահեռաբար տեղի է ունենում բանտապահի մենախոսությունը, որի դերակատարն է Վալենտին Պեչնիկովը: Դա հրաշալի մենախոսություն է: Գրեթե «գլուխգործոց»: Այդ մենախոսության յուրաքանչյուր նախադասություն կարող էր ուղեկցվել ծափողջույններով: Վալենտինի դերը դրանով փաստորեն ստացվում է: Ամեն մի դերասան այդ մենախոսությունը «ելույթ» դարձնելու գայթակղություն կունենար՝ դուրս գալ նախաբեմ եւ ըմբոշխնել հանդիսատեսների հիացմունքը: Բայց Վալենտինը դա չի անում, նա պարզապես դա իրեն թույլ չի տալիս: Նրա համար հիմա գլխավորը Սոկրատեսի տառապանքներն են: Այդ տեսարանից հետո ես ամեն անգամ մտածում եմ. «Շատ ապրես, Վալյա»: Դա դերասանական էթիկայի նման է, որը այնքան էլ հաճախ չի պատահում:

**- Տարիներ շարունակ Դուք բեմ եք դուրս գալիս նույն դերով եւ նույն տեքստով: Դա Ձեզ չի՞ ձանձրացնում:**

- Ես շատ կուզենայի պատասխանել՝ չի ձանձրացնում: Բայց ձանձրացնում է: Եվ բանը միայն տարիքը չէ: Դերասանի հոգնածությունը տարիքային գործոն չէ: Այն ի հայտ է գալիս պարբերաբար: Աշխատանքը ձանձրացրել է, դերը ձանձրացրել է, խաղընկերները ձանձրացրել են: Այստեղ փրկում են փորձը, ստեղծագործական կարգապահությունը, իրեն հաղթահարելու ունակությունը: Չպետք է զբաղվել ինքնամխիթարմամբ: Մեր շուրջը այնքան սփոփիչ բաներ կան: Սիրելի գրքեր, սիրելի երաժշտություն, սիրելի մարդիկ: Հարկավոր է «խորասուզվել» դրանց մեջ, եւ ամեն ինչ կանցնի: Հնարավոր է ձանձրացնի բուն «ձանձրացրեց» բառը, եւ վերադառնա ներշնչանքը: Իմ ուսուցիչ Արմեն Գուլակյանը միշտ ասում էր. «Պետք է խաղալ ինչ-որ մեկի համար»: Իսկ Էդիտ Պիաֆը մի առիթով ասել է. «Ես չեմ երգում բոլորի համար, ես երգում եմ յուրաքանչյուրի համար»: Մեր ներշնչանքը այդ «յուրաքանչյուրի համարի» մեջ է:

**- Դուք թատրոնում եւ կինոյում աշխատելու հսկայական փորձ ունեք: Պատրա՞ստ եք Ձեզ զգալ աշակերտ:**

- Իհարկե ոչ: Բայց այդուհանդերձ ամեն ինչ այդքան պարզ չէ: Ինձ քանիցս հրավիրել են ինստիտուտում դասավանդելու: Բայց ես հրաժարվել եմ: Վախենում էի, որ «ուսուցիչ» դառնալով, խոսքի մեջ վարպետանալով՝ կկորցնեմ անսալու ունակությունը: Կա «լսելու» ունակություն եւ կա «անսալու» ունակություն: Ինձ համար շատ կարեւոր է «անսալու» ունակությունը: Մոսկվայում հրաշալի, ամենատաղանդավոր երգիչ Շառլ Ազնավուրի հյուրախաղերի ժամանակ նրա պատվին հավաքվել էր երկրպագուների եւ պարզապես «բարձրաշխարհիկ» մարդկանց բազմություն: Նա խոսում էր թարգմանչուհու օգնությամբ: Կատարյալ լռություն էր: Հանկարծ նա կանգ առավ եւ մտահոգ կերպով ինձ հայերեն ասաց. «Նրանք ինձ չեն լսում»: Կա մարդու հանդեպ իրական եւ կա ձեւական ուշադրություն, երբ մտածում ես ոչ թե զրուցակցիդ, այլ քո մասին, այն մասին, թե ինքդ ինչպիսի տպավորություն ես գործում:

**- Ի՞նչ եք կարծում, հաջողությունը ուրախություն է, թե՞ փորձություն:**

- Անվիճելիորեն հաջողությունը լավ է անհաջողությունից: Ծափահարությունները միշտ էլ հաճելի են: Դերասանները եւ հանդիսականները ապրում են միմյանց համար: Բոյաջիեւն ասում էր, որ ոգեշնչված հանդիսասրահը արվեստի բարձրագույն ձեռքբերումն է: Հենց ոգեշնչված, այլ ոչ թե բորբոքված, ինչպես սիրելի, հանրահայտ երգչի համերգից հետո: Խորհրդածող դահլիճը բարձրագույն պարգեւն է դերասանի համար: Թեեւ դերասանի հաջողությունը ինչ-որ չափով նաեւ փորձություն է:

**- Ինչպե՞ս եք վերաբերվում արտաքին վերամարմնավորմանը:**

- Բոլոր դեպքերի համար դեղատոմսեր չկան: Ես Խլուդով եմ խաղում ամբողջական գրիմով, որն արված է թատերական բոլոր կանոններով: Սոկրատես նախապատրաստվելիս մենք երկար մտածում էինք՝ ես պետք է բեմ դուրս գամ «Սոկրատեսի դեմքով», թե՞ ոչ: Ռոմեն Ռոլանին են պատկանում այն խոսքերը, որ եթե դերասանը Համլետ է խաղում, ապա նա պարտավոր է գոնե մի քիչ Համլետ լինել: Դերասանը պետք է գտնի հերոսի, դերի հնարավորինս շատ շփման կետեր: Ստանիսլավսկին ասում էր, որ իդեալական դեպքում դերասանի սրտի զարկերի ռիթմը պետք է համընկնի հերոսի սրտի ռիթմին:

**- Ձեր սիրելի դերը թատրոնում:**

- Շատ եմ սիրում Սոկրատեսի դերը: Այն ինձ շատ բան տվեց: Նրա մեջ ամենագլխավորն այն է, որ ինքն ապրեց այնպես, ինչպես ուսուցանում էր:

Ռուս. թարգմ. ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆԸ

AZG NEW MSHAKUIT.qxd 16/01/2020 17:19 Page 4



# ՄԱՐԻՆԱ ԳՅՈՒՐՋՅԱՆ (1954-2019)

**ՆԱԶԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Արվեստագիտության դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող

***Մի քանի տարի առաջ, 2014 թ. Ամանորի նախօրեին, ես հարցազրույց ունեցա Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի 70-90-ական թթ. առաջատար մենապարուհի Մարինա Գյուրջյանի հետ: Հաջորդ տարի նա ծանր հիվանդացավ, եւ ահա 2019 թ. վերջին, հազիվ բոլորած իր 65-ամյա հոբելյանը, հեռացավ մեզնից... Նրա հիշատակին նվիրված սույն հոդվածում հարմար գտա հատվածներ բերել վերոհիշյալ հարցազրույցից:***

Սովորաբար շատ աղջիկներ մանկուց երազում են դառնալ պարուհի կամ դերասանուհի: Սակայն Մարինան (կամ, ինչպես սովորաբար նրան անվանում էին, Լոլան) բալետի արվեստով չէր հետաքրքրվում, սովորում էր Պուշկինի անվան միջնակարգ դպրոցում եւ հաճախում Հրանտ Շահինյանի մարմնամարզության դպրոցը: Մի օր դպրոց այցելեց Պարարվեստի ուսումնարանի դասավանդողների մի խումբ՝ պարային տվյալներով օժտված երեխաներ հայտնաբերելու նպատակով: Մարինայի տվյալները համապատասխանում էին, եւ նրան առաջարկեցին ուսումը շարունակել Պարարվեստի ուսումնարանում:

Մեր պարարվեստի ուսումնարանը բազում տարիների ընթացքում պատրաստել է բարձր մակարդակի պարող-պարուհիներ: Ուստի Մարինան մեծ հարգանքով էր վերաբերվում, իսկ հետագայում հիշատակում իր դասավանդողներին՝ Սիլվա Հովնանյանին, Ժասմենա Բաբախանյանին, Ելենա Սամուրղաշյանին, Վիկտոր Բորիսովին, Մարաս Մուրադյանին եւ, իհարկե, Մաքսիմ Մարտիրոսյանին:

«Ուսումնարանն ավարտելուց հետո,- պատմում էր Մարինան,- մեկ տարի ես աշխատեցի Սպենդիարյանի անվան թատրոնում, իսկ 1973 թ. ես եւ իմ համադասարանցի Ալբերտ Միրզոյանը (որն այժմ աշխատում է արտասահմանում որպես բալետի դասատու-փորձավար) մեկնեցինք Լենինգրադ՝ Վագանովայի անվան աշխարհահռչակ պարարվեստի ուսումնարանում կատարելագործվելու: Հիշում եմ, թե ինչպես ընդունելության քննությանը ջանք էինք թափում՝ ցույց տալ մեզ լավագույն մակարդակով, իսկ հաջորդ օրը արտատրոփ մտանք ուսումնարան, որպեսզի իմանանք մեր ճակատագիրը: Ես չէի հանդգնում մոտենալ, իսկ Ալբերտ Միրզոյանը «հերոսաբար» իրեն զննել ստիպեց ընդունվածների ցուցակը: Եվ հանկարծ ես նկատեցի, որ Ալբերտի դեմքը սկսեց հետզհետե ավելի ու ավելի կարմրել (նա սովորաբար շատ զուսպ էր արտահայտում իր զգացմունքները): Ես հասկացա, որ մենք ընդունված ենք: Անչափ մեծ էր մեր ուրախությունը: Վագանովայի անվան պարարվեստի ուսումնարանը մի կախարդական աշխարհ է. թե՛ ընդհանուր հեքիաթային գեղարվեստական մթնոլորտի, թե՛ դասավանդման եւ թե՛ ուսուցիչների եւ աշակերտների շփման առումով: Ես սովորում էի դասական պարի հանրահռչակ մասնագետ Ելենա Տյունտինայի դասարանում, իսկ բնութագրական պար ինձ դասավանդում էր Մարիինյան թատրոնի փայլուն պարուհի Իրինա Գենսլերը: Լենինգրադի ուսումնարանի դասերը շատ «ծանր» էին, տեխնիկայի տեսակետից հագեցված: Թե՛ Տյունտինան, թե՛ Գենսլերը, թե՛ այլ մասնագիտական առարկաներ դասավանդողները իսկույն սկսեցին «աշխատել» մեր կատարողական ոճի, պետերբուրգյան պարարվեստի հիմունքների՝ տեխնիկայի, դրվածքի եւ շարժումների կատարման «վերանայման» եւ պետերբուրգյան բալետի ավանդույթների ընկալման վրա: Դա, իհարկե, շատ ծանր պրոցես էր: Բայց ես համառորեն աշխատում էի կատարել բոլոր ցուցումները եւ ուղղել «թերի» կողմերը:



Իսկ դասարանից դուրս մեր դասատուներն անչափ ուշադիր էին մեր նկատմամբ, մարդամոտ, հաճախ հրավիրում էին իրենց տուն: Մի ծիծաղելի դեպք պատահեց մեզ Իրինա Գենսլերի տանը: Նա եղել էր Չինաստանում, ուստի իր աշակերտներին ցանկացավ հյուրասիրել չինական կանոններով պատրաստված փլավ: Եվ, ի զարմանս մեզ, պատառաքաղների կամ գդալների փոխարեն որպես սպասք մատուցեց չինական փայտիկներ: Ինչպե՞ս գործածել դրանք: Ի վերջո, մեր «հմտության» հետեւանքով ողջ փլավը հայտնվեց հատակին: Իսկ Գենսլերը շատ հանգիստ ասաց. «Իսկ այժմ մենք կզբաղվենք փլավը հատակից հավաքելով»:



Մենք, իհարկե, մասնակցում էինք ուսումնարանի համերգներին եւ ներկայացումներին, որտեղ մեր փորձավարները են եղել Նատալյա Դուդինսկայան եւ Կոնստանտին Սերգեեւը: Մի խոսքով, Լենինգրադում անցկացրած այդ մեր տարին մինչեւ հիմա հիշում եմ որպես հրաշք»:

Լենինգրադից վերադառնալուց հետո Մարինա Գյուրջյանը անմիջապես դարձավ մեր թատրոնի մենապարուհի: Հենց այդ ժամանակ մեր հանրահայտ պարող եւ այդ ժամանակվա գլխավոր բալետմայստեր Վիլեն Գալստյանը բեմադրում էր Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետը, որը, ինչպես գիտենք, մինչեւ օրս չի իջնում մեր բեմահարթակից: Մարինան անմիջապես ստացավ Նունեի դերը:



«Ուզում եմ պատմել հակիրճ մի դրվագ «Գայանեի» նախապատրաստման հետ կապված: Երբ արդեն ավարտվում էր բեմադրական ընթացքը, Երեւան եկավ Արամ Խաչատրյանն ինքը եւ մասնակցեց փորձին: Նա ուշադրությամբ նայեց եւ ասաց. «Գիտե՞ս, Վիլեն, լավ է ստացվել»: Հետո մոտեցավ դաշնամուրին եւ սկսեց ինքը նվագակցել: Նա կատարեց երկու համար, մեկը կարծեմ «Փշատի ծառն» էր, իսկ մյուսը՝ «Սրերով պարը»: Դա մի խելագար պահ էր: Ինչպե՜ս էր նա ողջ մատներով խփում դաշնամուրին: Մենք ե՛ւ ոգեւորված էինք, ե՛ւ մնացել էինք ապշած: Հետո նա եկավ նաեւ առաջին ներկայացումներին, եւ մինչեւ օրս հիշում եմ՝ ինչպես էի լաց լինում, որ իմ Նունեի կատարման ընթացքում դահլիճում գտնվում է այնպիսի հանճար, ինչպիսին Արամ Խաչատրյանն է՝ այդ բալետի երաժշտության հեղինակը: Դա անմոռանալի հիշողություն է՝ շփում այդ մեծագույն կոմպոզիտորի հետ:

Սպենդիարյանի թատրոնում Մարինան պարեց 1973-ից մինչեւ մոտավորապես 90-ականների կեսը: Ինչպես եւ հիմա ընդունված է ու շատերն են ասում՝ դա մեր բալետի «ոսկեդարն» էր: Սա վերաբերում է թե՛ բալետային թատերախմբի կազմին, թե՛ տաղանդավոր եւ իր յուրօրինակ դեմքն ունեցող առաջատար պարող-պարուհիներին, թե՛ մեր խաղացանկին, որը տարեցտարի լրացվում էր դասական ու ժամանակակից հետաքրքրական բեմադրություններով: Մարինա Գյուրջյանին բախտ է վիճակվել աշխատել մեր եւ խորհրդային այլ հանրապետությունների, Մոսկվայի ու Լենինգրադի բալետմայստերների հետ: Ամեն մեկը յուրահատուկ էր իր ոճի մեջ ե՛ւ որպես բեմադրող, ե՛ւ որպես ստեղծագործող: Հայ բալետմայստերներից՝՝ Վիլեն Գալստյանի, Աշոտ Ասատուրյանի, Մաքսիմ Մարտիրոսյանի, իսկ եկածներից՝ այնպիսի մեծ եւ տաղանդավոր բեմադրողների, ինչպիսիք էին Նատալյա Դուդինսկայան, Գեորգի Ալեքսիձեն, Նատալյա Ռիժենկոն եւ, իհարկե, Լյուդմիլա Սախարովան, որի ղեկավարությամբ նա նախապատրաստեց Մաշայի դերը Չայկովսկու «Մարդուկ-Ջարդուկը» բալետում:

Մարինա Գյուրջյանը որպես պարուհի օժտված էր մեծ թռիչքով, լավ պտույտներով եւ ընդհանուր առումով՝ բարձր մակարդակի բալետային տեխնիկայով: Հանդես է եկել բազում բալետների գլխավոր դերերում՝ «Պախիտա», «Դոն Կիխոտ», «Գայանե», «Շոպենիանա», «Սատանայի ջրաղացը», «Մավրի Պավանան», եւ այլ բազմազան դերեր դասական եւ ժամանակակից բալետներում:

Անշուշտ, կատարման տեխնիկական որակը կարեւոր է, սակայն նա տպավորվել է իր ժամանակի հանդիսատեսի հիշության մեջ որպես «ուրույն» ոճի դասական պարուհի: Իսկապես, Մարինան այսպես կոչված «քնարական» ոճի պարուհի չէր: Իսկ ինչպես արձագանքել է ժամանակի մամուլը, նա կերտել է աչքի ընկնող, երբեմն՝ էքստրավագանտ, երբեմն՝ ճակատագրական հերոսուհիների, ինչպիսիք էին Էգինան՝ Խաչատրյանի «Սպարտակում» Վիլեն Գալստյանի բեմադրությամբ, Բարոնուհի Շտրալը՝ Խաչատրյան-Հովհաննիսյանի «Դիմակահանդեսում»՝ Ռիժենկոյի եւ Սմիրնով- Գոլովանովի բեմադրությամբ, չարաճճի Լիզան՝ Գերոլդի «Լիզա եւ Կոլեն»՝ Վինոգրադովի բեմադրությամբ, Ավազակուհին՝ Մանսուրյանի «Ձյունե թագուհին»՝ Գալստյանի բեմադրությամբ, եւ նույնիսկ «խարդախ» ու չար կերպարներ՝ Ուրշուլեն՝ Վյաչեսլավ Գանելինի «Սատանայի ջրաղացը» (Վ. Բրազդիլիսի բեմադրությամբ) եւ Լիկեյոն՝ Ռավելի «Դափնիս եւ Քլոյե» (Ասատուրյանի բեմադրությամբ) բալետներում: Ամեն դեպքում նա ձգտել է ճիշտ մարմնավորել բալետմայստերի մտահղացումը եւ միաժամանակ սեփական խորը ապրած երանգ տալ այս կամ այն հերոսուհուն:

Նա թատրոնը թողեց 1996 թ., այսինքն՝ առաջին բեմելից 22 տարի հետո: Դա ուշ չէ, գուցե մի քիչ շուտ, քան սովորաբար տեւում է պարուհու բեմական կյանքը: «Մի օր, 1996 թվականին մտա թատրոն ու հանկարծ միանգամից հստակ զգացի, որ այլեւս չեմ ուզում պարել: Մտա այն ժամանակ թատրոնի ղեկավարի պաշտոնը գրավող Տիգրան Լեւոնյանի մոտ եւ հայտնեցի նրան, որ դուրս եմ գալիս թատրոնից: Նա դեմ էր, սակայն ես պնդեցի»:

Դրանից հետո արդեն բազում տարիներ Մարինա Գյուրջյանը դասական պար էր դասավանդում մեր Պարարվեստի քոլեջում (մինչեւ 2010-ը՝ ընդմիջումներով), Նանե Թոփալյանի «Նանե» պարային խմբում եւ «Արինա Արարատյանի պարի թատրոն» համույթում: Երբեմն բեմադրում էր պարային համարներ:

«Վերջում կցանկանայի նշել,- ասաց Մարինան,- որ ես համարում եմ, որ կայացել եմ կյանքում, կայացել որպես պարուհի, իսկ դա շատ կարեւոր է: Քանի որ այժմ դեկտեմբեր ամիսն է, կցանկանայի բոլորին մաղթել ուրախ Ամանոր եւ Սուրբ Ծնունդ: Եղեք մարդամոտ, ակտիվ մասնակցեք կյանքի իրադարձություններին, ուշադիր եղեք ձեր մտերիմների նկատմամբ, շրջապատեք ձեզ լավ ընկերներով: Մի խոսքով՝ ապրեք լի կյանքով: Եվ սլացեք մի՛շտ առաջ, մի՛շտ առաջ... Խոստանում եմ՝ մենք հաղթանակով դուրս կգանք»:

Ահա այդպիսին էր Մարինա Գյուրջյանը՝ ուրույն ոճի պարուհի եւ մարդ, մարդամոտ, հյուրընկալ, ակտիվ, ուշադիր մտերիմների, ընկերների, հարեւանների հանդեպ, միշտ շրջապատված մարդկանցով, որը մինչեւ կյանքի վերջին օրը ձգտում էր ապրել լիակատար կյանքով ու դիմադրելով անողորմ հիվանդությանը...

Աստված հոգին լուսավորի...